Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Lum
616

~~N 25.~~ N 2815 m

2009
№ 5
168

Լաց
616
us
28 JUN 2005

ԴԱՍԱԳԻՐՔ
ԸՆԴՀԱՆՈՒՐ
ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ԳԷՈՐԳ ԱԲԵՂԱՅԻ ՍՈՒՐԲԵՆԱՆՑ

1010
41416
N 285 ус
N 297 а

հատոր առաջին

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
ՀԻՆ ԴԱՐՈՒՑ

1532.

Ի Վ. ԱՂԱՐՇԱՊԱՏ
Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

ՌՅԻՍ – 1871

УЧЕБНАЯ БИБЛИОТЕКА
ЛАЗАРЕВСКАГО ИНСТИТУТА
ВОСТОЧНЫХЪ ЯЗЫКОВЪ.

ՀՐԱՄԱՆԵՐ

Տ. Տ. ԳԷՈՐԳԵԱՆ Գ.

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Հայաստանի Ազգային գրադարան
ԳՐԱԴԱՐԱՆ
Հ4 615
816-2009

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ

Տ. Տ. ԳԷՈՐԳԵԱՑ Դ.

ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԵՒ ԱԶԳԱՍԷՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ.

ՎԵՀԱՓԱՌ ՏԷՐ

Ի գահակալել Ձերդ Աստուածընտիր Օծութեան յԱթոռ Հայրապետական ամենայն Հայոց, ես առաջին եղէ որ վայելեցի ի շնորհս գթութեան Ձերոյ ի մասինն, յոր ըղձիւք զիմեալ էի առ գթութիւն Ձեր։ Արդ այս Հայրական սէր Ձեր զոր ցուցիք ինձ աննման բարերարութեամբ, և պատուեցիք զանձն իմ առաւել քան զիմս արժանաւորութիւն, յօրէ անտի ցայսօր տագնապէր զիս՝ թէ որո՞վ իւիք մարթ իցէ երախտագէտ սրտի իմոյ զշնորհապարտութեանս ցուցանել զՀաւաստիս։

Բարեբաղդ գտայ զի զընդհանրական պատմութիւն գերահրաշակ պատմաբանիս Ռուսաց Իլովայսկեայ, որ իւրով վսեմական հանճարովն երևելի է ի կարգս արդի իմաստանոց, կարացի ի ձեռս բերել, և որ սակս ամենակարևոր օգտակարութեանն մանկտւոյն Ռուսիոյ՝ ետես վեցիցս տպագրութեամբ զլոյս. զնոյն և ի պէտս Հայաստանեայցս մանկտւոյ ձեռն արկի թարգմանել, յաւելլով զկարևոր և զերևելի ժամանակակից անցս մերս

Ազգ. պատմութեան, և նուիրել անուան Վեհիդ՝ Աստուածաբեալ Տէր, որպէս զի Հայկազն մանկտին, որք ի շնորհս Ձեր վերձեմեն ի կատար գրականութեան, պանծասցին և այսու յանուն Ձեր՝ զընդհանուր ազգաց և սովորութեանց և վիպից առեալ զճաշակ։

Ընկալարո՛ւք ուրեմն զայս նուէր զոր յերախտապարտ սրտէ ընծայեմ Անուան Ձերում իբրև զերեխայրիս իմոց դոյզն վաստակոց, և առաջին փոխարինութիւն բարեաց ի Ձէնջ առ իս առատաձեռնելոց։

ԱՍՏՈՒԱԾԱՐԵԱԼ ՓԱՀԱՆԱՑԱՊԵՏԻԴ

պամենախոնարհ ծառայ

ԳԷՈՐԳ ԱՐԵՂԱՑ ՍՈՒՐԻՆԵԱՆՑ.

Ի 23 Մայիսի, 1871.

Ի ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՀԻՆ ԴԱՐՈՒՑ

ՆԱԽԱԳԻՏԵԼԻՔ

Պատմութիւնը այնպիսի արհեստ է, որ մեզ կը-նկարագրէ մարդկային ազգի անցեալ կեանքը, և կը-սովորեցնէ թէ մարդկութիւնը իւր ներկայ վիճակին ինչպէս հասաւ։

Մարդկային ազգը ի հնումն բաժանուեց զանա-զան ցեղեր և ազգեր։ Գլխաւոր ցեղերը երեք են։ Կովկասեան կամ սպիտակ, Մողոլեան կամ դեղին, և Խափշիկ կամ սեաւ։ Նոքա միմեանցից կզանազան-ուին մորթոյ գունով և անդամոց կազմութեամբ։ Մողոլաց ցեղին աչքերը նեղ են, երեսը տափարակ. խափշիկներն են գանգրահեր, ծնօտները դուրս ըն-կած մեծ պռօշներով։ Բաց յայնմանէ այս երեք ցե-ղերը տեսակ տեսակ լեզուներով կխօսին։ Կովկա-սեան ցեղերը բնակուեցան Եւրոպա և հարաւային արևմտեան Ասիա, Մողոլները միջին և արևելեան

Ասիայում (Զինացիք և Ճապոնք էլ այս ցեղերն են), իսկ խափշեկները բնակեցան Եփրիկէ։

Ընհասարակ պատմութիւնը Կովկասեան ցեղին վերայ կխօսի, վասնզի այն ցեղը կբնակէր և կբնակի կարգաւորեալ հասարակութիւն կամ թագաւորութիւն կազմած, և նոքա նրանով կարողացան շուտով կրթուել քաղաքականութեան և ուսման մէջ։

Կովկասեան ազգերը թողին անթիւ աղբիւրներ, որով կարելի է նոցա պատմութիւնը գրել։ Պատմական աղբիւրները երկու տեսակ են. գրաւոր և անգիր։ Անգիրն այն են՝ շինութիւնք, արձանք, պատկերք, դրամներ, պատերազմական գործիքներ, տնական անօթներ, հանդերձներ, և այլն, նոյնպէս հին հին առասպելներ և ժողովրդական երգեր։ Գրաւոր աղբիւրներն են, նախ՝ ժամանակագրութիւնք, օրագրութիւնք և նամականիք. երկրորդ՝ արքունական օրէնքներ, դաշնագրութիւնք և դատաստանական գործեր, երրորդ՝ բանաստեղծութիւնք և շարադրութիւնք զանազան արհեստից վերայ։

Պատմութեան գլխաւոր օժանդակք են՝ աշխարհագրութիւն և ժամանակագրութիւն։ Աշխարհագրութիւնը մեզ ցոյց կտայ թէ ուր կբնակէր և ուր կբնակի որ և իցէ ազգ, և միևնոյն ժամանակ այն երկրի օդոյն և հողոյն յատկութիւնը, յորմէ կախումն ունի այն տեղ բնակող ժողովրդեան բնութիւնը և կենցաղավարութիւնը, իսկ ժամանակագրութիւնը ցոյց կտայ թէ որ և իցէ անցք երբ է պատահել։ Ցաբին էլ մէկ երևելի անցից սկսած կհաշուեն և կկոչ-

ուի տարեթիւ։ Քրիստոնէից տարեթիւը կսկսի ի Ծննդեանէն Քրիստոսի, Հրէից ի ստեղծմանէ աշխարհի, Յունացը Ողիմպիական խաղերից, Հռովմայեցւոցը Հռովմ քաղաքի հիմնարկութենից։

Պատմութեան հարկաւոր օժանդակն է նոյնպէս ա). հնախօսութիւնը, որ կբացատրէ մնացած երևելի հնութիւնները, հին հին յիշատակարաններ, և բ). հին և նոր գրականութիւնը, որ ցոյց կտայ լեզուաց նմանութիւնը և նոցա ծագումն։

Կովկասեան ցեղը լեզուաւ երկու մասն կբաժանուի, Հնդկա—Եւրոպական և Սեմական. առաջինքն են՝ Հնդիկք, Պարսիկք, Հայք, Յոյնք, Հռովմայեցիք, Կելտք, Գերմանացիք, Սլաւեանք. իսկ Սեմայ որդիքն են Փիւնիկեցիք, Հրէայք և Արաբացիք։

Տիեզերական պատմութիւնը երեք մասն կբաժանուի. Ա. հին դարուց պատմութիւն, այն է թագաւորութեանց սկիզբէն մինչև Հռովմայեցւոց արևմտեան կայսերութեան անկումն, մինչև 476 թիւը։

Միջին դար. սա իւր մէջ կպարունակէ 10 դարուց պատմութիւն, այսինքն Հռովմայեցւոց արևմտեան կայսերութեան անկմանէն մինչև Ամերիկայ գտնուիլը (1492թ.). և նոր դարուց պատմութիւն. մինչև մեր ժամանակը։

ՀԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Ռանանացւոց երկրին հարաւային կողմերը Հրէաները կընակէին, իսկ հիւսիսային կողմը Փիւնիկեցիք այս Փիւնիկեցւոց բնակած տեղը քարոտ և աւազոտ լինելով չէին կարող բարւոք կեանք վարել, Լիբանանու անտառը իրենց մօտ լինելով սկսեցին այն ծառերէն շինել նաւակներ, և նորանցով գնալ իրենց մերձակայ երկիրները առևտուր անելոյ աղագաւ, և հետ զհետէ սկսան գնալ հեռու երկիրներ, այն տեղերից կբերէին այլևայլ բաներ զորօրինակ Հայաստանից կտանէին լաւ լաւ ձիաններ, Սպանիայից արծաթ, Արաբիայից ապրիշում և կնդրուկ, Պալթիկ ծովից սաթ (որ է ѣահրա-պաբ), Բրիտանիա կղզիներից արճիճ, Բաբիլոնից գինի, և Կիպրոս կղզիից պղինձ։

Սոքա հնարեցին նաև այլևայլ գիւտեր։ Մէկ օր հովուին մէկը տեսաւ որ շան դունչը արիւնոտ է,

սկսեց լուանալ. և տեսաւ որ բնաւ վերայ տեղ չկայ միւս օրը շան ետևից գնալով տեսաւ որ շան բերնի տուած տեղը մանր որդեր կան, սրանով գտաւ ծիրանեղոյն ներկը։ Դարձեալ, մէկ օր սրանցից մի քանի նաւավարներ կերակուր կեփէին մէկ աւազոտ տեղ, և քարի տեղ ծծումբ (փոսֆորդ) էին դրել. վերջանալուց զկնի երբ սկսեցին գնալ, տեսան որ մէկ բան այն տեղ կփայլի, յետ դառան, և գտան պատրաստ [ապակի։ Հնարեցին նաև թուաբանութեան արուեստը։ Հովվերերեայ քաղաքներ շինեցին, որոց գլխաւորն էին Տիւրոս և Սիդոն. Տիւրոս քաղաքը պաշարեց Նաբուքոդոնոսորը այն տեղից բնակիչք գնացին մերձակայ կղզոյն վերայ շինեցին նոր Տիւրոս, և զսա պաշարեց մեծն Աղէքսանդր Մակեդոնացին 332 թուին Քրիստոսէ առաջ։ Մեր Տիդրան Ա Ասորւոց աշխարհն անցնելով՝ գնաց Փիւնիկէ, Տիւրացիք Հայերից ստանում էին լաւ տեսակ ջորի, ձիաններ և Հայաստանի զանազան բերքեր. և նոցա փոխարէն տալիս էին, ոսկի, արծաթ, պատուական քարեր և տեսակ տեսակ գործուածներ։ Պիգմալիոն թագաւորի քոյրը Դիդէ բաժանուելով իւր եղբօրից՝ գնաց Հիւսիսային Աֆրիկէ, այն Փիւնիկեցի կինը խորամանկութեամբ մէկ եղան կաշւոյ չափ տեղ խնդրելով, նա այն եղան կաշին բարակ թելի պէս կարտեց, յետոյ թելերը իրարու հետ կապելով սահմանը որոշեց. նորա անունով անուանեցաւ այն քաղաքը Կարթագինէ, և շատ յառաջացաւ։ Սպանիոյ մէջ առին ևս մէկ քանի քաղաք,

յետոյ կամեցան Սիկիլիա կղզին նուաճել. բայց նոքա սկսան յառաջուց պատերազմել Սիրակուսա քաղաքին հետ։ Սոքա ունէին թագաւորներ, յետոյ կարգեցին ծերակոյտ. և եթէ երևելի գործ պատահէր Ազգային ժողովը կվճռէր։ Ունէին իրանցից ապստամբ թշնամիք, որոնք իւրեանց զօրքերն էին, և սոքա շատ անգամ իւրեանց դէմ կպատերազմէին, բայց Աննիբաղայ հայրը Ամիլկար Բարկաս յաղթեց ապստամբ թշնամեաց։ Արեգակին Մողոք և լուսնին Աստարտէ անուանելով, Աստուծոյ տեղ կպաշտէին։ Մողոքը ունէր մարդոյ կերպարանք և նորան զոհ մատուցանելու ժամանակ իւրեանց երեխայից տալիս էին նորա գիրկը, իբր թէ զոհ են մատուցանում.

ԲԱԲԻԼՈՆ ԵՒ ԱՍՈՐԻՔ

Այն երկիրը որ գտնվում է Տիգրիս և Եփրատ գետերի մէջ, կոչվում է Միջագետք։ Միջագետաց հիւսիսային մասը դէպ ի Հայաստան առաւել բարձրը է, բայց հարաւային Միջագետքը աւելի ցած է։ Այն ցած տեղում բնակվում էին Բաբելացիք, որ այս անունը ստացան իւրեանց Բաբիլոն մայրաքաղաքից։ Երբ որ Հայաստանի լեռներուն ձիւնները հալվում էին, Եփրատ և Տիգրիս գետերը մեծանում էին, և շատ օգուտ էին տալիս Բաբիլոնին և շրջակայիցը. վասնզի երկիրը առաւել պտղաբեր էր լինում։ Բաբիլոնից դէպ ի հիւսիս Տիգրիս գետի ձախ եզերքին վերայ Ասորեստան երկիրն էր գտնվում,

որի մայրաքաղաքն էր Նինուէ, և հիմնողն էր Նինոս թագաւորը, որ վերջը յաղթութեամբ առաւ Բաբիլոնը, և յաղթեց այն ժողովուրդներին՝ որոնք գտնվում էին Բաբիլոնից դէպի արևելք, այսինքն Մարաց կամ Մեդացւոց և Բակտրիացւոց:

Ընհասարակ լի էր առասպելներով Բաբելացւոց և Ասորեստանեայց պատմութիւնը, Շամիրամայ վերայ կպատմեն թէ Շամիրամը չաստուածուհւոյ դուստր է եղած՝ և արտաքսուած իւր մօրից, և նորան կերակրել էին վայրենի աղաւնիք: Շամիրամը մէկ զօրապետի կին էր, բայց նորա գեղեցկութիւնը և հանճարը շատ հաւանական թուեցաւ Նինոս թագաւորին. վասնորոյ և ամուսնացաւ նորա հետ: Յետոյ Շամիրամ սպանեց իւր մարդուն, նստաւ թագաւորական գահը, ու սկսեց կառավարել օրինաւոր կերպիւ իւր ժողովրդոց. և նորանոր յաղթութիւններ արաւ. բայց երբ շատ ծերացաւ, թագաւորութիւնը յանձնեց իւր որդւոյն Նինուասին: Նորա մահը այսպէս կպատմեն որ իբր թէ աղաւնի դարձաւ, և թռաւ երկինք, սա այն Շամիրամն էր որ լսելով մեր Երա Նահապետի գեղեցկութիւնը, կամենում էր նորա հետ ամուսնանալ. բայց երբ Երա գեղեցիկը կամք չտուաւ, Շամիրամ պատերազմի ելաւ. հանդիպեցան Երարատեան աշխարհում Երասխ գետին հարաւային կողմը, և այն պատերազմում Երան սպանուեցաւ, Շամիրամ հմուտ լինելով կախարդութեան արհեստին՝ կամենում էր դիւթութեամբ կենդանացնել Երային, բայց չկա-

ղողացաւ իւր բաղձանացը հասնել. երրորդ օրը հրամայեց որ թաղեն նորան։ Շամիրամ տեսնելով Հայաստանի ականակիտ աղբիւրները և օդոյն բարեխառնութիւնը, Ռզնունեաց ծովին արևելեան ափումը շինում է Շամիրամակերտ քաղաքը, ամառը այն տեղ անցուցանելու համար։ Այն քաղաքը Վան թագաւորը նորոգելով՝ իւր անուամբը կոչեց Վան։

Այն ժողովուրդները՝ որ Ասորեստանեայց Իշխանութեան ներքոյ էին՝ աշխատում էին ազատուիլ վասն զի Շամիրամին շատ թոյլ թագաւորներ յաջորդեցին, և Ասորեստանը թուլացաւ իւր զօրութիւնից։ Վերջապէս Բաբելացիք և Մարք ապստամբեցան։ Մարաց Կեաքսար թագաւորի հետ միացաւ մեր Պարոյր նահապետը Սարդանաբաղն դէմ, խոստումն առնելով որ մեր աշխարհի վերայ թագաւորէ և այս կերպով Հինուէի թագաւորութիւնը կործանելուց զկնի, Հայաստանը անկախ թագաւորութիւն դարձաւ, և առաջին պսակաւոր թագաւորն եղաւ Պարոյրը։ Սորա յաջորդներից երևելին էր Հայկակ Ռ. որ Նաբուքոդոնոսորի հետ 590 թուին գնաց Հրկաստան, և այն տեղից գերիներ բերեց Հայաստան, որոց միջին էր Շամբատ անուն Հրէայն, յորմէ սերեցան Ռաղրատունիք, և Վաղարշակայ Ռագարատ Իշխանը, որ Երշակունեաց թագաւորների թագաւորն էր։

Սարդանաբաղ թագաւորը շատ թոյլ էր և շռայլ։ Կպատմեն թէ երբ որ նորա աթոռանիստ մայրաքաղաքը պաշարած էին թշնամիք նա հրամայեց որ

կրակ վառեն. բոլոր արծաթները մէջն ածին և այրեն և ինքն էլ իւր կանանց հետ անկաւ կրակին մէջ և այրուեցաւ։ Բայց ոմանք ևս կպատմեն թէ նա քաջութեամբ ընդդիմացաւ թշնամեաց մինչև իւր կենաց վերջին րոպէն. իսկ թշնամիքը բոլորովին քանդեցին Նինուէ քաղաքը Օ. դարուն մէջ նախ քան զԲրիստոսի ծնունդը։

Երբ որ Ասորեստանեայց Նինուէ մայրաքաղաքը քանդուեցաւ, Բաբիլոն քաղաքը բարձրացաւ, մանաւանդ Նաբուքոդոնոսոր թագաւորի ժամանակը։ Նաբուքոդոնոսոր բաց ի յաղթութիւններից դարձեալ օգուտ տուաւ Բաբիլոնին իւր շինութիւններով. զարդարեց Բաբիլոն քաղաքը, քառանկիւնի էր, և ամէն կողմը ունէր 20. վերստ երկայնութիւն, չորս կողմը ահագին պարիսպներ, որոց վերայ կարող էին անցկենալ 16 ձիաւոր մարդ և 6. կառք՝ մի կարգաւ, պարսպի վերայ շինած էին նաև շատ աշտարակներ, և պարսպին մէջ կային երկաթեայ դրռներ, քաղաքին չորս կողմը խրամ էր փորած. քաղաքին մէջից Եփրատ գետը կանցնէր. մէկ եզերքին մօտ շինուած էր Բէլ Աստուծոյ Տաճարը, և բարձր աշտարակ էր, միւս եզերքին մօտ թագաւորական Պալատը իւր այգիներով։ Այն այգիները շինուած էին Նաբուքոդոնոսորի կնոջ Նիկոտրիսի համար որ Մարաց ազգէն էր։

Բաբելացւոց կրօնը նման էր Փիւնիկեցւոց կրօնին. նորանց գլխաւոր աստուածն էր Բահաղ կամ Բէլ և գլխաւոր աստուածուհին Մելիտէ որոց քուր-

մերը բարձր աշտարակներից նայում էին աստղերի վերայ, և խաբում էին ժողովրդեանը. իբր թէ սպագային կարողանում են գուշակել։

Երկրագործութիւնը և վաճառականութիւնը մինչև վերջին աստիճանը ծաղկած էր, վաճառականութիւնը այն պատճառաւ յառաջ գնաց որ Բաբիլոնը գտնվում էր Հնդկաստանի և Փիւնիկէի ճանապարհի վերայ, և Բաբիլոն քաղաքն էր նոցա ապրանք պահելոյ տեղը։ Երևելի գործարաններ ունէին Բաբելացիք, բամբակի, և բրդի։ Բաբիլոնի մէջ պատրաստում էին նաև լաւ կապերտներ որ հռչակաւոր էին բոլոր արևելքում։ Այն ժամանակ ոչ մի ժողովուրդ այնպիսի շուայլ կեանք չէր վարում՝ ինչպէս Բաբելացիք. մաղերի վերայ զանազան անուշահոտ իւղեր կածէին, կարմիր կամ ծիրանի հանդերձ կըհագնէին և բազմակին էին, ինչպէս շատ արևելեան ազգաց սովորութիւնն էր։ Այսոնի բան է որ այնպիսի կեանք կվարէին միայն հարուստները, իսկ ստորին կարգը մեծ նեղութեան մէջ էր, այնպէս որ և ոչ գեղեցիկ կին կարող էին ունենալ։

Որա պատճառն այն էր՝ որ Բաբելացիք սովորութիւն ունէին տարին միանգամ աղջիկներ կվաճառէին. և գեղեցիկ աղջիկները կառնէին միայն հարուստ կարգի եղած մարդիկները, իսկ տգեղները կըմնային աղքատ մարդկանց համար, Բաբելաքալանոսորից յետոյ թագաւորները ձեռն. մուխ եղան աւելի ևս շուայլ կեանք վարելու, և այն պատճառ եղաւ նոցա անկմանը, որով չկարողացան ընդդիմանալ

Պարսից Կիւրոս թագաւորին, որ յաղթութեամբ
8 առաւ Բաբիլոն քաղաքը 538 թուին նախ քան զՔրիստոս:

ՀՆԴԿԱՍՏԱՆ:

Այն երկիրը, որ է Ինդոս գետի, Հիմալայեան լեռներին և Բենգալեայի ծոցին մէջ, կոչվում է Հնդկաստան: Բնակիչքը Հնդիկք էին, որ առաջ բնակվում էին Ինդոս գետի և նորա չորս ակունքի մօտ, և այն տեղի անունն էր Փէնճապ. յետոյ գնացին փոքր ինչ հարաւ, և բնակվեցան Գանգէս գետի դաշտերում: Հնդկաց բնակված երկիրը մի քանի մաս ևս բաժանուեցաւ, և ամենայն մասը ունէր առանձին թագաւոր կամ Ռաճա: Նորանից առաւել հզօր թագաւորութիւն էր Գանգէս գետի մէջտեղը, որի մայրաքաղաքն էր Պալիմբրա:

Հնդիկները չորս կարգ էին բաժանուած, որ չէին կարող իրեարից մէջ հաղորդակցութիւն ունենալ: Գլխաւորն էր քուրմերի կամ Բրամինաց կարգը, Երկրորդը զինուորականաց, Երրորդը արհեստաւորաց և վերջինը սարկաց: Առաջին երեք կարգը ունէին աւելի իրաւունք, և նոքա արիական ցեղից էին որ առաջուց յաղթութեամբ առան Հնդկաց երկիրը, իսկ քուն Հնդիկք կոչվում էին Սուդրէ, այսինքն սարին կարգ: Հնդկաստանի մէջ կար դարձեալ մի ցեղ՝ պարիա նոցա Հնդկացիք այնպէս կատէին որ նոքա իրաւունք անգամ չունէին քաղաքի մէջ բնակ-

ուելու, և եթէ Հնդիկք մի նոցա պատահէր՝ մեծ անրախտութիւն էր։ Նոցա մէջ մեծ պատիւ ունէին Բրամիններին, այսինքն քուրմերը, որ մեծաւ խստութեամբ պահպանում էին այս կարգերը։ Հնդիկները կարծում էին թէ նոցա քուրմերը դուրս են եկած Բրամա Աստուծուց, որ նոցա գլխաւոր Աստուածն էր։ Քուրմերը նոցա պատմում էին թէ նոքա դուրս են եկած Բրահմայի գլխից. զինուորականքը նորա ձեռներից, արհեստականքը նորա ազդրից. իսկ սուարիք կամ ստրուկները նորա ոտներից։ Նոքա ունէին երեք գլխաւոր Աստուած, ա. էր Բրահմա, աշխարհի արարիչը, որոյ արձանը ունէր չորս գլուխ և չորս ձեռք որ քաջութեան, նշան էր. բ. Աստուածն էր, վիշնու, բարերար, հաստատուած և Աստուած պաշարերութեան։ Հնդիկք հաստատում են իրր թէ երբ մեռնում է Վիշնու Աստուածը երկրի վերայ մարդաձև, և ինչպէս մարդ՝ բարերարութիւն է գործում մարդոց։ Մինչև մեր ժամանակը մեռացած են երկու մեծ և երևելի Հնդկաց վիպասանութիւնք, Մահապհարաթա և Ռամայանա, որոց մէջ Վիշնուի յաղթիւնները գրուած են։ Երրորդ Աստուածն էր Սիվա։ Սա էր չար և սարսափելի, ամենայն բան քանդող, նորա արձանը երեք աչք ունէր, և նորա վերայ կախ ընկած էր շղթայ՝ մարդկային դագաթներից։ Հնդիկք ունէին երկրորդ կարգ Աստուածոց, պաշտում էի նմանապէս զանազան կենդանիք։ Ասում էին թէ երբ որ մարդս մեռնում է, նորա հոգին շատ ժամանակ մնում է ծառերի մէջ,

երրեմն կենդանեաց մէջ, մինչև մեղքերից ազատվում է. վերջը նա միաւորվում է Աբրահամայի հետ։ Նոցա սուրբ գրեանքը ասվում էին Վ. Էտա, որոց մէջ գրած կային զանազան աղօթքներ և բարոյական խրատներ։

Հինգ կամ վեց դար նախ քան զՔրիստոս Հնդկաստանի մէջ յայտնի եղաւ մէկ իմաստուն, որի անունն էր Պուտտա. նա էր մէկ թագաւորի որդի, և պատրաստվում էր յաջորդել իւր հօրը. բայց յանկարծ թողեց իւր պալատները, հանեց թագաւորական հանդերձը ու սկսեց ողորմութիւնով ապրել։ Գնաց անապատ որ տեղ կային՝ և ուրիշ քուրմեր, նոցանից այն տեղ սովորեց իմաստութիւն. մի քանի տարի կեանք վարեց՝ միշտ մտածելով և միշտ պահք կպահէր, յետոյ սկսեց ժողովրդեան քարոզել ողորմութիւն, համբերութիւն, մարդկանց մէջ հաւասարութիւն փոխադարձ սէր և այլն։ Նա գտաւ իրեն շատ հետևողներ և շատ աշակերտներ, և նորա ուսմունքը տարածուեց բոլոր Հնդկաստանումը, բայց Պուտտայի ուսմունքը շատ վնաս էր կարգի բաժանման, այն պատճառաւ քուրմերը սկսեցին ընդդիմանալ Պուտտայի աշակերտաց, և շարունակուեցաւ տարատիկի պատերազմ մինչև որ Պուտտայի աշակերտներին դուրս արին Հնդկաստանից. նոքա գնացին ուրիշ երկիրներ և սկսեցին տարածել նոր ուսմունքը Թիպէթում և Չինաստանում։ Հնդկաց յիշատակարաններից երևելիքն են նոցա տաճարները նոցանից մի քանիսը լերանց մէջ են փորուած։ Աբ-

բեռն Ընդիկք լերան մէջ փորում էին ահագին ոք-
ներ։

Նոցա տաճարը կոչւում էր փակոտ։

Այժմ Ընդկաստանի մեծ մասը Անգղիացւոց իշ-
խանութեան ներքոյ է։

ՉԻՆԱՍՏԱՆ

Չինացիք հին ժամանակից իւրեանց համար կազ-
մեցին հզօր թագաւորութիւն, և բաւական ուսում-
նական ժողովուրդ էին։ Ասում էին իբր թէ դոքա
3000. տարի նախ քան զՔրիստոս՝ առաջ եկան
արևմտեան լեռներից և բնակուեցան Հօանհօ և
Յանցսէկեան գետերի դաշտում կամ դեղին և կա-
պուտ գետերի մօտ։ Երբ որ եկան այն նոր երկիրը
բնակուելու, սկսեցին կոտորել վայրենի կենդանիք՝
որոնք շատ վնաս էին տալիս։ Չինաստանի ժողովուր-
դը ամենևին հաղորդակցութիւն չունէր ուրիշ ազ-
գերի հետ. վասն զի ամենայն բան ունէին իրենք. և
մինչև այս նոր ժամանակները արտաքին վաճառա-
կանութիւն չունէին։ Նոցա իրենց երկրիցը չհեռա-
նալոյ պատճառն էր ինքը բնութիւնը. Չինաստանի
բոլոր չորս կողմը պատած է լեռներով, մեկ կողմն էլ
Ովկիանոսը։

Չինացիք հիւսիսային կողմը շինեցին պարիսպ,
որոյ երկայնութիւնն էր 300 մղոն, որ նոցա վերայ
չ՝յարձակուեն թափառական Մողոլները. բայց այն
պարիսպը նորանց ոչինչ օգնութիւն չտուաւ։ Ի դա-

բում Զենկեզխանը առաւ Զինաստանը, և Դ-Ի դարում էլ Մանջուրները, և այժմեան Թագաւորը Մանջուրներից է։ Նոցա գլխաւոր Աստուած էր երկինքը։ Նոցա կայսրը կամ Պողոխանը կոչվում էր երկնքի որդի և Հայր Զինաց։ Զինացիք պատվում էին իւրեանց Թագաւորին ինչպէս Աստուած։ Պողոխանը ունէր աստիճանաւորներ ինը կարգ որոնք անուանվում էին մանտարին։ Այս մանտարինները բաւական ուսեալ մարդիկ էին, և բարձր աստիճան ստանալու համար հարցաքննութիւն էին տալիս։ Նոցա ուսումն էր միայն Կոնֆուկիոսի օրէնքները։ Կոնֆուկիոսն էր Զինաց իմաստունը, հինգերորդ դարում նախ քան զԲրիստոս, և նա գրեց Զինաց օրէնքները և հանդէսները, Զինաց հանդէսները թուով 10,000 էին։ Զինացիք իւրեանց ուսմամբ մինչև այն աստիճան հպարտանում էին, որ երկնք իրենց առաջին ազգ էին համարում, աշխարհիս ուրիշ ազգաց վերայ արհամարհանք էին նայում, և նոցա կոչում էին բարբարոս։ Զինացիք Եւրոպացիներից առաջ գտան կողմնացոյց, վառօդ և տպագրութիւնը, բայց չկարողացան կատարելագործել։ Նոցա քուրմերը կոչւում էին պոնց։

ԵԳԻՊՏՈՍ

Արևելեան հիւսիսային Աֆրիկէի մէջ Արաբիոյ ծովածոցին մօտ է Եգիպտոս. որ մի երկար ու նեղ հովիտ է, որի մէջտեղը Նեղոս գետը կ'ոռոգէ։ Այս

գետը ամէն տարի Եթովպիոյ՝ այսինքն Հաբէշի լեռ-
ների ձիւնները հալելու միջոցին, և սահմանեալ ժա-
մանակի անձրևների յորդութիւնից Եթովպիայում
մեծանալով դուրս է գալիս իւր ափերից և ծածկում է
երեք ամիս ողջ երկիրը մինչև Արաբիոյ լեռները։
Երբ ջուրը յետ է քաշվում, երկիրը ոչ թէ միայն
ոռոգուած է լինում, այլև բերրի աղմով պարար-
տացած. ուստի և վերջին աստիճանի պտղաբեր։ Այս
պատճառով հին ժամանակներում էլ երկրագոր-
ծութիւնը Եգիպտացիների գլխաւոր պարապմուն-
քըն էր։ Բայց մեծաւոր լուսաւորութիւն էլ անծա-
նօթ չէր նոցանից, որովհետև նոքա երկրաչափական
և աստղաբաշխական գիտութեան էլ տեղեկութիւն
ունէին, հնարեցին սրբագրոշմ կամ մեհենական
կոչուած նշանագիրներ (Հիրոգլիֆներ)։ Ձեռագործի
մէջ էլ խիստ հմուտ էին Եգիպտացիները, պատ-
րաստում էին ճարտարարուեստ ձեռագործներ, պա-
պիրի տերևներից թուղթ, ունէին երաժշտական և
երկրագործական գործիքներ։ Մանաւանդ կատարե-
լագործեցին նոքա նկարչութիւն, արձանագրութեան
և ճարտարապետութեան արհեստները. մասամբ
մինչև ցայժմ պահպանուած նոցա ճարտարապետա-
կան վեհխարի շինուածքները զարմացման արժանի
են։ Սոքա են Թեբէի աւերակները, տաճարները, ար-
քունի շերիմները, Մեմոնի արձանը, Սֆինքսեր
Կոթողներ և Բուրգեր։ Սոքա՝ ինչպէս Հնդիկները՝
բաժանվում էին զանազան կարգեր, որոնք այնպէս
զանազանուած էին մէկ մէկից, որ ոչ ոք մէկից միւս

կարգը մնալ չէր կարող. ինչ որ հայրն էր, նոյնը որդին պարտական էր լինել: Այսպիսի կարգերը վեց էին. կարգ քուրմերի, զինուորների, վաճառականների, հողագործների, նաւաստիների (միայն Նեղոսի վերայ) և հովիւների: Քուրմերն էին իսկապէս երկրի տէրերը, սոքա միայն գիտէին գիտութիւնների, արուեստների գաղտնիքը. մինչ օրէնքներ անգամ հրատարակում թագաւորներին, որոնք զինուորների կարգից էին ընտրվում:

Նոցա գլխաւոր Աստուածներն էին արեգակը և լուսինը, որոց նոքա Ոսիրիս և Իսիս էին կոչում. բաց ի սոցանից պաշտում էին Եգիպտացիները կենդանիներ էլ. ինչպէս մի հաղուագիւտ բծաւոր եզը, որ Ապիս էր անուանվում, կոնկանման քաջահաւ կամ Իբիս թռչունը, շներ, և այլն:

Հաւատում էին հոգեփոխութեան էլ, այսինքն թէ մարդկային հոգին մարդոյ մահից զինի մտնում է կենդանւոյ մէջ, և 3,000 տարուց յետոյ կրկին վերադառնում է մարդոյ մարմնոյ մէջ: Այս պատճառաւ հնարեցին մարմին զմռսելոյ արհեստը:

Եգիպտոսից դէպի հարաւ Եթովպիայում էր Մերովէ թագաւորութիւնը, ուր փոքր ձևով դտնվում են այն երևոյթների հետքը, որոնք Եգիպտոսը այդպէս երևելի արին. ուստի և ոմանք կարծում են մինչև ցայժմ՝ որ Եգիպտացւոց սկիզբն այն տեղ է եղել, և այն տեղից եկել են Եգիպտոս, բայց նորագոյն փորձերը ցոյց տուին, որ Մերովէի լուսաւորութիւնը երբէք այն աստիճանին չէր հասած, ինչ որ

Եգիպտոսում էր, և թէ այն տեղ նրանից ուշ է ըսկսել լուսաւորութիւնը։ Եգիպտոսը բաղկացած էր սկզբում զանազան թագաւորներից։ Ամենից առաջ ծաղկեցաւ Թեբէն վերին Եգիպտոսում, յետոյ Մեմփիս եղաւ գլխաւոր տէրութիւնը. և վերջապէս, Դելտայում, ստորին Եգիպտոսում։ Առաջին թագաւորը՝ որ Մեմփիս քաղաքը շինեց՝ Մենէս էր անուանվում, և պէտք է որ 2000-ից առաջ թագաւորած լինի։ Յետագայ դարերում պատահեցաւ Յակոբայ ընտանեաց Եգիպտոս չուելը։

Բայց երբ մօտ 1700 ին տիրեցին Եգիպտոսի Հովիւ թագաւորները (Հիւքսոս) սկսան չարչարել Իսրայէլացւոց, և այդ նեղութիւնը տալով պատճառ եղան նոցա դուրս գալուն Եգիպտոսից։ Երբ բուն Եգիպտացիները վերին Եգիպտացիներից օգնութիւն առան, արտաքսեցին Հովիւ թագաւորներուն, և իւրեանց անկախութիւնը հաստատեցին։ Երևելի եղաւ Մերիս թագաւորը իւր լճով, որ շատ օգտաւէտ էր գետինը ոռոգանելու համար, մանաւանդ երաշտութեան տարիներում։

Մերեսից յետ 1350 ին նստաւ թագաւոր Սեսոստր մեծ աշխարհակալը, որ ինչպէս երևում է, Աֆրիկէի և Ասիայի նշանաւոր մասին տիրել է։ Մինչև ցայժմ մնացած յիշատակարանները և վերնագրերը. մանաւանդ կոթողների գրուածները վկայում են նորա գործքերին։ Սեսոստրից բաւական ժամանակ յետոյ նստաւ թագաւոր Բէոպս, որ շինեց ամենից մեծ բուրգը (այժմեան Գահիրէի մօտ)։

Սորա յաջորդները Ռեփրէն և Մեկերինոս պէտք է նոյնպէս շինութիւններ արած լինին։ Սեսոսարի յաջորդներին փառքը տեւեց մինչև ութերորդ դարի կէսը, երբ Սաբակ Ներովպացին տիրեց Եգիպտոսի, թէև շուտով հեռացաւ, բայց սովորութեան և իրաւունքի ընդդէմ Սեթոս քուրմը տիրեց Աթոռին 714 ին. այս եղաւ պատճառ ներքին երկպառակութեանց, որոնք երկրի տասն և երկու իշխանների մէջ բաժանվելով վերջացան։

Սոցանից մէկը Փսամետիքոս Սայեսեցին, որի մասը հասել էին Միջերկրական ծովի ափերը պատահմամբ ծանօթացաւ Յոյն և Կարթագինեցի նաւաստիներին վարձեց զնոսա ու նոցա օգնութեամբ յաղթեց միւս իշխանակիցներին ու միաւորեց վերստին ողջ երկիրը 650 ին մի իշխանութեան ներքոյ. առաջուան առանձնութիւնը Եգիպտոսի վերջացաւ, և մեծ կապակցութիւն սկսաւ մերձակայ ազգերի հետ. եկող օտարները այնքան շատացան, որ Փսամետիքոս մի առանձին կարգ դրաւ, այն է թարգմանիչների կարգը։ Սորա որդի Փարաւոն Նեքաւով (Նեքոս) հինգերորդ դարու մէջ իւր հօրից էլ անցաւ։ Սա մեծ նաւատոր միշ շինել տուաւ, և Փիւնիկեցի նաւագնացներին հրամայեց ողջ Աֆրիկէն պատեն նաւով։ Կամենում էր նաև Կարմիր ծովը Միջերկրականին հետ միաւորել։ Նեքաւոնն ցամաքային պատերազմում անյաջող էր, Նաբուքոդոնոսորի դէմ պատերազմում յաղթուեցաւ, և ստիպուեցաւ Եգիպտոսով բաւականանալ միայն։ Մի քանի ժամանակից Ամասիսից

հինգերրորդ դարու և կէսին սկսաւ նոր ցեղ թագաւորելու, բայց շատ սակաւ տևեց սորա իշխանութիւնը. ըստ որում սորա որդւոյ Փսամեդէսին թագաւորութեան առաջին տարումը 525 ին Պարսից Կամբիւս թագաւորը յարձակուեցաւ նորա վերայ, և յաղթելով նորան գերի առաւ Մեմփիս մայրաքաղաքում, և նորա երկիրը Պարսից թագաւորութեան հետ միաւորեց։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

Պարսիկները բնակվում էին Իրանի կամ այժմեան Ֆարսիստանի մէջ։ Շատ ժամանակ Մարաց իշխանութեան ներքոյ էին մինչև Կիւրոսը, որ Պարսկաստանը աղատեց Մարաց իշխանութիւնից։ Յունաց պատմագիրը Երոդոտոս կ'պատմէ թէ Աժդահակ Մարաց թագաւորը երազ տեսաւ, որ իւր դուստր Մանդանէի որովայնից մէկ ծառ է դուրս եկած որ ամբողջ Իրանը ծածկել է։ Այս երազը Աժդահակին մեկնեցին այնպէս թէ՝ նորա աղջիկ Մանդանէն կ'ծնի մէկ որդի, որ կ'տիրէ ամբողջ Ֆարսիստանին։ Աժդահակ երկիւղ կրելով այն մեկնութիւնից երբ երեխան ծնաւ, հրամայեց Արբակ իշխանին որ երեխայն սպանէ, Արբակ առաւ և տուաւ երեխայն մէկ հովուի, որ սնոյց զինքն իւր մօտ։ Աժդահակ երբ իմացաւ երեխայն թէ Կիւրոսն է և կենդանի է, ուղարկեց նորան իւր ծնողաց մօտ, բայց Արբակից իւր վրէժը առաւ՝ բարբարոսական կերպիւ, նորան իւր

որդւոյ միսը ուտացնելով։ Պիւրոս շատ զօրացաւ և բաւական զօրք դումարեց որ նուաճի Մարաց և Լիւդացւոց թագաւորներին, և մեր խոհեմ և քաջ Տիգրան առաջնոյ թագաւորին հետ, հաստատելով իւրեան սերտ բարեկամութեան ուխտը միաբանացրեց իրեն այս աննուաճելի քաջ դուցաղնին, որ յառաջ տանի իրեն դիտաւորութիւնները։ Մարաց Աժդահակ թագաւորը տեսնելով սորանց սիրով միաբանութիւնը, կամենում էր խորամանկութեամբ բանը վերջացնել, այն է բարեկամութիւն հաստատել Հայոց Տիգրան արքայի հետ, նորա քոյրը առնելով իրեն կին, և նորանով սպանել նորան։ Պատգամաւոր է ուղարկում Տիգրանի մօտ, նորա Տիգրանուհի քոյրը կին խնդրելով, Աժդահակը իւր խորհուրդը կատարեց և Տիգրանուհին իւրեան կին առաւ, յետոյ ասում է Տիգրանուհւոյն թէ քո եղբայր Տիգրանը իւր Զարուհի կնոջ խօսքովն կամենում է մեզ և մեր թագաւորութիւնը վերջացնէ, որովհետև Զարուհին նախանձել է քո տիկնաց տիկին լինելուն։ Տիգրանուհին չխաբուելով այնպիսի պատրողական խօսքերից՝ շուտով յայտնում է իւր եղբօրը։ Աժդահակ հրաւիրում է Տիգրանին խօսելու և դաւաճանութեամբ նորան սպանանելու. իսկ Տիգրան պատասխանում է նորան թէ շուտով միմեանց կտեսնենք պատերազմի դաշտում. յետոյ զօրք է դումարում, և շուտով հասնում Մարաց սահմանը։ Այն տեղ պատերազմը երկարում է առժամանակ մինչև Տիգրանուհին փախչում է եղբօրը մօտ, նոյն

պատերազմի միջոցը Կիւրոսը օգնութիւն է գալիս 535 թուականին։ Պատերազմի սաստկութեան ժամանակին Տիգրան յարձակվում է Աժդահակայ վերայ, և սպանում է իւր սրով նորան, և այնպէս պատերազմը վերջ է ստանում. և 10,000 մարդ գերելով՝ իրենց Ընոյշ թագուհու հետ ի միասին բնակեցնում է Մասիս սարիցը դէպ ի արևելք Երասխ գետի ափերում, որտեղից յետոյ Ծաղեցան Վիշապազունք։ Իսկ իւր Տիգրանուհի քրոջ համար Երնջակ դաւառումը մէկ քաղաք է շինում Տիգրանակերտ անունով և նորան իւր սերնդոց հետ այնտեղ է բնակեցնում։

Երբ Կիւրոսը այնպէս զօրացաւ, իւր դրացի թագաւորները երկիւղ կրեցին որ իրենց վնաս չտայ, Կիւրոսի դէմ միաբանեցան երեք թագաւորներ, Լիւդացւոց, Բաբելացւոց և Եգիպտացւոց։ Կիւրոսը գնաց նախ Լիւդացւոց Կրեսոս թագաւորի դէմ։ Լիւդացւոց թագաւորութիւնը գտնվում է փոքր Ասիոյ մէջ Հալիս (Գալալարմագ) գետի մօտ, և մայրաքաղաքն է Սարդիս։ Կիւրոս եկաւ յաղթեց Կրեսոսին, և հրամայեց որ նորան այրեն։ Երբ այրել կամենում էին Կրեսոսին, նա մի քանի անգամ կրկնեց «Ո՜հ Սողո՜ն, Սողոն», այս խօսքերով ազատուեցաւ մահից, և վերջապէս Կիւրոսին սեղանակից և խորհրդակից եղաւ։ Յետոյ գնաց Կիւրոսը Բաբելացւոց թագաւորութեան դէմ. ուր թագաւորում էր Բաղդասարը։ Եփրատ գետի ընթացքը փոխելով յաղթութեամբ տիրեց Բաբելոնի 538 թուին. յե-

տոյ ցանկացաւ գնալ Եգիպտացւոց դէմ, բայց մահ-
ուան պատճառաւ չկարողացաւ, 529 թուին։ Կիւ-
բոսի համար ոմանք կ՚պատմեն թէ հիւանդութեամբ
մեռաւ, ոմանք ևս կ՚պատմեն թէ նորան սպանել
տուաւ Մասքութների Տոմիրիս թագուհին, և նո-
րա գլուխը ձգել տուաւ մէկ տակառի մէջ. որ արիւ-
նով լի էր։ Մասքութները բնակվում էին Կասպից
ծովի արևելեան կողմում։ Կիւբոսից յետոյ թագա-
ւորեց նորա որդի Կամբիւսը. նա էլ կամեցաւ յաղ-
թութիւններ անել. գնաց Եգիպտացւոց վերայ, ուր
թագաւորում էր Փսամենիդէս, որ յաղթուեցաւ և
գերի ընկաւ։ Կամբիւսը հրամայեց նորա որդւոյն
սպանեն, և Փսամենիդէսի աղջիկները ջուր էին բե-
րում թագաւորի համար։ Սորանից յետոյ գնաց
ՅԵթովպիայ Կամբիւսը, և այն տեղ այնպիսի սով
անկաւ որ սկսեցին վիճակով օրը մէկ զինուոր մար-
թել և ուտել։ Կամբիւսը երբ տեսաւ այն խեղճու-
թիւնը շտապեց վերադառնալ ԵԹովպիայից։ Երբ
մտաւ Եգիպտոս, տեսաւ որ այն օրը տօնում էին
Ապիսի տօնախմբութիւնը, և ճանապարհ չկար որ
Կամբիւսը անցնէր. շատ բարկանալով սպանեց Ա-
պիս կովին։ Այն ժամանակ Եգիպտացիք կատաղե-
լով՝ անկան Կամբիւսի վերայ, և բոլորովին ազատ-
ուեցան պարսկաց իշխանութիւնից։ Այն միջոցին
Պարսկաստանումը դուրս էր եկել մէկ մոգ և իրան
անուանել էր Շ՚մերդ, որին առաջուց սպանել էր
տուել Կամբիւսը։ Շ՚մերդը Կամբիւսի եղբայրն էր,
երբ Կամբիւսը լսեց թէ Պարսկաստանում դուրս է

եկել մէկ մարդ Հ. մերդ անունով, շտապեց գնալ այնտեղ, և երբ ձիուց վեր էր գալիս, սրով սպանուեցաւ 522 ին։ Սուտանուն Հ. մերդը շատ չկարողացաւ թագաւորել. նորա ստութիւնը իմանալով սպանեցին, նախարարները իրանցից ընտրեցին թագաւոր Դարեհ Ա. շտասպեան, որ սկսեց նմանապէս պատերազմել, առաջ գնաց Սկիւթացւոց վերայ, որոնք բնակվում էին Սև ծովի հիւսիսային կողմը։ Սկիւթացիք թափառական ժողովուրդ էին, ինչքան Դարեհ առաջ էր գնում այնքան նորանք հեռանում էին, վերջը Դարեհը հազիւ հազ վերադառնալ կարողացաւ։ Դարեհ այնքան երևելի չէր իւր պատերազմով, որքան ներքին կառավարութեամբ նա Պարսից տէրութիւնը 20 մաս բաժանեց կամ 20 նախարարութիւններ (Սատրապետութիւն)։ Դարեհ կարգի բերեց տուրքերը, և ամբողջ տէրութեան մէջ կանոնաւոր սուրհանդակներ հաստատեց, որով ամեն բանի համբաւը՝ ինչ որ իւր ընդարձակ թագաւորութեան մէջ պատահում էր, շուտով ստատանում էր թագաւորը, իւր համար ունէր առանձին պաշտօնակալք, և շատ շռայլ կեանք էր վարում ամենայն տեղերից ստանում էր թանկագին ըմպելիք և զանազան ուտելիք, ցորենը բերում էին արևմտեան փոքր Ասիայից, գինին Ասորեստանից։ Թագաւորը մէկ տեղ չէր մնում. ձմեռը Բաբելոնում, գարնան ժամանակ՝ Հ. օշ քաղաքում, ամառը՝ Եկբատանում։

Որմիզդ և Արհմն Պարսից չաստուածն էին. նոքա կարծում էին թէ այս երկու չաստուածք միշտ իրար

հետ պատերազմում են, Որմիզդը էր բարի Հաստուած, լոյս Հաստուած, իսկ Արհմն չար Հաստուած և Հաստուած խաւարի և նորան հպատակում էին չար հոգիքը։ Ժամանակով պէտք է Որմիզդը յաղթէ Արհմնին, աշխարհը պէտք է մաքրուի կրակով, յետոյ լինի յաւիտենական հանգստութիւն։ Պարսիկները չունէին ոչ տաճարներ և ոչ կուռքեր. բայց միայն ունէին մոգեր։ Մոգերը աղօթք էին անում, և յետոյ զոհ էին մատուցանում արեւուն, լուսնին, կրակին։

Պարսից սուրբ գիրքն էր Զենտավեսթա, որի գրողն էր Զօրօաստր կամ Զրուան իմաստունը։

Պարսիկները իւրեանց մեռելներին չէին թաղում։

Պարսիկները յառաջ չափաւոր կեանք էին վարում, իւրեանց երեխայից սովորցնում էին ճշմարիտ խօսել, լաւ ձիերով ման գալ. բայց երբ յաղթեցին Մարաց և Բաբելացւոց, նորանցից սովորեցան շռայլութիւն։

Պարսից թագաւորութիւնը շատ չտևեց, վասնզի զանազան ժողովուրդներ կային նոցա իշխանութեան տակ, որ շուտով ցանկանում էին ազատուիլ։

Դարեհ Գ. Հետասպեան մահից յետ՝ նորան ժառանգեց նորա որդին Քսերքսէսը որ գնաց պատերազմի Յունաց դէմ, և յաղթուեցաւ նորանցից։ Քսերքսէսից յետոյ թագաւորեցին Արտաշէս Ա, Դարեհ Բ, Արտաշիր Բ. վերջին թագաւորն էր Դարեհ երրորդ Կոդոմանոս, որին յաղթեց Աղէքսանդր Մակեդոնացին 330 ին։

ՅՈՒՆԱՍՏԱՆ

Պալգանեան թերակղզւոյն հարաւային մասը կը-կոչուի Յունաստան։ Յունաստանը շատ լեռնոտ երկիր է։ Ռնութիւնը բաժանել է Յունաստանը երեք մասն. հիւսիսային, միջին, և հարաւային։ Պինդոս լեռը հիւսիսային Յունաստանը երկու մասը կը-բաժանի, որոյ արևմտեան մասն է Եպիւռոս, և արևելեան կողմը Թեսաղիա, Եպիւռոսում երևելի քաղաքն էր Դոդոնէ, ուր էր Դիոսի կամ Երամազդ Աստուծոյ պատգամախօսը. իսկ Թեսաղիոյ հիւսիսային արևելեան կողմն է Ողիմպոս լեռը։ Յոյնք այնպէս էին հաւատում որ իբր թէ Դիոսը և միւս Աստուածները այս լերան վերայ կ'ժողովէին։

Հիւսիսային և միջին Յունաստանի միջին ճանապարհ է Թերմոպիլէի կիրճը։

Միջին Յունաստունը կամ Եղլատայ կ'բաժանուէր մի քանի մասն։ Դելֆաւորները սոքա են Ատիկէ Աթէնք մայրաքաղաքով։ Բէոտիա՝ իւր Թեբէ քաղաքով, արևմտեան կողմը. Փոկիս՝ իւր Պառնասոս լեռնով։ Յոյնք կարծում էին թէ Պառնասոս լերան գագաթի վերայ կ'բնակէին ինը քոյր Աստուածուհիք դանազան արհեստից, և այս լերան ստորոտի մօտ էր Դելֆիս քաղաքը, ուր կառուցեալ էր Ապողոն Աստուծոյ անուանի մեհեանը, և ունէր պատգամախօս։ Կորնթոսի պարանոցով Եղլատան Լմիանայ հարաւային Յունաստանի հետ, որ է Պեղոպոնէս, այժմ Մոռա թերակղզին։ Այս

թերակղզւոյ մէջտեղն էր, Երկադիա գաւառը, անդ կ'բնակէին հովուաց ցեղերը. վասնզի շատ խոտաւէտ տեղ էր։ Երկադիայից դէպի արևելք լեռնոտ Երգողիս գաւառն էր՝ իւր Երգոս քաղաքով, և դէպի արևմուտք Եղիս։ Եղիսը կ'համարուէր սուրբ գաւառ, և այն տեղ էր նոցա Ողիմպոս սրբազան քաղաքը, ուր կ'կատարէին իւրեանց Ողիմպիական սրբազան խաղերը։ Երկադիայից դէպի հարաւ էր Լակոնիան՝ Սպարտա քաղաքով։ Յունաստանի և փոքր Ասիոյ մէջ եղած Միջերկրական ծովու մասն կ'կոչուէր Եգեան ծով (այժմ Երշիպեղագոս)։ Այս ծովը ունի շատ կղզիք՝ Յոյն բնակիչներով, որոց գլխաւորքն են Եւբէա իւր Երետրիա քաղաքով։ Եւբէայից դէպ ի հարաւ կայ խումբ կղզեաց, Պարոս, Դեղոս և Դէպ ի արևելք փոքր Ասիոյ կողմը. Քիոս, Սամոս, Հռոդոս, և Յունաստանից դէպ ի հարաւ կայ Արետէ կղզին, կամ որ է Կանդեայ։ Յունաստանի արևմտակողմը Յոնիական ծովու վերայ կան Յոնիական կղզիք, որոնց գլխաւորն է Կորկիւրա կամ Քորֆու։

Յունաստանի նախկին բնակիչքն էին Պեղասգեանք։ Սոքա երկրագործ և խաղաղասէր ժողովուրդ էին. Հելլենացիք յաղթեցին իւրեանց ցեղակից Պեղասգեանց, և մեծ մասը նրանց հետ խառնվեց։ Հելլենացիք գաղթեցին փոքր Ասիայից և բնակեցան Պալգանեան թերակղզւոյ վերայ։ Իրենք կ'պատմեն թէ իրենց ծագումն է Պրոմեթէւսից, որոյ որդին Դևկալեոն՝ իւր կնոջ Պիրրայի հետ միայն ազատուեց ջեր-

հեղեղեց։ Դաւկալիոնի երկու թոռներից, որ էին Դորիս և Դուղոս, և երկու թոռանց որդիքներից, որ էին Յոն և Աքէոս, Ծագեցան չորս ցեղեր, Դորիացիք, Դուղացիք, Յոնիացիք, և Աքայեցիք։ Հելլենացիք այսպիսի առասպելներով կ'ցանկային իւրեանց ծագումը յայտնել։

Յոյնք կ'պատմեն թէ մի քանի դար առաջ նախ քան զՔրիստոսի ծնունդը՝ Ասիայից և Եգիպտոսից գալիս էին Յունաստան երևելի գաղթականներ, որոնք կուսուցանէին Յունաց արհեստներ և վաճառականութիւն, և մինչև անգամ հիմնեցին երևելի քաղաքներ և տէրութիւններ։ Եգիպտոսից եկաւ գաղթական Պեկրոպս՝ իւր հայրենակիցներով, և հիմնեց Աթէնք քաղաքը. Դանաւոս, որը հիմնեց Թագաւորութիւն Արգոս քաղաքում։ Փիւնիկէից եկաւ Կադմոսը, և շինեց Թեբէ քաղաքը։ Եւ ասում են թէ հարաւային Յունաստանը. կոչվեցաւ Պեղոպոնէս՝ Պեղոպսի անուամբ, որ եկել էր Հիւդացւոց երկրից։ Այս գաղթականների նախորդները երկար ժամանակ կ'թագաւորէին Յունաստանում և կ'կոչվէին Հերոսներ կամ դիւցազունք. այս Հերոսաց վերայ անթիւ առասպելախառն պատմութիւններ կան։ Հարկաւորէ իմանալ, որ ոչ մէկ ազգ չէ թողել այնքան առասպելախառն աւանդութիւններ իւրեանց աստուածոց և Դիւցազանց վերայ՝ որքան Յոյնք։ Եւ այսպիսի աւանդութիւնները կ'կոչվէին առասպելք (Μύθοι) Դիւցազանց միջում առաջին տեղը բռնեցին այս երկուքը. Հերակլէս կամ Հեր-

քիւլէս և Թեսէոս։ Հերքիւլէսն էր Դանաւոսի տոհմից և կ՚համարուէր Դիոսի (Երամազդայ) որդի և չափազանց ուժեղ էր. կ՚պատմեն թէ սա սպանեց իւր կնոջ և որդւոց։ Աստուածները վճռեցին որ նա այս յանցանաց համար ծառայի մէկ Յունաց թագաւորի։ Այն թագաւորի առաջարկութեամբ Հերքիւլէսը տասն և երկու երևելի յաղթութիւններ արեց օրինակ, նա իւր ծանր գաւազանաւ սպանեց առիւծ Հիմեան անտառում, որի շրջակայքը միշտ կաւերէր, և այն առիւծի կաշին վերարկուի տեղ գործ կ՚դնէր. դարձեալ սպանեց մէկ զարհուրելի օձ, որ Լեռնեան ճահիճում կ՚մնար. բայց քանի նորա գլուխը կրկորէր, այնքան նոր գլուխ դուրս կ՚գար։ Յաղթեց նմանապէս Սմազոն անուանեալ քաջամարտիկ կանանց, Հերքիւլէսը գնաց դժոխք, այն տեղից դուրս բերաւ Կերբերոս անունով երեքգլխանի շունը։ Թեսէոս էր Աթենացւոց Եդէոս թագաւորի որդին։ Թեսէոս իւր երիտասարդութեան ժամանակ Հերքիւլէսի նման, շատ յաղթութիւններ արեց. բոլոր ախոյեաններին յաղթեց։ Նորա գլխաւոր յաղթութիւնը կ՚համարուի Մենոտաւրոսի մեռցնելը։ Կրետէ կղզւոյ թագաւոր Մինովս հրամայեց որ Աթենացիք Մենոտաւրոսին տան իւրաքանչիւր տարի եօթը տղայ և եօթը աղջիկ. վասն զի Աթենացիք սպանել էին Մինովսի որդւոյն։ Այս երեխայքը կ՚տանէին Մենոտաւրոսին, և նա կ՚լափէր։ Մենոտաւրոսը էր կէսը մարդ և կէսը եզ։ Թեսէոս լսելով զայն՝ գնաց Կրետէ կղզին, սպանեց

Մենոտաւրոսը և յաջողութեամբ վերադարձաւ Աթէնք։ Ճանապարհին մոռացաւ նաւի սև առագաստները փոխել, որ յաղթութեան նշան էր իւր հօր Եգէոսի համար։ Երբ որ Եգէոս տեսաւ մէկ լեռնից նաւ սև առագաստներով, կարծեց թէ Մենոտաւրոսը կերել է իւր որդին, և այլ ևս չ՝համբերելով՝ լեռնից ընկաւ յանկարծ ծովը։ Եւ նորա անուամբ այն ծովը կոչուեցաւ Եգեան ծով որև (Մարմարա)։

Յոյնք առհասարակ սիրում էին բացատրել աշխարհագրական անունները հին հին առասպելներով օրինակ, Դարդանեան նեղուցը կոչվում էր Հելլեսպոնտոս։ Ա՝պատմեն Յոյնք թէ Փռիքսոս և Հելլէ թագաւորի տղայքը ազատուելով իւրեանց խօրթ մօրից, նստան մէկ ոսկեգեղմն ոչխարի վերայ և նեղուցից անցնելու ժամանակ, Հելլէն ընկաւ նեղուցը, և խեղդուեց, և այն նեղուցը կոչուեցաւ Հելլեսպոնտոս։ (այսինքն Հելլէի ծով) Նորա եղբայրը սև ծովու արեւելեանեզերքը հասնելուն պէս մտաւ Պղոքիս երկիրը (այժմեան Աֆխազիա սահմանակից Ռուսաստանի), իւր ոչխարը զոհ մատոյց Աստուածոց, և ոսկեայ գեղմն կամ մորթին կախեց անտառում։ Պղքիսի թագաւորը պահապան դրեց այն գեղմին հրաշունչ վիշապը, վերջը Յունաց քաջերը ժողովեցան թուով 50, և նաւեցին Արգոս նաւով՝ որ գտնեն այն ոսկեայ գեղմը։ Նոցա ձեռնարկութիւնը պատմութեան մէջ յայտնի է՝ արշաւանք Արգոնաւորդաց անունով որ է արգոնաւորդաց ճանապարհորդութիւնը։ Նոցա

առաջնորդն էր Յասոնն՝ Թեսաղիոյ իշխաններից մէկը։ Շատ նեղութիւնից յետոյ, Յասոնն (Կողքիսի թագաւորի կախարդ աղջկան Մեդէայի օգնականութեամբ) դտաւ ոսկի մորթը, և վերադարձան իւրեանց հայրենիք։

Բոլոր Յունաց դիւցազանց ամենից դժբախտ վիճակով փառաւորուեցաւ Թեբէ քաղաքի հիմնող Կադմոսի սերունդը։ Նորա սերունդից մէկը, Էդիպոս անունով, պատահմամբ սպանեց իւր հօրը, և պսակուեց իւր մօր վերայ. նորան չճանաչելով։ Երբ ինքը Թեբէ քաղաքում կթագաւորէր, յանկարծ նորա թագաւորութեան մէջ ժանտախտ ցաւ պատահեց, իւրեանց սովորութեան համեմատ դնացին նորա պատգամախօսի մօտ, և նա պատասխանեց, թէ Աստուածները, պատժում են Էդիպոսի յանցանաց համար։ Էդիպոսը լսելուն պէս յուսահատութիւնից իւր աչքերը հանեց ու գնաց թափառել ուրիշ երկիրներ իւր դուստր Անտիգոնէի ուղեկցութեամբ, որ չկամեցաւ միայնակ թողուլ իւր դժբախտ հօրը. Էդիպոսի երկու զաւակները, Էդէոկղ և Պոլինիկէ համաձայնեցան կարգաւ թագաւորել։ Բայց երբ որ Էդէոկղ իւր ժամանակը լրացոյց, չկամեցաւ թագաւորական գահը Պոլինիկէին թողնել. Պոլինիկէն այս տեսնելով եղբօրը դէմ զինուորվեց՝ Պելոպոնէսի իշխանների օգնականութեամբ, ու պաշարեց Թեբէ քաղաքը։

Երկու եղբարք համաձայնեցան պատերազմը վերջացնելու մենամարտութեամբ, և այնպիսի կատա-

զութեամբ ընկան միմեանց վերայ որ երկուքն էլ մեռան։ Յետ մահուան էլ իւրեանց վրէժը չվերջացաւ, կ'պատմեն թէ երբ որ իւրեանց սովորութեան համեմատ՝ նոցա այրում էին, բոցը երկու մաս բաժանուեց։ Իշխանները, որոնք կ'պաշարէին Թեբէն՝ գրեթէ բոլորեքեան Թեբէ պարսպի տակ ջնջվեցան. բայց նոցա որդիքը նորոգեցին պաշարումը, և յաղթութեամբ առան քաղաքը և Թեբէի պատերազմունքը նոյնպէս վերջացան։

Հարաւային Յունաստանում Պելոպեանք կ'իշխէին, այսինքն Պելոպսի սերունդները։ Փոքր Ասիոյ հիւսիսային արևմտեան եղերքի վերայ կար փոքր թագաւորութիւն Տրովացւոց (Յունաց ցեղակից ազգաց)։ Տրովադայում կ'թագաւորէր Ծերունին Պրիամոս, որ ունէր շատ որդիք, նրանցից մեծն էր Հեկտոր, որը անուանի էր իւր զինուորական քաջութեամբը, միւս որդին Պարիս՝ իւր արտաքին գեղեցկութեամբ։ Տրովացւոց պատերազմի պատճառն եղաւ Պարիսը։ Սա մէկ անգամ գնաց Պելոպոնէս ճանապարհորդելու, այն ճանապարհորդութեան ժամանակ. փախոյց Սպարտացւոց Մենեղաւոս թագաւորի կնոջ Հելենէին։

Այն ժամանակ Յունաց իշխաններից շատերը միաւորեցան՝ իւրեանց առաջնորդ ընտրելով Մենեղաւոսի եղբայր Ագամեմնոնը և արշաւեցին պատերազմի Տրովացւոց դէմ։ Բացի Մենեղաւոսից և Ագամեմնոնից հռչակաւոր զօրավարներ էին այն պատերազմում Ոդիսևս, Այաքս, և Աքիլլէս. ան-

տեղ էր նաև մեր Հարմայր նահապետը, որ Պրիամոս թագաւորի խնդրանքաբ Ասորեստանի Տեղամոս թագաւորի զօրքը և մեր առանձին գունդը առնում է իւր հրամանատարութեան ներքոյ և գնում է Տրովացւոց օգնութիւն ընդդէմ Հելլենացւոց։ Այնտեղ Հարմայրը շատ քաջութիւններ անելուց զկնի սպանուում է Հելլենացւոց քաջերից։

Ողիսևսը շատ խորամանկ մարդ էր։ Այլաքսը նշանաւոր էր իւր բարձր հասակաւ և ուժով. իսկ քաջը Աքիլլէս կ'գերազանցէր իւր յաղթութիւններով։ Տրովադա կամ Տրոյիա քաղաքը ամրացած էր ամուր պարսպներով, Յոյնք չ'կարողանալով յարձակմամբ առնուլ, վճռեցին որ պաշարմամբ առնուն։ Դուրս հանեցին եզերքի վերայ իւրեանց փոքրիկ նաւերը և բանակ կազմեցին, դաշտի վերայ բանակի և քաղաքի մէջ մասնաւոր պատերազմ կ'տային նոցա դիւցազունքը պատերազմում դուրս էին գալի կառքով (այս կառքերը փոքրիկ էին՝ երկու անիւներով, և այնպէս էին շինած որ նոքա կ'պատերազմէին նրանց մէջ, ոչ թէ նստած, այլ կանգնած) Տրովադայի մէկ քանի պատերազմերը սքանչելի կերպիւ նկարագրուած են Յունաց Իլիական անունով վիպասանութեանը մէջ։

Յոյները այս Իլիական վիպասանութիւնը ընծայում են Հոմերոս կոյր ծերունի բանաստեղծի, և կըպատմեն թէ այն պատերազմում Ողիմպոսի հաստուածները մասնակից էին, ոմանք Տրովադացւոց կողմը պահելով, և ոմանք Յունաց։ Ահա այս կերպով կը-

պատմէ Իլիականը Ակիլլէսի և Հեկտորի պատերազմը։

Ակիլլէսը խռովեցաւ գլխաւոր զօրապետ Ագամեմնոնից, և այլ ևս չկամեցաւ պատերազմել։ Այն ժամանակ Տրովադացիք սկսեցին յաղթութիւն անել, և Ակիլլէսի բարեկամ Պատրոկղը սպանուեց Հեկտորից։ Պատրոկղի մահը ստիպեց Ակիլլէսին կրկին պատերազմել, և Հեկտորից իւր վրէժը առնել, Ագամեմնոնի հետ հաշտուեց, և իւր քաջութեամբ սկսեց Տրովադացւոց յաղթել։ Բայց Հեկտորը յօժարեցաւ Նորա հետ մենամարտիլ։ Նորա կողակից Անդրոմաքէն ուրիշ Տրոյիացի կանանց հետ բարձր աշտարակից կ'նայէր այն մենամարտութեան վերայ։ Երբ Հեկտորը քաղաքից վերջին անգամ պատերազմելու կերթար, Նորա ետևից իւր ամուսինը և դայեակը որ գրկած կ'տանէր Հեկտորի փոքր զաւակը Աստիանաքսին։ Անտրոմաքէն զգալով վտանգը, արտասուելով կաղաչէր Հեկտորին որ քաղաքից դուրս չ'գնայ, և քաղաքից պաշտպանվի, բայց քաջը ամօթ կ'համարէր այնպիսի վտանգից հեռանայ։ Հեկտոր երբ կամեցաւ համբուրել իւր զաւակին, երեխան լացեց։ և շուտով դիմեց իւր դայեակին, նա վախեցաւ իւր հօր բրդոտ բաշիցը, որ հողմից կ'ծածանուէր Հեկտորի պղնձեայ սաղաւարտի վերայ։ Ժրպտաց քաջը, վեր առաւ իւր փայլուն սաղաւարտը, գրկեց իւր փոքրիկ զաւակը և մխիթարուեց Նորանով, յետ այնորիկ սրտաշարժ կերպիւ բարևեց իւր կնոջն և ասաց Նորան, թէ՝ դու որպէս կին գնա

տուն և աշխատիր ապահովագրել հետ հիւսմամբ և տնտեսական կառավարութեամբ, բայց ես որպէս այր մարդ՝ պարտաւոր եմ պատերազմելու։ Վերջապէս երբ Հեկտորը դէմ յանդիման պատահեցաւ ահարկու Աքիլլէսին, նա դողաց և կ'ցանկանար քաղաք վերադառնալ, բայց արագընթաց Աքիլլէսը վազեց նորա եաւէից, երեք անգամ պտըտեցին Տրովադայի Պարսպին չորս կողմը։ Դիոսը (Աբամաղը) երկնքից նայելով սոցա վերայ՝ բարձրացրուց կշեռքը և դրեց նոցա վերայ երկու վիճակ, մէկը Հեկտորին, իսկ միւսը Աքիլլէսին, Հեկտորի վիճակաթուղթը ցածացաւ, և այն ժամանակ նորա պահապան Ապողոն չաստուածը հեռացաւ նորանից, բայց Աթենաս չաստուածուհին օգնեց իւր սիրելի Աքիլլէսին։ Կանգնացրուց վազող Հեկտորին, որ ներկայացաւ նորան իւր եղբօր նման, և խոստացաւ օգնութիւն իւր թշնամոյ դէմ։ Առաջին անգամ Աքիլլէսը նետեց իւր ծանր նիզակը, Հեկտոր խոյսն ընկաւ ծնկան վերայ, և նիզակը անցաւ մօտից։ Աթենաս չաստուածուհին ըմբռնեց նիզակը և տուաւ Աքիլլէսին։ Յետ այնորիկ Հեկտոր նետեց իւր նիզակը ու անկաւ Աքիլլէսի վահանի մէջտեղը, բայց չանցաւ. կ'պատմեն թէ այն վահանը պատրաստուած էր Հեփեստոս (Վուլկանոս) չաստուծուց, որ շատ մեծ ճարտարութեամբ կ'պատրաստէր մետաղներից։ Այն ժամանակ Հեկտորը սուրը ձեռքին ընկաւ իւր թշնամոյ վերայ, բայց թշնամին խփեց նիզակը նորա կոկորդին, որ ծածկած չէր պղնձեայ տախտակով։

Հեկտոր անկաւ, և հոգին փչելու միջոցին կոդաչէր քաջ Աքիլլէսին, որ իւր մարմինը նախատանաց չենթարկի։ Բայց խստասիրտն Աքիլլէս հանեց նորանից գենքը, նորա դիակն ոտներից կապեց իւր կառքի եռևից, և քշեց Յունաց բանակը։ Տրովադացիք Տրոյիոյ պարսպից տեսան իւրեանց քաջին մահը, սկսան լալ և ողբալ։ Այն գիշերը Հեկտորի ծերունի հայրը Պրիամոս գնաց Աքիլլէսի մօտ և խնդրեց, որ գոնէ իւր սիրելի որդւոյ մարմինը յանձնէ իրան։ Սորանով վերջանում է Իլիականը։ Տրովադայի պատերազմի վերջը մենք գիտենք ուրիշ վիպասանութիւններից, մանաւանդ Էնէականից, որ գրեց Վիրգիլիոս Հռոմայեցւոց բանաստեղծը, միայն տասն ամեայ պաշարմունքից զկնի Յոյնք կարողացան խորամանկութեամբ առնել Տրովադայ քաղաքը։

Ոդիսևսի խորհրդով շինեցին փայտեայ ձի, և թողին քաղաքից դուրս, և իւրեանք խաբէութեամբ նստեցան նաւեր՝ և գնացին, ձայն տարածուեց թէ նոքա այն ձին թողել են պարգև Աստուածոց։ Տրովադացիք այն փայտեայ ձին քաղաքը ներս տարան մեծ հանդիսով։ Փայտեայ ձիուն մէջ մի քանի Յունաց քաջեր կային, նոքա գիշերը գուրս գալով սպանեցին դոնապանաց, և ներս թողին Յունաց զօրաց, ոչնչ հետ էին եկել նաւերով։ Երբ որ Յոյնք մըտան քաղաքը՝ այրեցին կողոպտեցին, ժողովրդեան կոտորեցին, շատերին գերի տարան և Տրովադացւոց թագաւորութիւնը խստաստուերեցին։ Բոցակիզեալ Տրովադայից ազատուեց միայն Էնէասը մի քանի

մարդիկներով։ Տրովադայի աւերելուց յետոյ Յունաց քաջերից մի քանիսը յաջողութեամբ վերադարձան իւրեանց հայրենիք։ Նոյն ժամանակ խորագէտն Ոդիսևս կ'թափառէր տասն տարի ծովը վերայ, մինչև հասաւ իւր Իթակէ կղզին (Յոնիական կղզիներից մէկն է)։ Նորա առասպելաբանական անցքերը. (արկածքները) կ'պատմէ մեզ Յունաց Ոդիսական վիպասանութիւնը, որ կոչի Հոմերոսի աշխատութիւնը կ'համարուի։ Թափառման ժամանակ Ոդիսևսը ենթարկվում էր չափազանց մեծ վտանգներին, բայց միշտ կազատվէր իրան հնարագիտութեամբ կամ Աստուածոց օգնականութեամբ։ Իրան հայրենիքում կ'սպասէր Ոդիսևսին հաւատարիմ ամուսինը իւր Տելեմաք որդւոյ հետ. թէպէտ շատերը կ'ցանկային նորա հետ պսակվել, և կ'համոզէին՝ իբր թէ Ոդիսևսը վախճանել է, իսկ Պենելոպէն (ամուսին Ոդիսևսի) կ'խնդրէր որ նորա սպասեն, մինչև որ նա վերջը իւր հիւսելը վերջացնի (և կ'պատմեն թէ ինչ որ ցերեկը կ հիւսէր գիշերը կ'քանդէր, նորից հիւսելու, որպէս զի նշանակեալ ժամանակը անցնի)։ Ինչպէս որ Իլիականը մեզ կ'ներկայացնէ պատերազմերը և Յունաց զինուորական սովորութիւնները, նոյնպէս Ոդիսևսը ընդ հակառակն կ'ներկայացնէ մեզ Յունաց խաղաղական կեանքը, նոցա տնային և հասարակական սովորութիւնները։ Օրինակի համար, Ոդիսևսի գնալը Թէակացւոց կղզւոյն վերայ։ Նաւակոծութիւն, յետոյ Ոդիսևսը մէկ կղզի հասաւ ուր կ'բնակէին հարուստ Թէակացիք, այնտեղ նրան պա-

տահեց Նաւսիկէն, Թէակացւոց թագաւորի դուստրը, որը երկու աղախինը հետը՝ քաղաքից դուրս գեստում կ'լողանայր. Նաւսիկէն Ոդիսևսին տուաւ վայելուչ հանդերձ, և ցոյց տուաւ նորան ճանապարհ դէպի իւր հօր Ալկինոսի արքունական պալատը։ Պալատը կ'փայլէր ոսկւով և արծաթով և շատ աղախիներ կային անդ, որոնցից ոմանք կ'հիւսէին և ոմանք տնտեսական գործերով կ'զբաղուէին։ Արքունական դահլիճում աթոռների վերայ նստած։ Ոդիսևսը առաջ գնաց, թագուհւոյն խնդրելով որ նորան ուղարկի իւր Իթակէ կղզին, սպասելով պատասխանին նստեց վառարանի մօտ մոխրոյ վերայ ինչպէս որ նոցա սովորութիւնն էր, պատճառը որ նոցա մէջ խնդիրք տուողը մոխրի վերայ կ'նստէր։ Թագաւորը ինքը առաջ գնաց, անծանօթին նստած տեղից բարձրացրուց, և հրամայեց որ նորա առաջ բերեն հաց, միս, գինի։ Ջրով, (նոցա սովորութիւնն էր) և զանազան պտուղներ։ Մի-ւս օրը թագաւորը հիւրին տարաւ հրապարակ՝ ժողովրդեան մօտ, և խնդրեց նոցա, որ նոքա պատրաստեն Ոդիսևսի համար նաւ, որով կարողանայ իւր հայրենիքը գնալ, յետոյ թագաւորը նաւապետներին ու Թէակացւոց իշխաններին խնջոյքի հրաւիրեց։ Այս խնջոյից համար մորթել էին 12 ոչխար, մէկ քանի խոզ և կով, տակառապետը ուրախութեամբ բոլորեցունց կ'մատակարարէր։ Հիւրերի ուրախութեան համար, ինչպէս իւրեանց սովորութիւնն էր, կանչեցին կոյր և ծերունի երգիչ Դեմոդոկին, որ քնարը ձեռքին սկսաւ եր-

դէպ Տրովադացւոց պատերազմի վերայ. Ողիսևս լսելով այն երգը ողբալ սկսեց, թագաւորը նկատեց և հրամայեց երգիչին որ դադարի: Յետոյ գնաց հրապարակ, ուր երիտասարդք կ'մենամարտէին. Ողիսևսին դուրը կանչեցին ներկայ գանուողները, նորան տուին ծանր քար, և նա այն դէս նետեց որ նշանակեալ տեղից էլ հեռացաւ: Յետ այնորիկ Ողիսևսին տարան տաք բաղանիք և այնտեղ լողացաւ: Ընթրեաց ժամանակ ծերունի երգիչը դարձեալ երգեց փայտեայ երիվարին վերայ, որ հնարիւք Տրովադան առնուեցաւ. Ողիսևս դարձեալ սկսեց լալ՝ այն ժամանակ Ալկինոս հարցրեց թէ նա ո՞վ է և ի՞նչ է նորա նեղութեան պատճառը, դիւցազնը պատմեց իրան արկածքները, իւր անցքերը Տրովադայից հեռանալուց յետոյ, ունկնդիրները նորա պատմութիւնները լսելով՝ զարմացան: Թէակացւոց իշխանները Ողիսևսին պարգևեցին հանդերձներ, ոսկեղէն անօթներ և պղնձեայ երեք ոտնեայ կաթսայ: Միւս օրը պատատում մորթեցին երկու եզ, և նոցա ազդրները այրեցին զոհարանի վերայ, ինչպէս սովորութիւն էր, ի պատիւ Դիոսի: Ողիսևս բարևեց հիւրասէր թագաւորին. նստաւ պատրաստած նաւում, ու նաւեց դէպ ի հայրենիքը: Տրովադացւոց պատերազմից յետոյ շուտով վերջացաւ հարաւային Յունաստանում Պեղոպսկանց պատութիւնը: Պեղոպոնէսի վերայ հիւսիսից յարձակուեցան Յունաց քաջերը Դորիայց, նոքա հետ զհետէ սկսեցին տիրապետել Պեղոպոնէսին (բաց ի Արկադիայից): Եւ նոցա զօրա-

պետները Պեղոպոնէսը բաժանեցին իրարանց մէջ առանձին տերութիւններ 1100 թուին նախ քան Ք. Ծ։

Այս անցքով վերջանում է դիւցազնական շրջանը հին Յունաստանի, և սկսվում է ճիշտ պատմական շրջանը։ Յունաստանի կարգադրութեանց մէջ մեծ փոփոխութիւն է սկսվում. հին ժամանակներում Յունաց թագաւորները չէին նմանում արևելեան բռնաւորաց, իրաքանչիւր երևելի գործքի համար նոքա պարտաւոր էին ժողով կազմել ծերունի մարդիկներից։

Բայց այժմ թագաւորի նշանակութիւնը համարեա փոքր իշատէ կցածանայ, և ժողովուրդը իւր իշխանաւորներն ինքը կընտրէ։ Եւ ահա կ'տեսնեմք որ Միապետական կառավարութիւնը Հասարակապետութեան կ'փոխուի, գրեթէ ամեն երևելի քաղաք իւր շրջակայ փոքրիկ քաղաքներով մէկ առանձին տերութիւն կկազմէ, և ամբողջ Յունաստանը շատ տերութեանց վերայ կբաժանվի։

Յունաց կրօնքը։ Յոյնք, որպէս և ուրիշ հեթանոս ազգերը, բնութիւն կպաշտէին, որոտումը և կայծակը նոցա համար երկնքի կառավարիչ Երամազդը կուղարկէր, որոյ եղբայրը Պոսիդոն՝ ծովի վերայ կիշխէր, իսկ միւս եղբայրը Պլուտոն սատրերկրեայ աշխարհում կ'թագաւորէր, ուր կթափառին մեռեալ մարդկանց ստուերները։ Երամազդի ամուսինն էր Հերա. նոցա որդիքն էին Ապողոն կամ Արևը, Անահիդ՝ կամ Լուսինը։ Աֆրոդիտէն չաստուածուհի

հեշտութեան, Աթենաս՝ ճարտարախօսութեան, Հերմէս պատերազմի չաստուած ևն. այս բոլոր չաստուածներն կկազմէին մէկ ընտանիք և կկոչվէին Ողիմպիական. վասն զի նոցա ժողովարանն էր Ողիմպոս լեռան գագաթը։

Բայց ի Ողիմպիական չաստուածներից Յոյնք ունէին երկրորդ կարգի չաստուածներ, լեռները, անտառները, դաշտերը և գետերը։ Յոյնք կհաւատային թէ երբոր մարդը կմեռնի, կերթայ նոցա ստուերների կամ Էղիւսեան անունով՝ երանելեաց կղզիների և կամ խաւար տարտարոսի մէջ։ Իրանց չաստուածներին կներկայացնէին ինչպէս մարդ, այնու ամենայնիւ նոքա կփայլէին գերբնական զօրութեամբ և անմահութեամբ։ Չաստուածների արձաններն էին մարդոց կերպարանօք, փայտեայ, զանազան մետաղներից, քարից, մանաւանդ մարմարիոնից։ Բանդակագործութիւնը ոչ մի տեղ կատարելութեան այն աստիճանին չհասաւ՝ ինչպէս հին Յունաստանում։ Երամազդի պատկերը նման էր մէկ յարգելի մարդոյ՝ որ բազմած էր աթոռոյ վերայ, գայիսոնը ձեռին. Ապողոնին կներկայացնէին գեղեցկակազմ երիտասարդի նման, Աֆրոդիտէն որպէս մի գեղեցիկ օրիորդ, Աթենասը զինուորեալ, ևն։ Չաստուածների արձանները տաճարներումը կմնային. որք շատ մեծ չէին այնպէս՝ ինչպէս Եգիպտոսում կամ առհասարակ Արևելքում։ Բայց Յունաց պատկերները առաւել լաւ և գեղեցիկ էին շինուած։ Գեղեցիկ սեղանների վերայ քուրմերը զոհ կմատուցանէին չաստուածոց։

Յոյնք այնպէս կկարծէին թէ չաստուածները կարող են խօսիլ մարդկանց հետ, և նոցա յայտնել ապագայն պատգամախօսների միջնորդութեամբ։ Երկու երևելի պատգամախօսք կային, մէկը ի Դոդոնէ (Եպիրոս) Բրամազդայ տաճարում, ուր քուրմերը զանազան բաներ կդուշակէին, կնայէին սուրբ ծառոց տերևների շարժման վերայ կամ աղբիւրների կարկաջման վերայ. միւս առաւել պատուաւոր պատգամախօսը կմնար Դեղփիս քաղաքում, Պառնասոս լեռան ստորոտի վերայ, Ապողոն չաստուածու տաճարի մօտ։ Այն տեղն քրմուհին, որ կկոչուէր Պիւթիա, կնստէր եռոտանի աթոռոյ վերայ, որ դրած էր լեռան ձեղքի վերայ. ձեղքի վատ հոտից Պիւթիան համարեա ուշաթափ՝ զանազան խառն ի խուռն բաներ կարտասանէր։ Պատգամախօսը լսելով՝ վերջը իրանից մէկ երկդիմի բան կդուշակէր, որ կամ կկատարուէր՝ կամ ոչ։ Դեղփեան պատգամախօսին մօտ կերթային Յունաստանից զանազան դեսպաններ, որ իմանան ապագայն՝ տէրութեանց համար, և կբերէին թանկագին պարգևներ. դեսպանները երկար ժամանակ կմնային, մինչև պատասխան ստանան. նոյն միջոցում քուրմերը այս տեղից այն տեղից կտեղեկանային՝ նոցա գործքը ինչպէս է. և վերջը յարմար կպատասխանէին։ Յունաստանում քուրմերի թիւը սակաւ էր, և այնպիսի պատիւ չունէին ինչպէս արևելքում։

Յունաց ազգից մէջ առաջինքն էին Հասապակոնեան խաղերն՝ ուր ցոյց կտային իւրեանց ուժը և

արագաշարժութիւնը։ Յունաց խաղերու մէջ անուանի էր Ողիմպիական խաղը, որ կկատարուէր ի պատիւ Երամազդ չաստուծոյ՝ Ողիմպիա քաղաքի մօտ Յունիս։ Աւազ ածած տեղը մի քանի օր կմենամարտէին. մենամարտողներն կամ ըմբիշները ոտով կը վազէին, կառքեր կքշէին եւն։ Իսկ չորս կողմից ժողովուրդը կնայէր, որոնք կգային Յունաստանի զանազան կողմերից։

Խաղարկութիւնը կսկսուէր և կվերջանար զոհաբերութեամբ, և աղօթքներ երգելով։ Յաղթողներն կստանային դափնի պսակ. այն պարգևը շատ թանկագին էր, և պատիւ էր ոչ թէ միայն ըմբիշին, այլ և այն քաղաքին՝ ուր որ նա ծնած էր։ Ըմբիշներից երևելին էր Միլոն Կրոտոնացին. Կրոտոնը Յունաց գաղթականաց տեղն էր հարաւային Իտալիայում։

Բաց ի մարմնակրթական խաղերից՝ երևելի գրողները և բանաստեղծները իւրեանց ընտիր գրուածքները ընթեռնուին, ինչպէս Հերոդոտը ընթերցաւ մի քանի հատուածներ իւր պատմութիւնից։

Ողիմպիական խաղերը չորս տարին մի անգամ կը լինէին։

Սպարտա, Աթէնք, և պատերազմ Պարսից հետ։

Յունաստանի հասարակապետութիւններից գլուխ խաւորներն էին Սպարտա (Լակեդեմոն) և Աթէնք։ Սպարտան էր Լակոնիոյ մայրաքաղաքն Եւրոտաս գետի վերայ փոքրիկ քաղաքներ բլրակների վերայ.

ունէին և շքեղ շինութիւններ, մեհեաններ, դատարաններ և գեղեցիկ թատրոն սպիտակ մարմարիոնից։ Քաղաքի մօտ առանձին հրապարակ կար՝ չորս կողմից հոր փորած և մէջը ջուր, որի վրայով շինուած կային երկու կամուրջ, կամրջի վերայ կային Հերքիւլէսի և Լիկուրգոսի արձանները։ Այն հրապարակը երեխանց մարմնակրթութեան համար էր պատրաստուած։ Երեխայքը երկու մաս կբաժնուէին, որոնք միմեանց հետ կպատերազմէին և կաշխատէին միմեանց ջրի մէջ ձգել. քաղաքը պարսպով չէր շրջապատած, վասն զի ժողովուրդը քաջ էր, և նոքա կարողանում էին իւրեանց թշնամեացը դէմ կենալ։

Երկու եղբարց քաջութեամբ Դորիացիք առան յաղթութեամբ Լակոնիան. և այն ժամանակից Սպարտայում սկսուեց երկու թագաւոր նստել, նոքա միմեանց հետ միշտ անհամաձայն էին. Լակոնացիք շուտ շուտ կապստամբվէին, և կծագէր մեծ խառնակութիւն և շփոթ։ Բայց Թ. դարում (Քրիստոսի ծննդենէ առաջ) Լիկուրգոսը կարգաւորեց Սպարտան և օրէնքներ հաստատեց։ Լիկուրգոսը թագաւորական երկու ցեղից էր։ Սա էր 884 թ. (նախ քան Քրիստոսի ծնունդը)։

Պատանջային շատերը ասելով թէ նա կամենում ձեռք բերել ծայրագոյն իշխանութիւն։ Երբ որ այս զրպարտութիւնը լսեց, հեռացաւ իւր հայրենիքից, և երկար ժամանակ ճանապարհորդեց Յունաց կղզիները, փոքր Ասիայում և Եգիպտոսում։ Սպարտա-

ցիք կրկին խնդրեցին որ Լիկուրգոսը վերադառնայ, և նրանց տայ օրէնք, որով կարողանար վերջացնել խառնակութիւնը։ Յաւելով հայրենեաց վերայ՝ Լիկուրգոսը կատարեց նոցա խնդիրքը։ Դեղփիսի պատգամախօսը հաստատեց նորա օրէնքները։ Պատմեն թէ երբ որ Լիկուրգոսը տուաւ Սպարտացւոց օրէնքներ, նոցանից երդում առաւ մինչև նորա վերադառնալը օրէնքները սրբութեամբ պահեն, և ինքը գնաց սովամահ զրկուեց իւր կեանքից, և կասեն թէ մեռնելու ժամանակ խնդրեց որ նորա մարմինը ծովը ձգեն, չլինի որ Սպարտացիք գտնելով նորա գերեզմանը՝ օրէնքները փոփոխեն։ Երբ Լիկուրգոսը Սպարտացւոց տուաւ օրէնք, Սպարտացւոց թագաւորութիւնը այս դրութեան մէջն էր։ Դորիացիք կամ Սպարտացիք մեծաւ մասամբ Սպարտայում կընակէին կկազմէին առաջին զինուորական կարգ. միւս ստրադրեալ ժողովուրդները կբաժանուէին երկու կարգ, ազատ՝ և ստրուկ։ Ազատները կընակվէին Լակոնացւոց քաղաքաց մէջ և հարկ կհատուցանէին. իսկ ստրուկները՝ որոնց Իլոտ կանուանէին, Սպարտացւոց ստրուկ էին, և միշտ կծառայէին, նրանց հողը վարելով։ Սպարտայում առաջուց կային երկու թագաւորութիւններ, բայց նրանց իշխանութիւնը սահմանափակ էր, առաջին՝ որ նոքա ունէին Էֆորոսեայ՝ որ կազմված էր 28 վաթսունամեայ ծերունի մարդիկներից, երկրորդ՝ նոքա ունէին հինգ Էֆորոսներ՝ որոնք հետամուտ էին ամենայն կառավարութեանց։ Երևելի գործոց վճիռը կտար Սպարտացւոց ազգային

ժողովարանը, որոյ անդամոց հասակն էր ոչ սակաւ քան երեսուն ամ։ Այն տեղ սովորութիւն չկար գործքի վերայ դատողութիւն տալ, այլ ժողովուրդը միայն ձայն տալով գործքը կվճռուէր ըստ առաւելութեան ձայնից։ Միով բանիւ, թէպէտ Սպարտայում հասարակապետական էր կառավարութիւնն, բայց գործքերը առաւել թագաւորաց և երևելի իշխանաց ձեռքն էին՝ քան թէ ժողովրդեան, այս պատճառաւ էլ Սպարտան կոչուեցաւ Ազնուապետական հասարակապետութիւն։

Սպարտացւոց արգելուած էր շռայլութիւն. իրանց տանը չունէին ճաշելու, այլ կժողովուէին հասարակաց սեղան և նորանցից իւրաքանչիւրը կբերէր այնքան՝ որքան որ նշանակուած էր ալիւր, գինի, դրամ։ Նոցա սեղանը շատ հասարակ էր. ապուր, որ կպատրաստէին խոզի արգանակից, արիւնից, քացախից և աղից։ Կպատմեն թէ մէկ օտար թագաւոր Սպարտացւոց խոհարարին հրամայեց որ պատրաստէ ապուր. թագաւորը ճաշին չհաւանեց ասելով թէ՝ շատ անհամ կերակուր է. խոհարարը պատասխանեց թէ՝ տէր արքայ, ապուրը միայն մեզ է ախորժելի, վասն զի մենք լողացել ենք Եւրոտաս գետում։ Սպարտացւոց արգելուած էր նմանապէս թանկագին հանդերձ հագնել և գեղեցիկ տներ շինել։ Միայն Սպարտացիք լաւ հանդերձ կհագնէին պատերազմում. պատերազմի ժամանակ կառնէին ծիրանի վերարկու և ծաղկեայ պսակներ, և երգելով կերթային պատերազմ։

Մանկանց կրթութիւնը շատ սաստիկ էր, երեխայի եօթնամեայ հասակում կտային մարզարան, այսինքն հասարակաց ուսումնարանը, ուր գլխաւոր ուսումն էր մարմնակրթութիւն։ Պաշխատէին քաջ զինուորներ պատրաստել, որ կարողանան ամենայն տեսակ նեղութեանցը տանել, որոնց կսովորցնէին սովաց մնալ, հոգնել, և հիւանդութեան սիրով համբերել. բաց յայսմանէ երեխանցը կծեծէին փայտով, և եթէ երեխան չլար՝ քաջութեան նշան էր։ Աղջիկները նմանապէս կպարապէին մարմնակրթութեամբ իւրեանց կազմուածքը ամրացնելու համար, որով կարողանան առողջ որդիք ծնել. ծերոց հնազանդելը և պատիւ տալը երիտասարդաց առաջին պարտաւորութիւնն էր։ Սպարտացի երիտասարդները փողոցում շրջելու ժամանակ հաւասար քայլերով կերթային՝ աչքերը դէպ ի գետինը ուղղած և ձեռները վերարկուի տակ պահելը խոհեմութեան նշան էր. նոցա ի մանկութենէ կսովորցնէին համառօտ և աղդու կերպիւ պատասխանել. այսպիսի պատասխանը կոչուեցաւ Լակոնական։

Սպարտացիք չափաւոր կեանք վարելով, վերջը Յունաստանում ամենաքաջ ժողովուրդ կհամարուէին, և փոքր միջոցում Պեղոպոննէսի բոլոր տերութիւնները ընդունեցին իրանց վերայ Սպարտացւոց նախագահութիւնը։ (Հեգեմոնիա) Հեգեմոնիան Սպարտացւոց համար այն նշանակութիւնը ունէր՝ որ պատերազմի ժամանակն Սպարտացւոց թագաւորները կառաջնորդէին միւս հպատակ զօրաց։

Երկրորդ երևելի Հասարակապետութիւնն էր Աթենք, որ կտիրէր հարաւային արևելեան անկիւնը միջին Յունաստանի այսինքն Ատտիկէի: Այս նահանգը է բարձր լեռնային երկիր, որ հեռաղհետ դէպ ի արևելք և արևմուտք կցածանայ և կձևացնէ Սունեան հրուանդանը:

Միւս բլուրներից երևելին է Պենթելիկոն, ուր կայ մարմարեայ հանք Աթենացւոց շինութեան համար է և Լաւրեանը երևելի հանք արծաթի և արճճի:

Աթենքն է Ատտիկէի հարաւային արևմտեան կողմը ծովեզերքի մօտ: Քաղաքի մէջտեղը կբարձրանայ փոքր բլուր, շրջապատած էր առանձին պարսպով և չորս կողմը շինած էին տաճարներ, արձաններ, և հասարակաց շինութիւններ, այն տեղը կկոչուէր Ակրոպոլիս:

Աթենացւոց գլխաւոր նաւահանգիստն էր Պիրեոն, նա էլ մէկ ահագին քաղաք էր Աթէնքի հետ միացած երկու պարիսպներով: Աթէնքը իւր ծաղկեալ ժամանակը ունէր 180000 բնակիչ. իսկ Ատտիկէի ժողովուրդն էր ընդ ամենը կէս միլիոն, այն էլ մեծ մասը ստրուկ:

Առասպելը կպատմէ թէ Աթէնքի մէջ այսպէս բարձաւ թագաւորութիւնը: Երբ Դորիացիք քոչվեցան ի հարաւ որ Պեղոպոնեսի տիրեն, Դորիացւոց մէկ մասը յարձակեցաւ Յոնիացւոց վերայ որոնք Ատտիկէ կբնակէին: Յոնիացիք պատգամախօսին հարցրին թէ յաղթութիւնը որ կողմը կլինի, նա պատասխանեց թէ այն կողմը որի թագաւորը կսպանուի պա-

տերազմում։ Աթենացւոց Թագաւորը Կոդրոս լսելով այն, ծպտեալ կերպարանօք որպէս զինուոր՝ դնաց Թշնամեաց բանակը, սկսեց նրանց մէջ աղմուկ յարուցանել, Թշնամիքը զզուելով սպանեցին նրան։ Երբ Դորիացիք իմացան որ այն Կոդրոսն է, շատ վախեցան։ Այն ժամանակ Աթենացւոց երևելի ազնուական իշխանները (Եւպատրիդները) յայտնեցին որ այսպիսի անձնաղոհ Թագաւորից յետոյ ոչ ոք արժանի չէ արքայական Թագը կրելու. Թագաւորական իշխանութիւնը մի քանի բարձրաստիճան մարդկանց վերայ բաժանվեց, որոնք Արխոններ կկոչուէին, և կընտրվէին Եւպատրիդներից, Աթէնքում սկսուեց ազնուապետական հասարակապետութիւն։ Եւպատրիդները մեծաւ մասամբ աշխատում էին իրանց օգտի համար, և կնեղացնէին ստորին կարգը. մանաւանդ նորանք շատ վատ կվարուէին իւրեանց պարտատէրների հետ, և որոնք չէին կարողանում իւրեանց հարկը տալ՝ նոցա ստրուկ կդարձընէին. այս պատճառաւ անբաւականութիւնը շատացաւ, և կաշխատէին որ ազնուականներին իշխանութիւնից զըրկեն, որով ծագեցաւ շփոթ ու խառնակութիւն։ Ժողովուրդը պահանջեց որոշեալ օրէնքներ, Եւպատրիդները յանձնեցին արխոն—դրակոնին որ նա դրէ նորանց համար օրէնքներ, բայց նա դրեց սաստիկ օրէնքներ, որոնք շատ խիստ էին ժողովրդեան համար. շփոթը կրկին նորոգեցաւ, և դադարեց Սողոնի ձեռամբ։

Սողոնը երևելի ցեղից էր, բայց խեղճ լինելով՝ վաճառականութեամբ պարապեց, բաւական ճանա-

պարհորդութիւն անելուց զկնի իւր հանձարով մեծ պատիւ ստացաւ, և այս յետագայ յաղթութիւնը եղաւ պատճառ, որով ժողովուրդը նրան առաւել սիրեց։

Ատիկէի եղերքին մօտ, Աթէնքի նաւահանգստիցը փոքր ինչ հեռու կայ Սաղամինա կղզին։ Մեգարան Ատիկէի դրացի հասարակապետութիւնը նորանցից խլեց այս կղզին, Աթենացիք հնարք չգտան այն կղզին առնելու ու օրէնքով մահ նշանակեցին, նրան ով որ կնորոգէ և կհամոզէ պատերազմ այն Սաղամինա կղզւոյ համար, վասն զի քանի մի անգամ պատերազմել էին և մեծ վնասուց ենթարկուել։ Այն ժամանակ Սողոնը իրան ցնորեալ ձևացնելով հրապարակ դուրս եկաւ ու կարդաց իւր բանաստեղծութիւնը Սաղամինայի վերայ գրած և այնպէս ոգևորեց երիտասարդաց որ նրա պահանջմամբը մահուան վճիռը փոխեցին. շուտով նոր զօրք կազմեցին Սողոնի առաջնորդութեամբ, և նա կարողացաւ կղզին յետ առնել։ Պատերազմից երբ վերադարձաւ նրան Արխոն ընտրեցին, և ժողովուրդը խնդրեց որ դրէ նրանց համար օրէնք։ Սողոն կատարեց այն գործը մեծ յաջողութեամբ (594 թ. նախ քան Քրիստոսի ծնունդը) առաջ Սողոնը թեթևացրեց պարտատէրներին, և արգելեց նրանց ստրուկ դարձնելը, յետ այնորիկ բաժանեց քաղաքացիներին ոչ թէ ծագմամբ, ինչպէս առաջ էր, այլ հարստութեամբ։

Հարուստ վաճառականները առաւել մեծ հարկ կտային, և ծանր զինաւորեալ կերթային պատերազմ,

այնու աղագաւ նոքա մեծ իրաւունք ունէին հասարակաց պաշտօններում։ Կառավարութեան գլխաւոր իշխանութիւնը ազգային ժողովոց ձեռքը անցաւ, որ իւրաքանչիւր տարի կընտրէր նոր Երիտոններ. ժողովը կլուծէր պատերազմի և խաղաղութեան խնդիրները և օրէնք կհրատարակէր։ Այն տեղ գործքերը յառաջագոյն կխորհէին, իւրաքանչիւր քաղաքացի կարող էր ատեանը բարձրանալ և իւր կարծիքը ժողովքին յայտնել, այնպիսի մարդիկ հռետորք կկոչուէին. հասարակութեան գործքերը վճռելու համար ազգային ժողովը կընտրէր չորս հարիւր մարդ՝ որոնք խորհուրդ կկազմէին, բաց յայսմանէ Աթենքումը կար Երիսպագոս կամ բարձրագոյն դատարան, որ սահմանած էր գըլխաւոր կամ քրէական յանցանաց համար։ Երիսպագոսի անդամները կընտրուէին այն արխոններից որոնք իւրեանց պաշտօնը վարել էին արդարութեամբ և անաչառութեամբ։ Երիսպագոսի նիստը գիշերը կլինէր, բաց տեղ, երկնքի տակ, կերոնները վառած։ Ամբաստանողը և ամբաստանեալը իւրեանց ճառերը կարդալով դատաւորների առաջ՝ առանց հռետորական ճարտարութեան իւրեանց գործը պարզ կպատմէին, և վերջը իւրեանց խոսացածը երդմամբ կհաստատէին։ Երբ որ վճիռ տալու ժամանակը կհասնէր, իւրաքանչիւր անդամը կառնէր մէկ մէկ քար և կձգէր կամ գթութեան արկղը կամ մահուան. յետոյ քարերը համարելով՝ որ կողմը շատ կլինէր, այն կողմը կվճռէին գործը. իսկ եթէ երկու արկղում հաւասար թիւ լինէր, այն ժամանակ գթութեան կողմը կվճռ-

ռէին։ Ազգային ժողովքը սաացաւ ծայրագոյն իշխանութիւնը ու հետամուտ էր իւրաքանչիւր գործքին այնուհետև ցեղի ազնուութիւնը առանձին արտօնութիւն չունէր, և Աթենացւոց ազնուապետական հասարակապետութիւնը փոխուեցաւ ռամկապետութիւն. բայց Աթէնքում ժողովուրդ ասելով բոլոր ժողովուրդը չէր, այլ միայն բուն Աթէնացիք էին, որոնց թիւը շատ սակաւ էր. միայն նոքա իրաւունք ունէին նստելու ազգային ժողովքում և վարել հասարակաց պաշտօնները, (որպէս Սպարտացիք Լակոնիայում)։ Բայց Աթենքի մնացած ժողովուրդը. և Ատտիկէի միւս քաղաքների ժողովուրդը միայն վաճառականութեան արհեստիւ և երկրագործութեամբ կ'պարապէին. կառավարութեան կողմանէ ոչինչ մաս չունենալով։ Գիւղացիք և քաղաքի ծառայից մեծ մասը ստրուկ էին։ Սողոնը մանկանց կրթութեան համար, որպէս և Լիկուրգոսը, մեծ ուշ դարձրուց։ Աթենացւոց երեխայքը ուսումնարանում կպարապէին մարմնակրթութեամբ՝ մարմնոյ ամրութեան և առողջութեան համար, բայց առաւել կըպարապէին մտաւոր զարգացմամբ և նուագարանով։ Նրանց գլխաւոր ուսանելի առարկան էր առանց գրքի ուսանիլ Հոմերոսը, և ուրիշ Յունաց բանաստեղծութիւնները։

Սողոնի աշխատութեամբ Աթենքը քիչ ժամանակում ծաղկեց ուսմամբ, և դարձաւ ամենահարուստ տէրութիւն Յունաստանում։

Աթենացիք մեծ ուշադրութիւն դարձրին ծովային վաճառականութեան վերայ, որոյ համար կաղմեցին երեւելի նաւատորմիղ։

Սողոնը նրանց երդմնեցոյց՝ որ կատարեն նորա օրէնքները տասն տարի, և ինքն գնաց ճանապարհորդելու (Սողոնը եօթն իմաստուններից մէկն էր)։ Բայց շուտով Աթենքում շփոթ ծագեց, հարուստ ու խեղճ քաղաքացիների մէջ, այսինքն աղնուականների և ժողովուրդների։ Ժողովրդոց առաջնորդը դարձաւ խելացի և ճարտար Պիսիստրատը, Սողոնի ազգականը. նա աղնուականաց յաղթեց, առաւ Ակրոպոլիսը, և ծայրագոյն իշխանութիւնը. և ինքն դառնալով Աթենքում բռնակալ (500 թուին), բայց խոհեմ կերպիւ կկառավարէր։ Սողոնի օրէնքները կպաշտէր առանց փոփոխութեան։ Նրան ժառանգեցին նորա որդիքը Հպպիասը և Հիպարքոսը, երբ Հիպարքոսը սպանուեց երկու Աթենացի երիտասարդներից, վրէժը առնելու աղագաւ Հպպիասը սկսեց սաստիկ վարվել ժողովրդեան հետ, Հպարքոսի սպանող երիտասարդներին սպանել տուաւ, և սկսեց քննել թէ ուրիշ ով կար նրանց օգնական այն մարդասպանութեան ժամանակ։ Վերջը Հպպիասը էլ արտաքսուած Աթենքից՝ փախաւ Դարեհ Վշտասպեանի մօտ։ Աթենացիք Հիպարքոսին ըսպանող երկու երիտասարդաց վերայ արձան կանգնեցրին։ Այն ժամանակ համարեա բոլոր Յունաց հասարակապետութեանց մէջ խռովութիւն էր ծագուել՝ աղնուականաց և ժողովրդոց մէջ, և ժողովրդեան

Առաջնորդացը միշտ կ՚յաջողուէր իշխանութիւն ձեռք բերել, նոքա կոչուեցան պերճ այսինքն բռնաւորներ, իւրեանց իշխանութիւնը կ՚պահպանէին թիկնապահ զօրաց օգնականութեամբ, և անհնազանդ ժողովրդեան երկիւղ կտային սաստիկ պատիժներով։ Բացի Պիսիստրատից ուրիշ բռնակալներ ևս կային, ինչպէս Սամոս կղզւոյն վերայ Պոլիկրատէսը, և Սիրակուս քաղաքում Սիկիլիա կղզւոյ մէջ Դիոնեսիոսը։) Ընհասարակ երբ մէկ կողմը կ՚յաղթէր, միւսին կ՚սկսէր ճնշել, նրանք էլ շատ անգամ ստիպուած կըհեռանային իւրեանց հայրենիքից ու կգաղթէին ուրիշ երկիրներ, և այն էր պատճառը որ հետզհետէ Յունաց գաղթականաց թիւը շատացաւ։ Յունաց գաղթականք կ՚բնակուէին Միջերկրական ծովու եզերաց մօտ։ Բուն Յունաստանի արևելեան և արևմտեան կողմերը։ Արևմտքում Յոյնք կաղմեցին անթիւ տեղեր գաղթականաց՝ մանաւանդ հարաւային Իտալիայում և Սիկիլիայ կղզւոյն մէջ, որոց ամենահարուստ քաղաքները էին Տարենտոն և Սիրակուսա։ Բաց ի նոցանէ երևելիքը էին երկու քաղաքներ, հարաւային Իտալիայում՝ Կրոտոնէ և Սիպարիս։

Հարուստ Սիպարացիք անուանի էին իւրեանց շռայլ կեանքով, նոքա իւրեանց դրացի Կրոտոնացւոց շատ թշնամի էին, իսկ վերջը Կրոտոնացիք յաղթեցին. և բոլորովին Սիպարիսը քանդուեց, այն յաղթութեան պատճառն էր Կրոտոնացւոց պարզ կեանքը, այն էլ (Ա. դարում նախքան Ք. Ծ.)։ Պիւ-

թագորասի հայրենիքն էր Սամոս կղզին, ուր այն ժամանակ կթագաւորէր Պոլիկրատէս բռնակալը, Պիւթագորասը սկսեց վարուց ուղղութիւն քարոզել, բայց վերջը հայրենիքից հեռանալով գնաց հարաւային Իտալիա՝ ուր Կրոտոնէ քաղաքում գտաւ շատ աշակերտներ, այնտեղ կազմեց Պիւթագորեան ընկերութիւնը՝ որոյ անդամները կ՝հաստատուէին մի քանի ամեայ փորձից յետոյ։ Պիւթագորեանք շատ խիստ կեանք կ՝վարէին, և շատ կ՝յարդէին իւրեանց վարժապետին։ Սրանք կարողացան քաղաքական իշխանութիւն ձեռք բերել ու կառավարեցին մի քանի տարի, յետոյ նորա հակառակորդները ժողովուրդը գրգռելով կարողացան նրան Կրոտոնից արտաքսել։

Երևելքում փոքր Ասիոյ եղերաց և մերձակայ կղզեաց մէջ Յունաց անթիւ քաղաքներ կային, որոնք իւրեանց վաճառականութեամբ ծաղկեցան և հարստութիւն գտան, նրանցից երևելիքն էին Եփեսոս ուր կար երևելի տաճար Արտեմիս չաստուածուհոյ, այս տաճարը այրեց յիմար Երոսդրատը ասելով թէ ես սրանով կարող եմ անունս պատմութեան մէջ անմահացնել, վասն զի ուրիշ ճիրք չունիմ որով պատմութեան մէջ յիշվեմ։ Մելիտինէ շատ վաճառաշահ և հարուստ. Սամոս, Ռիոս, Լեն։ Այս քաղաքաց աղատութեան համար Յոյնք շատ պատերազմեցան Պարսից հետ։

Փոքր Ասիայի Յունաց քաղաքները Կիւրոսից ըսկսուած Պարսից իշխանութեան ներքոյ էին։ Դարեհ Մեծասպեանի թագաւորութեան ժամանակը ապըս-

տամբութեան օրինակ դարձաւ Մելիտինէ քաղաքը, որոց օգնութիւն հասան Աթենացիք, բայց միւս Յոյները օգնութիւն չտալով՝ խռովութիւնը շուտով դադարեց ու Մելիտինէ քանդուեց Պարսիկներից (500 թ. Ն. Ծ. Ա.)։ Դարեհ սրանով չբաւականացաւ փախստական Եպպիասից համոզուած՝ կամեցաւ պատժել Եւրոպայի Յունաց, մանաւանդ նեղանում էր Աթենացւոց վերայ։ Կ'պատմեն թէ նա իւր ծառայից մէկին պատուիրել էր, որ ամենայն օր հացկերութեան ժամանակ կրկնի յետագայ բառերը, "Թագաւոր, միտդ բեր Աթենացւոց,,։ Վերջապէս Դարեհը դեսպաններ ուղարկեց Յունաստան որ նրանցից պահանջեն հող և ջուր, որ նշան էր նուաճման և հպատակութեան։

Յոյնք վախեցած Պարսից ահռելի զօրութիւնից, մեծաւ մասամբ նոցա պահանջմունքը կատարեցին, իսկ Աթենացիք և Սպարտացիք ոչ թէ միայն մերժեցին, այլև կոտորեցին Պարսից դեսպաններին։

Պարսից բազմաթիւ զօրքը մօտ 100,000 հասաւ Ատտիկէի արևելեան եզերքը Մարաթոն քաղաքի մօտ 490 թուին, Աթենացիք պատրաստ ունենալով միայն տասը հազար զօրք, օգնութիւն խնդրեցին Սպարտացիներից, որոնք թէև խոստացան՝ բայց ըստ սովորութեան չկամեցան պատերազմի ելնել, պատճառ որ դեռ լուսինը չէր լրացել, այն պատճառաւ յուշացան։ Բայց Աթենացիք իւրեանց զօրապետ Միլտիադէսից քաջալերուած՝ քաջութեամբ պատերազմ սկսեցին Մարաթոնի դաշտին մէջ։

Միլտիադէս խմանալով Պարսից սովորութիւնը, մէջտեղը վատ զօրքը կանգնեցրուց, այն էր խումբ ստրկաց, իսկ երկու կողմը ընտիր զօրք, և Պարսիկները թափուեցան մէջտեղն թոյլ զինուորաց վերայ։ Յանկարծ երկու կողմից Յունաց քաջ զօրքերը վրայ հասան ու բոլորովին ջարդեցին Պարսիկներին, որոնցից շատերը նաւերով հաղիւ ազատուեցան, ու իւրեանց բանակը թողին Յունաց ձեռքը։ Կ'պատմեն թէ Պարսիկները բերել էին շատ շղթաներ գերիների համար ու մէկ գեղեցիկ մարմարեայ կոթող, որ պէտք է մնար այնտեղ իբր յաղթութեան նշան։ Յետ այնորիկ Միլտիադէսի խորհրդով Աթենացիք կազմեցին նաւատորմիղ և ուղարկեցին որ տիրած կղզիները յետ առնեն Պարսիկներից. բայց երբ Պարոս կղզոյ պաշարումն Միլտիադէսի համար անյաջող վերջացաւ, նորա քաղաքացիքը վճռեցին որ մեծ տուգանք տայ, նա չ'յօժարելով բանտը մնաւ և այն տեղ շուտով մեռաւ։ Միլտիադէսից յետոյ Աթէնքում ասպարէզ գտան երկու երևելի անձինք, Թեմիստոկլէս ու Արիստիդէս։ Արիստիդէսը մեծ պատիւ գտաւ իւր աղնուութեամբ ու արդարութեամբ, իսկ Թեմիստոկլէսը շատ մեծ ձիրք ունէր, և ընդ նմին փառասիրութիւն։ Մարաթոնեան պատերազմից յետոյ Թեմիստոկլէս սկսեց միշտ մտածել ու նեղանալ, բարեկամները երբ պատճառը կհարցնէին, կպատասխանէր թէ Միլտիադէսի փառքը մինչև անգամ ինձ կարգելէ ննջել և հանգստանալ, նորա ցանկութիւնն էր որ ինքն պատիւ գտնէ և դու-

շակերով, որ Պարսիկները նորից պատրաստվումն պատերազմելու համոզեց իւր ճարտարութեամբ Ա-թենացւոց, և նոցա բոլոր կարողութիւնը Լաւրիոնի հանքերի արծաթը համարեա վատնեց, նաւեր շինել տուաւ ու ահագին նաւատորմիղ կազմեց: Ար-դարև Պարսիկք շուտով երևեցան: Դարեհ վշտասպեան պատրաստվումը պատերազմի, բայց վախճանեցաւ: Սորա ժառանգ Քսերքսէսը գնաց Յունաց դէմ անթիւ զօրքով երբ Եւրոպան պէտք էր անցնէին հրամայեց որ Հելլեսպոնտոսի վերայ նաւերից կամուրջ շինեն:

Յամաքային զօրքը անցաւ Թրակիոյ կողմից (Ե-դեան ծովից դէպի Հիւսիս): Իսկ եզերքի մօտ նրանց կհետևէր ահագին նաւատորմիղը. Աթոս լերան մօտ սկսեցին ջրանցք փորել երեք տարի աշխատեցին: Աթոս լեառը շատ երկիւղալի էր նաւերի համար: Յոյնք կպատմեն թէ Քսերքսէսի զօրքը երկու միլիոն էր որոնք կազմուած էին զանազան հպատակ ազգերից: Այն զօրքի մէջ կային թագաւորական զօրքեր որոնց վրայ կփայլէր ոսկեձոյլ զրահներ, Պարսիկները հագնումէին գոյն զգոյն շորեր, սրածայր գլխարկներ, նիզակները և նետերը ձեռքին: Եթովպացիք մարմի նրն ներկուած, ուսի վերայ ձգած առիւծի կամ վագրի մորթ, գլխարկի տեղ էլ ձիու գլուխ էին:

Պարսկաց զօրքը արտաքին երևութից սարսափելի էր, բայց պատերազմի ժամանակ միմեանց չէին հասկանում, վասն զի զանազան ազգերից էին կազմուած. և կպատերազմէին որպէս ստրուկներ՝ զօրա-

պետի հրամանաւ, շատ վատ էին զինաւորուած և զինուորական կարգ էլ չկար բոլորովին։ Նրանց պատերազմը միշտ մեծ ծախք կուներնար, վասն զի իւրեանց հետ ունէին շատ ծառայք, և կանայք՝ որ նոցա երևելի անձանց սովորութիւնն էր։

Յունաց զօրքը թէպէտ սակաւաթիւ էր, բայց սաստիկ կարգաւորեալ էր, քաջ զինուորներ ունէին, պղնձեայ և երկաթեայ սպառազինութեանց մէջ, որոնք վառված էին հայրենեաց աղատութեան համար, մանաւանդ Սպարտացիք և Աթենացիք։ Մի քանի հազար Յոյնք Սպարտացւոց թագաւոր Լեոնիդասի իշխանութեան ներքոյ Թերմոպիլէի կրճումը սպասում էին Խսերքսէսին։ Խսերքսէսը նրանց դեսպան ուղարկեց որ նոքա իւրեանց զէնքը տան, Լեոնիդաս պատասխանեց Լակոնական ոճով, թէ Ե՛կ և առ։ Ամբողջ օրը Պարսիկները զուր աշխատեցին, Յունաց քաջութեանը չկարողացան ընդդիմանալ. վասն զի Յոյնք իւրեանց նիզակներից պարիսպ էին կազմել. Պարսիկներից շատերին կոտորեցին, բայց Յոյներից մէկը Պարսից ուրիշ ճանապարհ ցոյց տուաց։ Այն ժամանակ Լեոնիդասը տեսնելով իւր թշուառութիւնը, օգնական զօրքերը թողաւ և 300 ընտիր զօրքով ընկաւ թշնամեաց վերայ։

Այն պատերազմումը սպանուեցան ինքը և իրեն զօրքը, վերջը այնտեղը արձան կանգնեցրին մէկ Առիւծ՝ որոյ վերայ գրած էր թէ «Ով պանդո՛ւխտ, յայտնի՛ր Սպարտայի, թէ մենք երեք հարիւր անձինք մեր՝ այրենեաց օրինաց հաւատարիմ գոլով այս տեղ սպանուեցանք։

Պարսիկները յետոյ մնան միջին Յունաստուն, Ատիկէն աւերեցին, Աթէնքն էլ այրեցին։ Բայց Ատիկէի ժողովուրդը Թեմիստոկլէսի խորհրդով կարողացան նաւերով փրկուել ու գնացին Սաղամին կղզին։

Ատիկէի ու Սաղամինա կղզոյ մէջ եղած նեղուցի վերայ կապասէր Յունաց միացեալ նաւատորմիղը։ Ծովակալ Եւրիպիադէս Սպարտացւոց թագաւորը կամեցաւ Պեղոպոնէսին մերձենալ. բայց խորագէտ Թեմիստոկլէսը կհասկանար այն պատերազմին բոլոր օգուտները համոզեց Յունաց, որ նոքա իւրեանց տեղից նաւատորմիղը չշարժեն։ Ինքը դաւաճան ձեւանալով խաբեց Քսերքսէսին, իբր թէ Յոյնք կցանկան փախչել, այս տեսնելով Քսերքսէսը խաբուեց և հրամայեց որ Սաղամինայի նեղուցը երկու կողմից նաւերը փակեն, այն ժամանակ Յոյնք ստիպուած դուրս եկան նեղուցից. Պարսից նաւերը ազատ չէին կարող շարժել մեծութեան պատճառաւ, իսկ Յունաց նաւերը փոքր և արագաշարժ լինելով բոլորովին Պարսից ջարդեցին Սաղամինայի պատերազմում (480 թուին նախ քան Ք. Ծ)։ Կ'պատմեն թէ Քսերքսէսը Ատիկէի եզերքի բարձր լեռան վերայ նստած կնայէր պատերազմին վերայ երբ տեսաւ, որ իր զօրքը յաղթուեց քաջութիւնը կորցնելով ինքը վերադարձաւ յԱսիա, և Յունաստանում թողեց իւր Մարդոնիոս փեսային երեք հարիւր հազար ընտիր զօրքով. միւս տարին Պլատէա քաղաքի մօտ (Ատիկէի ու Բէոտիոյ սահմանի մօտ) նոր պատերազմ սկսուեց, ուր

և ջարդուեց Մարդոնիոսը իւր ընտիր զօրքով՝ Պաւսանիաս Սպարտացւոց թագաւորից, Պարսկաց մնացորդները դնացին Ասիա, և այնպիսի հնարքներով և քաջութեամբ յաղթեցին իւրեանց բարբարոս թշնամեաց փայլեցան անմահ, քաջութեամբ և փառօք։

Մինչև Պարսից այս պատերազմը նախագահութիւնը Սպարտացւոց ձեռքն էր, այսինքն նոցա թագաւորներն էին առաջնորդում Յունաց միացեալ զօրաց, բայց յետոյ առաջնորդութիւնը անցաւ Աթենացւոց ձեռքը. վասն զի Պլատեայի պատերազմից յետոյ ծովային պատերազմներ եղան Սպարտացիք նաւեր դրեթէ չունէին բայց Աթենացիք ահագին նաւատորմիղ ունէին, երկրորդ որ Սպարտացւոց վընասեց իւրեանց Պաւսանիաս թագաւորի վարքը. նա շատ հպարտ կ'վարուէր իւր դաշնակից Յոյների հետ որ բոլորովին հակառակ էր Սպարտացւոց օրինաց, և սաստիկ շռայլ էր վերջը գաղտնի բարեկամութիւն ունեցաւ Խսերքսէսի հետ, երբ նորա դաւաճանութիւնը լսեցին և պատրաստվումէին սպանելու, փախաւ և մտաւ տաճարը, տաճարները նոցա համար անմերձենալի էին. ո՞վ որ կ'մտնէր տաճարը, կ'փրկուէր, այն տեղից ո՛չ ոք չէր կարող նրան դուրս բերել. բայց Սպարտացիք դուռը քարով փակեցին. և Պաւսանիաս այն տեղ սովամահ կորաւ, կպատմեն թէ առաջին քարը նրա մայրը դրաւ։

Աթենացւոց զօրապետները Արիստիդէս և Կիմոն (Միլտիադէսի որդին) մեծ համարումն ստացան Յոյ-

ներից, Արիստիդէսի ազնուութիւնը տեսնելով յանձնեցին նրան հասարակութեան դանձը, ուր դաշնակից Յոյները փող կ՚ժողովէին պատերազմի համար։ Հարուստ Կիմոնը իւր անունը հռչակեց առատութեամբ, քաղցր վարմունքով ու յաղթութեամբ Պարսից և կղզեաց վերայ փոքր Ասիոյ եղերքի մօտ։ Այսպիսի յաղթութիւններով նա ստիպեց Պարսից որ խաղաղութեան դաշը կապեն և փոքր Ասիոյ Յոյներին ազատ համարեն։

Թեմիստոկլէս Արիստիդէսին իւրեան թշնամի էր համարում, ու այնպէս արեց որ Արիստիդէսին առ ժամանակ արտաքսեցին հայրենիքից խեցեկոյտ վրձռով, այն պատճառաւ որ ժողովրդեան դէպի նա ունեցած համարմունքը վնաս էր հասարակապետութեան, ու նա կարողէր վերջը բռնակալ լինել։

Բայց վերջը ինքն Թեմիստոկլէսը ևս արտաքսուեց, շատ թափառելուց հետոյ գնաց Պարսից թագաւորի մօտ, ու այնտեղ՝ ինչպէս կ՚պատմեն՝ թոյն ընդունեց որ իւր հայրենեաց հակառակ Պարսից չ՚ծառայէ։

Պելոպոնէսի պատերազմը և անկումն Յունաստանի։

Թեմիստոկլէսից, Արիստիդէսից և Կիմոնից յետոյ Աթենքի հասարակապետութեան մէջ առաջին տեղը ժառանգեց Պերիկլէս։ Աթենացւոց ազգային ժողովքում իւրաքանչիւր քաղաքացին կարող էր իրան կարծիքը յայտնել, այս պատճառաւ ճարտար հռետորները ստացան մեծ նշանակութիւն թա-

գաւորութեան գործոց մէջ. Պերիկլէսը իւր ճարտարութեամբ ու հանճարով բարձրացաւ։ Նա երեւելի ցեղից էր, հարուստ, առատ և դեղեցիկ, ոչ մի Աթենացի իւր վերարկուն այնպէս չէր հագնում, ո՛չ մի հռետոր իւր ճառախօսութեան ժամանակ այնպէս հանգիստ և յարմար չէր շարժում՝ ինչպէս Պերիկլէսը։ Նա դարձաւ ժողովրդեան սիրելի ու մօտ 19 տարի նա առաջնորդեց Աթենացւոց, զրեթէ առանց թշնամեաց, և շատ էր աշխատում որ իւր հայրենիքը հարստացնէ։ Պարսից հետ պատերազմը այն ժամանակ դադարեց, բայց Աթենացիք սարսռումէին իւրեանց դաշնակիցներին (այսինքն Յունաց փոքր տէրութեանց մանաւանդ Արշիպեղագոսի կղզեաց) որ Հասարակութեան գանձարանին փող վճարեն պատերազմական ծախսուց համար։ Հասարակութեան գանձարանի փողը Պերիկլէսը ծախս արեց Աթէնքի պայծառութեան համար, երևելի տաճարներ շինեց, զանազան արձաններ ու պատկերներ կանգնացրեց, այսպիսի շինութիւններով լցուեց մանաւանդ Աթենացւոց ամրոցը կամ Ակրոպոլիսը, քաղաքից մինչև լեռը՝ որի վերայ շինուած էր բերդը՝ զարդարուած էր մարմարեայ պատշգամբ սիւնազարդ հովանոցաւ ծածկեալ, նա Ակրոպոլիսի դուռը կ՚համարուէր. Ակրոպոլի ներս շինուած էր Պարթենոն տաճարը ի պատիւ Աթէնք չաստուածուհւոյ, որ կը յիշուէր իբրև քաղաքին պաշտպան։ Այն տաճարը շինուած էր պատուական մարմարիոնից, և տաճարի ձևն էր երկար քառանկիւնի, չորս կողմը սիւնազարդ

Պարթենոնը համարուում է այժմ ամենագեղեցիկ յիշատակ Յունաց քանդակագործութեան, այն տաճարին մէջ կար մեծ և գեղեցիկ արձան Աթենաս չաստուածուհւոյ որ շինած էր երևելի Յունաց Փիդիաս քանդակագործից, որ Պերիկղէսի բարեկամն էր։ Յողովրդեան խնդրանօք Փիդիաս շինեց այն արձանը ամենաթանդ նիւթերից, փղոսկրից, որոյ հանդերձն էր ոսկիից, Աթենաս չաստուածուհւոյ միւս ահագին արձանը շինած էր դարձեալ Փիդիասի ձեռօք՝ գեղեն պղնձից՝ Մարաթոնեան պատերազմից բերած հարստութիւնից։

Այն արձանը կ՚ձևացնէր գեղեցիկ զինաւորեալ կին. որ կանգնած էր Ակրոպոլիսի ամենաբարձր տեղը, այնպէս՝ որ նաւապետները երբ գալիս էին Աթէնք Սունի հրուանդանի մօտ նորա երկաթեայ սաղաւարտին ու նիզակին ծայրն կերևէր։

Աթենացիք շատ կսիրէին զուարճալի տեսարաններ այնպատճառաւ ևս Պերիկղէսը շուտ շուտ թատրոններ էր ներկայացնում, տօնախմբութիւններ էր կատարում, ու զանազան հանդէսներ. նրա հրամանաւ տնանկաց դրամ կ՚բաժանէին որ թատրոն գնան։

Նոցա թատերգութիւնը լինում էր բաց՝ երկնքի տակ միայն, ժողովուրդը չորս կողմը կբազմէր մէկ լերան վերայ, և լերան ստորոտի մօտ նուագարաններ և սրինգներ կ՚հնչէին, նրանից յետ փոքր ինչ բարձր տեղ ներկայացման տեղն էր, խաղը միշտ ցերեկով էր լինում և առաւօտից կսկսէին, դերասանները, դիմակ ունէին իւրեանց դերին համեմատ կամ եղե-

երգական կամ ծիծաղական. Աթենացւոց բանաստեղծներից, որոնք կյօրինէին ողբերգութիւն, երևելիքը սոքա էին. Եսքիղոս, Սոփոկղ, և Եւրիպիդէս աւելի անուանի կհամարուէր Սոփոկղը։ Նորա բազմաթիւ ողբերգութիւններից երևելին էր Եդիպոս։ Լաւ կատակերգութիւն կդրէր նա և Արիստոփանէս որը կծիծաղէր Աթենացւոց զանազան պակասութեանց վերայ։

Այս բանաստեղծները Ե դարումն էին (նախ քան Ք. Ծ.) և մեծաւ մասամբ Պերիկղէսի ժամանակից։ Այն ժամանակ վաճառականութիւնը ու արուեստը շատ ծաղիկ էին Աթէնքում։ Բոլոր Յունաստանից այնտեղ կերթային հարուստ մարդիկ, որնոքա էլ Աթենացւոց պէս քաղցր կեանք վարեն, լսեն նոցա փիլիսոփաներին և հռետորներին, սովորեն Աթենացւոց քաղաքավարութիւնը, սրամիտ խօսակցութիւնը, նոցա հագուստը, ուրախութիւնը և այլն։

Աթենացւոց սովորութիւն էր լաւ կերակուր ուտել և լաւ ըմպելիք ունենալ սեղանի վերայ, նոքա կ'ճաշէին օրական զբաղմունքներից յետոյ այսինքն երեկոյեան։ Սեղանի վերայ նրանք չէին նստում. բայց թէկ էին ընկնում փոքրիկ աթոռների վերայ, ձախ ձեռքն էլ դնում էին բարձի վրայ. կերակուրը առանց դանակի ու պատառաքաղի կուտէին, երբ ճաշը հիւրերի համար կպատրաստէին, նրանք ծաղկեայ պսակներով կ'զարդարուէին և իւրաքանչիւրին առանձին սրուակ կ'ծառայէր. ճաշից յետոյ կլուացուէին,

յետ այնորիկ աստուծոյ գոհութիւն կ'տային. նոցա գոհութիւնը այս էր փոքր ինչ գինի կածէին գետնի վերայ, ու կ'աղօթէին. ստրուկները սեղանը վեր կառնէին, յետոյ կսկսէին արբեցութիւն, բայց մեծաւ մասամբ գինին ջրով կ'խառնէին: Ինչոյից ժամանակ կսկսէին ծաղրածութիւնք և կերգէին, երբեմն և պարգալ կսկսէին, քաղաքացւոց կանայք ու աղջիկները այնպիսի ինչոյից ժամանակ ներկայ չէին գըտնուել, նոքա միայն շատ երևելի հանդէսներին կ'պատահէին մարդկանց մէջ, իւրաքանչիւր հարուստ տան կանայքը առանձին կենային, ուր խոհեմ կերպիւ իւրեանց կեանքը կվարէին իւրեանց ստրուկների հետ՝ հիւսմամբ և կարելով պարապած:

Յունաստանում կանայք առաւել ազատ էին քան թէ արևելեան ազգաց մէջ:

Յունաստանումը կար առանձին կարգ՝ ազատ կանանց, որոնք ոչինչ օրինաց չէին ենթարկվում:

Սրանցից շատերը կաշխատէին մարդկանց հաճոյանալ՝ ոչ թէ գեղեցկութեամբ, այլ իւրեանց սրամտութեամբ և ուսմամբ:

Սրանցից երևելին էր Ասպասիա անունը Պերիկղէսի բարեկամը:

Յունաց քաղաքաց տները մեծաւ մասամբ անշուք էին նեղ ու ծուռ փողոցներ գեղեցիկ տները միայն հասարակաց կառավարութեան տներն էին. մանաւանդ տաճարները, հարուստ մարդիկ իրանց տները ներսից բաւականին շքեղ էին պահում, Յունաց հանդերձն էր պարեգօտ կարճ հանդերձը՝ ինչպէս շապիկ

գօտեորեալ. պարեգօտի վերայ կհագնէին երկար վերարկու ինչպէս Հռոմայեցւոցը։ Բայց վերարկուն քառանկիւնի բրդեայ կտոր էր. ձիաւորները կհագնէին քղամիդ կամ ամիլան առաւել լայն բայց կարճ. Յոյնք առանց գլխարկի կպտրտէին, վասն զի օդը տաք կլինէր. բայց ճանապարհին կծածկէին թաղեայ գլխարկ։ Նրանց ոտնամանն էր տրեխ, որ կաշի թելերով կկապէին, կանայքը նմանապէս էին հագնվում ինչպէս մարդիկ, միայն նրանց պարեգօտը փոքր ինչ երկար էր, և կանայքը կսիրէին զարդարուել մատանիներով և ականջ։

Աթենացիք Պերիկղէսի ժամանակ շատ ծաղկեցին իւրեանց փառքը ու զօրքը, բայց Աթենացւոց տէրութեան այն ծաղկեալ դրութիւնը երկարատև չէր, լեակատար իրաւունքներ ունէին միայն Աթէնքի բուն բնակիչքը. միայն նոքա կխառնուէին կառավարութեան գործքերի մէջ. և յայտնի բան է որ Ատիկէի մնացեալ ժողովուրդը կնախանձէր, թէպէտ և Յոյնք ուսումնական և կրթեալ ժողովուրդ էին արևելքում, այնու ամենայնիւ նրանց մէջ էլ կար ստրկութիւն, ինչպէս և ուրիշ ազգաց մէջ։

Ստրկութեան գլխաւոր պատճառը էր պատերազմը, ստրուկներին կծախէին իբրև անասուն, որոնք նոցա բոլոր գործքերը կկատարէին, թէ տանը՝ և թէ դաշտումը, հետ զհետէ ստրկաց թիւը կշատանար, և յայտնի բանէ որ նրանք աւելի չէին սիրիր տէրութեանը մանաւանդ որ շատերի հայրենիքն էլ չէր։

Սարկաց ապաւինելով՝ Յոյնք հետ զհետէ ծուլանալով իւրեանց համեստ կեանքը կորցրին, և սովորեցան իւրեանց ժամանակը հրապարակում անցկացնել զանազան գործոց վերայ խօսելով, միով բանիւ Աթենացիք սկսեցին հետևիլ խնջոյից և վայելչութեան, խեղճ քաղաքացիք օգնութիւն էին խնդրում հարուստներից, հարուստներն էլ փող էին տալիս որ նրանց կողմը անցնին և հասարակապետութեան մէջ ձայն ունենան ու քուէարկութեան ժամանակ պաշտօն ստանան. սրանից սկսուեց խառնութիւն Յունաց ազգութեանց մէջ։

Մանաւանդ Յունաց համար վնասակար էր Սպարտացւոց և Աթենացւոց մէջ եղած թշնամութիւնը, որ պատճառ եղաւ Պեղոպոնէսական պատերազմին։ Թշնամութեան պատճառն էր նախագահութիւնը կամ Հեգեմոնիան, Սպարտացիք կ՚ատէին Աթենացւոց այն պատճառաւ՝ որ Աթենացիները Պարսից պատերազմին վերջանալուց նախագահութիւն ձեռք բերին, բայց յայնմանէ՝ Աթենացիք Յունաց միւս քաղաքներում կաշխատէին պահպանել ժողովրդեան կողմը, և ճնշել ազնուականաց կարգը, բայց Սպարտացիք ընդհակառակն ազնուականաց միշտ պաշտպան կձևանային։ Պելքանեան թերակղզւոյն արևմտեան կողմը Աղրիական ծովի մօտ գտնուում էր Լիւրիկէ, Այն տեղ Աղրիական ծովեղերքի մօտ կար Յոյն գաղթականաց քաղաք (Եպիդամնոս) որտեղից ժողովուրդը արտաքսեց ազնուականներին։

Ազնուականաց օգնութիւն հասցրին Կորնթոս հարուստ քաղաքի Ժողովուրդը (Կորնթոսի պարանոցին վերայ), իսկ ժողովրդոց օգնեցին Կորկիւրայ (Քորվու) կղզւոյն բնակիչքը։ Վերջը Կորնթացւոց հետ միացան Սպարտացիք, իսկ Կորկիւրացւոց հետ Աթենացիք, ու քիչ միջոցում Յունաստանը բաժանուեց երկու մաս։

Աթենացւոց դաշնակից էին մեծաւ մասամբ կղզիները, ու նոցա գլխաւոր զօրութիւնն էր նաւատորմիղը, Սպարտացւոց կողմն էին Պեղոպոննէսի գրեթէ բոլոր տէրութիւններն այն պատճառաւ պատերազմն էլ կոչուեց Պեղոպոննէսական պատերազմ ու նոքա շատ հզօր էին իւրեանց ցամաքային զօրքով։ Պեղոպոննէսական պատերազմը տեւեց 27 տարի (431—404 Ք. Ծ.)։

Սպարտացիք յարձակուեցան Ատտիկէի վերայ և աւերեցին։ Շատ ժողովուրդ թաղչելու տեղ էին որոնում Աթէնքի պարսպաց մէջ։ Խաղմութիւնից տաք ամառուան ժամանակ ժանտամահ տարածուեց, և շատ ժողովուրդ ոչնչացաւ, ժանտամահին ղոհ եղաւ նաև ինքն Պերիկղէսը։

Այն ժամանակ նա հասկացաւ անգոհութիւնը փոփոխամիտ Աթենացւոց՝ որոնք Պերիկղէսին մեղաւոր անուանեցին այն ամբախտութեան մասին, երբ Պերիկղէսը մահուանից առաջ ուշաթափ ընկած էր. շրջապատող բարեկամները սկսեցին մտաբերել նորա գեղեցիկ յատկութիւններն ու ծառայութիւնները. դուք մոռացաք առաւել լաւը, յանկարծ ասաց Պե-

բիկղէսը, որ իմ կենաց մէջ ոչ ոքի չ'ստիպեցի որ սգաւորի հանդերձ հագնի, այսինքն անդորրութեան մէջ պահեցի Աթենացւոց։

Պերիկղէսից յետոյ Աթէնքում մի քանի ժամանակ բարձրացաւ Ալէոն՝ հարուստ մորթեգործը (ունէր կաշէ գործարան, ուր նորա ծառայք կպարապէին)։

Նա զօրապետ էր ընտրուած, յաղթուեցաւ Սպարտացւոց Պրասիդաս քաջ զօրավարից։

Ալէոնը ու Պրասիդաս երկուքն էլ սպանուեցան այն պատերազմում։ Այն ժամանակ Աթենացիք և Սպարտացիք հաշտուեցան. բայց հաշտութիւնը շատ չ'տեւեց, ու դարձեալ առաւել սոսկալի պատերազմ սկսուեց, որոյ գլխաւոր պատճառն էր Ալկիբիադէսը։ Ալկիբիադէսը հարուստ ու երևելի մարդ էր, բնութիւնը նորան բաւական գեղեցկութիւն էր պարգևել, և նա կփայլէր իւր հանճարով։ Սոկրատէս փիլիսոփային ամենասիրելի աշակերտներից մէկն էր, դժբախտաբար կվարէր շռայլ կեանք, և էր փոփոխամիտ, կամակոր ու չափից դուրս անձնասէր։ Յանկանալով փայլել քաջութիւններով, որ կարողանայ վերջը Աթէնքում իշխել, գրգռեց ժողովրդեան որ Սիկիլիա կղզւոյ վերայ պատերազմի գնան, ու Սիրակուսա քաղաքը առնեն, և մտադիր էր որ Սիկիլիա կղզին բոլորովին առնէ. վասն զի այն կղզին ցորենի կողմանէ ամբողջ Պեղոպոնէսը կբաւականացնէր, Աթենացիք գեղեցիկ նաւատորմիղ պատրաստեցին, նաւուց մէջ տեղաւորեցին ընտիր զօրք, և գլխաւոր կառավարութիւնը յանձնեցին Ալկիբիադէսին։

Պատերազմը յաջող սկսուեց, բայց յանկարծ Ա-թէնքից նաւ եկաւ որ Ալկիբիադէսին յետ տանեն, վասն զի երբ նա գալու էր պատերազմ, այն գիշերը վար էր ձգել և կոտրել էր շատ արձաններ Հերմէզ չաստուածուհւոյ, որոնք գտնվուէին փողոցներում մեծամեծ շինութեանց յառաջ, այնպիսի յանցանքը մեղք էր կրօնքի դէմ, և մեղաւորներին պէտք պատժէին։ Երբ որ զօրքը գնաց Սիկիլիա, Ալկիբիադէսի թշնամիքը տարաձայնեցին թէ Ալկիբիադէսի արած բանն է։ Այն ժամանակ ժողովուրդը խնդրեց որ դատաստանի կանչեն։ Ալկիբիադէսը ճանապարհին խաբեց զինուորներին և փախաւ։ Ա-թենացիք առանց նորա ներկայանալուն վճռեցին որ նրան սպանեն. այնպիսի վճռից զայրացած՝ գնաց Սպարտա, և համոզեց Սպարտացւոց որ նոքա օգնութիւն հասցնեն Սիկիլիոյ Սիրակուսա քաղաքին։

Սպարտացւոց զօրքը գնաց Սիկիլիա և ջարդեց Ա-թենացւոց որո՞նց շատերը գերի ընկան։ Այնպէս սկսուեց պատերազմը Սպարտայի և Ա-թէնքի մէջ ծովու ու ցամաքի վերայ։ Սպարտացիք յաղթող հանդիսացան. Ա-թենացւոց դաշնակիցները առաջուց անբաւական լինելով Ա-թենացիներից, հետ զհետէ հեռացան։ Երբ Ա-թենացիք նեղն ընկան դարձեալ, հրաւիրեցին Ալկիբիադէսին, որ արդէն ինքն էլ կը զղջար իւր դէպ ի հայրենիքը ունեցած դաւաճանութեան վերայ։ Նա շուտով վերադարձաւ, գործքերը ուղղեց և նրանով մեծ պատիւ ստացաւ։ Սակայն մէկ դժբախտութեան պատահեց ծովային պա-

տերաղմում, և փոփոխամիտ Աթենացիք դարձեալ նրան ամրաստանեցին. նա էլ ստիպուած՝ փախաւ ու կամենումէր գնալ Պարսից մօտ։ Սպարտացիք փոքր Ասիոյ կուսակալ լին (սատրապին) համոզեցին. որ Ալկիբիադէսին կամ սպաննէ կամ ուղարկէ. Պարսիկները որոնք նրա յետևից ուղարկված էին վախեցան, չկարողանալով նրա վերայ յարձակուիլ, նոքա այրեցին տունը ուր նա կմնար։ Ալկիբիադէս սուրը ձեռին դուրս ընկաւ բոցից, սկսաւ փախչիլ. բայց Թեւից նետով սպաննեցին։ Վերջապէս Աթենացիները բոլորովին յաղթուեցան Սպարտացիներից՝ Պարսից օգնութեամբ։

Խորամանկ ու հնարագէտ Սպարտացւոց զօրապետ Լիւսանդրը ջնջեց Աթենացւոց նաւատորմիղը փոքր Ասիոյ եղերքի մօտ, յետոյ յարձակվեցաւ Աթենացւոց վրայ, և Պիրեոնի ամրացեալ նաւահանգստի պատերը քանդեց սընդի վերայ երդելով։ Աթէնքում ժողովրդական կառավարութիւնը փոխուեցաւ սակաւապետութեան, (որ է մի քանի անձանց կառավարութիւն), այսինքն կառավարութիւնը յանձնած էր 30 աղնուականների, որոնց վերջը անուանեցին ‘‘երեսուն բռնակալ,,, նոցա կառավարութիւնը խիստ էր, սպանում էին շատերին, հարստութիւնից կզրկէին, կարտաքսէին Աթէնքից, և նրանց աշխատութիւնն էր միայն իրանց իշխանութիւնը հաստատել։

Այժմ Սպարտացիք իրենց նախագահութեան թշնամի էլ չունէին Յունաստանի մէջ։ Ամենայն

տեղ կաշխատէին որ ժողովրդական կառավարութեան պաշտպաններին ջնջեն ու ամենայն տեղ կը-հաստատէին սակաւապետութիւն Աթենացւոց բռնաւորաց նման։ Բայց նրանց խստութիւնից ծագեց նախանձ, և քանի քաղաքներում ապստամբութիւն, ամենից առաջ ապստամբեց Աթէնքը։ Աթէնքից արտաքսեալները խումբ կազմեցին ու բռնաւորաց վրայ յարձակեցան։ Նոքա բռնաւորաց ջնջեցին ու Աթէնքում կրկին նորոգուեց Սողոնի օրէնքը։

Սպարտացւոց սակաւապետութեան լծի տակ ընկաւ Թեբէն։ Բայց Թեբէի փրկողները այս երկու քաջ մարդիկ եղան, Պելոպիդաս և Եպամինոնդ։ Պելոպիդասը ժողովեց Թեբէի արտաքսեալներին, զօրք կազմեց ու մտաւ գիշերով քաղաք։ Նոքա պարեկողի շորերը էին հագել, և մտան այն տունը՝ ուր բռնակալները խնջոյք ունէին. յարմար միջոց գտան ու սկսան կոտորել նրանց, յետ այնորիկ Սպարտացւոց զօրաց ստիպեցին որ Թեբէի ամրոցէն հեռանան (379 թ.)։ Սպարտացիք այս անցքը լսելով՝ Թեբէի վրայ մեծ զօրք ուղարկեցին։ Թեբացիք իշխանութիւնը յանձնեցին Պելոպիդասի բարեկամ Եպամինոնդին, որ իւր խոհեմութեամբ մեծանուն էր հռչակել. բայց իւր տաղանդը ոչ ոքի չէր ցոյց տալի։ Նա այնպէս կարգաւորեց Թեբէի անթիւ զօրքը. այնպէս քաջալերեց որ Սպարտացիք բոլորովին յաղթուեցան (Լեւկտրա քաղաքի մօտ)։ Թեբացիք, որոնք առաջ ծոյլ ու կոպիտ ժողովուրդ կ'համարուէին յանկարծ Յունաստանի մէջ առաջին եղան ու Սպար-

տացուց ձեռքից շատ քաղաքներ աղատեցին։ Թեբացիք իւրեանց պատիւը պահեցին այնքան ժամանակ, որքան Պելոպիդաս և Եպամինոնդը կենդանի էին։ Պելոպիդասը մեռաւ Թեսաղիոյ պատերազմում, Եպամինոնդասը մի քանի անգամ պատերազմեց Պելոպոնէսում Մանտինէայի (Արկադիայում) մօտ էլ ջարդեց նրանց, բայց այն պատերազմում ինքն էլ վիրաւորվեց և մեռաւ (362 թ.)։ Սրանց մահից յետոյ Թեբացիք դարձեալ առաջին դրութեան մէջ ընկան. բայց նոյն ժամանակ Սպարտացիք էլ թուլացած էին, և չէին կարողանում նախագահութիւնը ձեռք բերել։ Առհասարակ այն ժամանակ Յունաստանը խղճալի դրութեան մէջ էր։ Քաղաքները իւրեանց հարստութիւնը հետ զհետէ կվատնէին՝ միմեանց հետ պատերազմելով, դէպի հայրենիք ունեցած անկեղծ սէրը և ազնուութիւնը խսպառ վերացաւ։ Սպարտայի մէջ էլ անհետացաւ նախկին կարգը և թագաւորից շռայլութիւնը։ Այն իմաստասիրաց՝ որոնք կաշխատէին իւրեանց դաւանութիւնից հեռացնել կռապաշտութիւնը ու զանազան սնապաշտութիւն սկսան հալածել, ինչպէս Սոկրատէսին կտեսնեմք։ Սոկրատէսը Աթենացի քանդակագործի որդի էր, մանկութիւնից կ'ուսանէր հօր արհեստը, վերջը հաւատարմութեամբ կծառայէր իւր հայրենեաց զօրքում ու քաղաքական պաշտօններում։ Սկսելով ամենայն տեսած ու լսած բանի վրայ քննութիւն անել, մտածել, վերջը իմաստասիրական ձիրք ստացաւ։ (Պատմեն թէ երբեմն այնպիսի խորին մտած-

մանց մէջ կընկղմէր որ ամբողջ օր իւր տեղից չէր շարժի), կվարէր պարզ և չափաւոր կեանք ու բոլորովին գոհ էր իւր խեղճ վիճակից, բայց նորա Քսանդիպպէ ամուսինը իրան չէր նմանի, այն անկիրթ ու խառվասէր կինը ամենևին չէր գնահատում իւր ամուսնոյ փիլիսոփայական պարապմունքը, միշտ կընեղացնէր Սոկրատէսին որ նա նիւթական հարստութեան վրայ չէ մտածում, բայց իմաստունը համբերութեամբ կտանէր բոլոր նեղութիւնները։ Սոկրատէսը առ սակաւ սակաւ սկսեց քարոզել Աթենացի երիտասարդաց առողջ մտքեր մարդոյս վրայ, վերին տեսչութեան վրայ որով աշխարհս կառավարի և այլն։ Իւր մտքերը ամենայն տեղ կյայտնէր՝ ուր որ ունկնդիրք կգտնուէին, թէ՝ փողոցում, թէ հրապարակում, թէ տաճարների՝ ուսուցիչների սրահներում։ Վերջը շատ հետևող գտաւ։ Ամենք հարուստ երիտասարդներ, թողնելով Սոփեստէսների դասերը (այսինքն իմաստասիրութեան և ճարտասանութեան դասերը) կգային Սոկրատէսի մօտ։ Սոփեստէսները, որ միայն փող ու պատիւ կորոնէին, Սոկրատէսին սկսան ատել իբրև իւրեանց երկիւղալի թշնամի։ Շատերը՝ որ չէին կամենում լսել նորա վարժապետութիւնը, նոքա էլ կընդդիմանային։ Ինչպէս, օրինակի համար Արիստոփանէս իւր ''Ամպ,, ասուած կատակերգութեան մէջ կ'պատմէ թէ երբ նրան կներկայացնէին թատրոնում, ինքն էլ ներկայ գտնուեց և կծիծաղէր պակասութեանց. վերայ բարեկամներից մէկը նրան ասաց թէ դու ինչո՞ւ ես եկել թատ-

բոն, այսօր քեզ կներկայացնեն. նա ժպտաց ու պատասխանեց թէ ես այդ իսկ պատճառաւ եմ եկել որ իմ պակասութիւնները տեսնեմ և ուղեմ: Վերջը նրա վերայ զանգատեցին թէ Յունաց չաստուածոցն չէ ընդունում և երիտասարդաց մոլորեցնում է: Աթենասունամեայ ծերունին դատ կոչուեցաւ: Իւր ճառի մէջ՝ որ գրած էր արդարանալու համար՝ ո՛չ թէ աղերսանօք էր գրած որ ներեն, այլ դուրս էր բերել իւր արժանաւորութիւնը ու հայրենեաց համար արած ծառայութիւնները, երբ որ ճառը վերջացրուց, դատաւորները վճռեցին մահ: Այնպէս պատահեց որ նրա դատելու ժամանակ Աթէնքից ուղարկեցին Սրբազան նաւ պարգևներով Դեղոս կղզոյն Ապողոնի տաճարի համար: Աթենացւոց սովորութիւն էր որ իւրաքանչիւր տարի կուղարկէին, և մինչև նաւի վերադառնալը մարդ չէին սպանում: Սոկրատէսի բաղտից մէկ ամիս նաւը չվերադարձաւ: Սոկրատէսի աշակերտները այն միջոցում բաւականին շահվեցան, իւրաքանչիւր օր կերթային բանտը՝ վարժապետին կմխիթարէին ու նրանից կլսէին զանազան խրատներ: Կհամոզէին Սոկրատէսին որ կաշառեն պահապանին, ու նա փախչի, բայց Սոկրատէս չհաճեցաւ, մերժեց ու ասաց թէ իւրաքանչիւր քաղաքացի պարտական է օրինաց հնազանդել՝ իւր աշակերտաց նըբանով կմխիթարէր՝ որ հոգւոյ անմահութիւն կըքարոզէր, ու ինքն կ'ասէր միշտ թէ իմ մահն է տեղափոխութիւն դէպ ի երջանկութիւն: Վերջապէս նաւը վերադարձաւ ու Սոկրատէսը հանդստութեամբ

ընդունեց թոյն ու վախճանեցաւ (399 թ. նախ քան Ք. Ծ.)։

Նորանից յետ իմաստուններից գլխաւորն էր Պլատոն՝ Սոկրատէսի աշակերտը, ու Արիստոտէլ Պլատոնի աշակերտը։ Սոկրատէսի մահուանից յետոյ Պլատոնը Աթէնքից հեռացաւ։ Մի քանի ժամանակ մնաց Սիրակուսայի բռնակալ Դիոնեսիոսի մօտ. բայց Դիոնեսիոս նեղանալով նրա վերայ, յանձնեց Սպարտացւոց, որ նրան վաճառեն որպէս ստրուկ Էգինէ կղզւոյ մէջ։ Վերջը մէկ հարուստ և ուսումնասէր մարդ նրան գնեց և ազատեց ստրկութիւնից։ Պլատոն վերադառնալով Աթէնք՝ սկսեց փիլիսոփայութիւն ուսուցանել մէկ մարզարանում՝ որ Ակադեմիա կ'կոչուէր։ Նրա աշակերտներից մէկն էր Արիստոտէլ Մակեդոնացին յետ մահուան Պլատոնի Արիստոտէլ ստացաւ փառք և առաջին փիլիսոփայի անուն։ Նա Աղէքսանդր Մակեդոնացւոյ դաստիարակն էր։ Վերջը դարձեալ գալով Աթէնք, սկսեց իւր վարժապետութիւնը ուրիշ մարզարանում որ կոչուեց Լիկէոն։ Արիստոտէլ գիտէր թուաբանութիւն, մեքենաբանութիւն. բնաբնութիւն, բնագիտութիւն, կենդանախօսութիւն, բժշկութիւն, քաղաքականութիւն և այլն։ Մանաւանդ նա կատարելագործեց փիլիսոփայութեան այն մասը, որ կասուի տրամաբանութիւն։ Սոկրատէսի հետևողներից մի քանիսը, որոնք իւրեանց վարժապետին կնմանէին՝ պարզ կեանք վարելով առանց շահասիրութեան, և կանարգէին բոլոր վայելչութիւնները, միշտ հին շո-

ըերով կշրջէին, գետնի վերայ կենջէին և անպիտան կերակրով կբաւականանային։ Էյնպիսի իմաստուններին անուանեցին Կիւնիկեան կամ Շնական, որոց մէջ երևելին էր Դիոգինէս։ Պատմեն թէ նա այնպիսի չարքաշ կեանք կվարէր որ տակառի մէջ կբնակէր։ Միանգամ նրա մօտ եկաւ Աղէքսանդր Մակեդոնացին ու հարցրուց թէ չի կամենար նրանից ողորմութիւն։ Դիոգինէս գետնի վրայ նստած պատասխանեց թէ ,,Շնորհակալ եմ. փոքր հեռու կաց, առաջես արևը մի՛ փակիր,,։

Յունաց պատմաբաններից առաջինն էր Հերոդոտոս ''Հայր պատմութեան,,. նա Ե դարում էր (նախ քան Ք. Ծ.) Յունաց ու Պարսից պատերազմերը նկարագրեց։ Ն՛անապարհորդեց Եգիպտոս և Ասիա, ու ստորագրեց իւր տեսած քաղաքները։ Միւս երևելի պատմաբանն է Թուկիդիտէս, որ նկարագրեց Պեղոպոնեսական պատերազմը։ Յունաց երրորդ պատմաբանն էր Քսենոփոն, Սոկրատի աշակերտը, նա գրեց 10,000 զօրքի վերադարձը որ կասուի նահանջ բիւրուց։

Պարսկաստանում Արտաշէս երկրորդի ժամանակ պատահեց ներքին անհամաձայնութիւն, նորա փոքր եղբայրը Կիւրոս, որ տեղակալ էր փոքր Ասիոյ, կամեցաւ Արտաշէսին սպանել ու նորա գահը ժառանգել, այս նպատակաւ Յունաց 10,000 զօրք վարձեց, այն ժամանակ էլ Յունաստանում շատ մարդիկ կային, որ կցանկային զինուորական լինել նոքա կկաղմէին զօրք ու փողով օգնութիւն կտային։ Բաբելոնի

մօտ պատերազմեցան Երատաշէսը և Կիւրոսը։ Յոյնք իւրեանց քաջութեամբ յաղթութիւն Երատաշէսի զօրացը. բայց յանկարծ Կիւրոսին սպանեցին ու նորա զօրքը փախան (401 թ. նախ քան Ք. Ծ.)։

Էյն ժամանակ Յունաց զօրքը մնաց առանց օգնականի հայրենիքից հեռու, ու թշնամիներով շրջապատեալ։ Պարսից կուսակալներից մէկը խաբելով հրաւիրեց Յունաց զօրապետներին և բոլորեցուն ջնջեց։ Զօրքը մնալով առանց զօրապետի՝ իրանցից ընտրեցին առաջնորդ Քսենոփոնը։ Քսենոփոն սկսեց նրանց քաջալերել որ իւրեանց զօրութիւնը չկորցնեն, նոր զօրապետներ ընտրեցին և քաջութեամբ կ'աշխատէին իւրեանց հայրենիքը հասնել։ Զօրքը հեռեց նրան մեծ նեղութեամբ, 19 ամիս ճանապարհ գնացին մինչև հասան իւրեանց հայրենիք։ Նրանց առաջ կհանդիպէին ահագին լեռներ, մեծ մեծ գետեր, անծանօթ անապատներ ու մանաւանդ նրանց կնեղացնէին տեղ տեղ Պարսկաց զօրքերը։ Վերջապէս հասան Սեաւ ծովի եղերքը ու ողջութեամբ մտան Եւրոպա։

Մակեդոնացոց Ինքնակալութիւնը։

Մակեդոնիան է Թէսաղիայից դէպ ի հիւսիս։ Նորա բնակիչքն շատ քաջ էին ու Յունաց ցեղակից։ Երշիկեղագոսում Մակեդոնիոյ եղերաց մօտ կային շատ գաղթականաց քաղաքներ Մակեդոնացիք էլ նրանցից Յունաց սովորութիւնները առան։ Մակե-

դոնացիք թագաւորներ ունէին, բայց նոցա իշխանութիւնը սահմանափակ էր երևելի մարդիկներով այսինքն ազնուականներով։ Առաջին անկախ թագաւորը ու Մակեդոնիայի ծաղկեցնողն էր Փիլիպպոս (361 33 թ.) Փիլիպպոսին՝ իւր երիտասարդ ժամանակ Թեբացիները պատանդ էին տարել և կիթնար Եպամինոնդի մօտ, ուր և ստացաւ ուսում և զինուորական արհեստը։ Երբ նա Մակեդոնացւոց թագաւորութիւնը ձեռք բերաւ, Փիլիպպոս առաւել կատարելագործեց Յունաց փաղանգը, Մակեդոնացւոց փաղանգը տասն և վեց կարգից էր կազմեալ, որոնք զինուորեալ էին երկար նիզակներով, այնպէս որ նիզակաց անտառ էին ձևացնում։ Այս տգեղ ու տկար մարդը իւր խորագիտութեամբ, անխոնջ աշխատութեամբ ու քաջ զօրքով, շուտով յաղթեց թէ արտաքին և թէ ներքին թշնամեաց, ու տիրեց դրացի ժողովրդոց՝ որք կընակէին Թրակիայում Իլիրիկեում։ Անդադար պատերազմերում մէկ աչքից զրկուեց, կուրծքը և կողքն էլ ջարդեցին, մէկ ձեռքն էլ վերավորեցին, բայց նորա աշխատութեան ոչինչ չկարողացաւ արգելք լինել։ Իմանալով Յունաց թոյլ դրութիւնը, կամեցաւ Յունաստանին տիրել։ Մի քանի խորամիտ Յոյները երկիւղ կկրէին դահասէր Փիլիպպոսից մանաւանդ նրա դէմ զինաւորվեցաւ Դեմոսթենէս ճարտասանը։ Այս մարդոյ բազդը շատ զարմանալի է։ Տեսնելով թէ որպիսի՛ կերպիւ կմեծարէին Աթենացիք իւրեանց ճարտար հռետորաց սկսեց սովորել ճարտասանութեան ար-

հեսաը, երիտասարդութիւնից սկսեց պատրաստվել հռետորութեան։ Առաջին անգամ երբ ամպիոնի վրայ բարձրացած կխօսէր, սկսեցին սուլելով ծաղրառնել։ Դեմոսթենէս նեղացած վերադարձաւ տուն, նրա յետևից էլ եկաւ նրա բարեկամներից մէկը որ դերասան էր։ Դեմոսթենէս սկսեց գանգատել ժողովրդեան անարդարութեան վերայ. դերասանը խնդրեց որ նա մի քանի իրան երդէ որ և իցէ ողբերգութիւնից։ Նա խընդիրքը կատարեց, յետոյ դերասանը նոյնը երգեց, բայց այնպէս քաղցր ու այնպիսի արտասանութեամբ որ Դեմոսթենէս կարծեց թէ ուրիշ բան է ասում, այն ժամանակ հասկացաւ թէ նորա կատարելութիւնն է մաքուր, քաջահնչուն ձայն և գեղեցիկ շարժմունք,

Դեմոսթենէս ի բոլոր սրտէ կ'աշխատէր որ երկուքն էլ ձեռք բերէ. երբեմն կ'հեռանար միայնակ տեղ, կ'սովորէր հայելի առաջ զանազան շարժուածքներ, դէմքի ձևակերպութիւններ, երբեմն էլ կ'երթար ծովու եզերքը ու կ'աշխատէր բարձր ձայնիւ ծովու ալեաց ձայնը խափանել, կամ կ'ցանկար որ երկար ժամանակ շունչ չառնի, կբարձրանար լերանց վերայ և այնտեղից կ'սկսէր ճառել։ Երբեմն բերանում փոքրիկ քարեր կ'պահէր որ առաւել պարզ հնչէ։ Նորա թախանձեցուցիչ աշխատութիւնները յաւ յառաջադիմութիւն գտան։ Յետոյ երբ Դեմոսթենէս երևաց ամպիոնի վրայ, ընդունեցաւ հասարակութեան հաւանութեամբ ու շուտով գտաւ պատիւ առաջին հռետորի։ Իւր հռետորական տաղանդով միացրուց ջերմ սէրը դէպ ի հայրենիք։ Հասկացաւ

Փիլիպպոսի Մակեդոնացւոյ խորամանկ մտքերը, ու ամէն կերպիւ կաշխատէր, որ Աթենացւոց հասկացնի նորա վտանգներն ու երկիւղը, իսկ ժողովուրդը անհոգ կմնար սորա մասին: Փիլիպպոս ոսկւով Յունաստանում շատ հետևողներ գտաւ երևելի մարդիկներից և հռետորներից, որ կխօսէին յօգուտ նորա, ու ժողովրդեան կհաւատացնէին որ նա բարի մտադրութիւններ ունի: Յոյնք իւրեանց ներքին պատերազմերով տեղիք տուին Փիլիպպոսին իւրեանց գործոց մէջ խառնուելու: Այն ժամանակ Յունաստանում կշարունակէր սրբազան անուանեալ պատերազմը, որ ծագել էր այն պատճառաւ որ Փոկկիսի մի քանի բնակիչքն յափշտակել էին Դէլֆիսի Ապողոնի տաճարին պատկանեալ հողերը և միանգամայն կողոպտել էին տաճարը: Դրացի Յոյները անհեռատես կամ կաշառուած մարդոց առաջարկութեամբ մի քանի անգամ խնդրեցին Փիլիպպոսին որ նա պատժէր տաճարի կողոպտողաց: Փիլիպպոս սիրով կատարեց այն յանձնարարութիւնը, և յարմար միջոց գտաւ յափշտակելու Թերմոպիլէի կիրճը ու մի քանի ամրոցներ էլ միջին Յունաստանում: Աթենացիք միայն այն ժամանակ հասկացան Դեմոսթենէսի նախազգուշութիւնը և իւրեանց սխալմունքը: Աշխատեցին շուտով միանալ Թեբացւոց հետ և դիմեցին Փիլիպպոսին, պատերազմը սկսաւ Բէոտիայում Քէրոնիա քաղաքի մօտ: Թէպէտ Յունաց զօրքը բազմաթիւ էր քան թէ Մակեդոնացւոցը, բայց նոքա անփորձ դոլով և անպիտան զօրապետների ա-

ռաջնորդութեամբ բոլորովին յաղթուեցան (338 թ.)։ Վերոնիկայի պատերազմից յետոյ Յունաստանը կախումն ունեցաւ Մակեդոնիոյ թագաւորից. իսկ Փիլիպպոս երկիւղ կրէր, չլինի որ Յունաց զայրացնի և խոհեմաբար կվարուէր իւր հպատակաց հետ։ Միայն ստիպեց որ իրան առաջնորդ անուանեն Յունաց զօրաց վրայ այն պատերազմում, որ արդէն մաածել էր Պարսից դէմ բանալու։ Փիլիպպոս յայտնի տեսնումէր Պարսից տէրութեան ներքին թուլութիւնը, միտքը դրաւ որ Յունաց օգնութեամբ Պարսից նուաճի։ Փութաջան պատրաստումէր գնալ Ասիա պատերազմ, բայց միանգամ առանց թիկնապահի թատրոն երթալու ժամանակ՝ ճանապարհին սպանեց նրան իւր թիկնապահներից մէկը։ Փիլիպպոսին յաջորդ՝ց նորա որդին Աղէքսանդր (336—323)։ կպատմեն թէ նա այն գիշերը ծնաւ՝ երբ յիմար Յոյն երիտասարդը ցանկանալով յաւիտենական անուն թողուլ պատմութեանց մէջ, այրեց Ենահայ հոյակապ տաճարը Եփեսոս քաղաքում, որ աշխարհիս եօթը հրաշալեաց մէկը կհամարուէր։ Փիլիպպոս իւր որդւոյ դաստիարակութիւնը յանձնեց Արիստոտել փիլիսոփային. որ այն բանը սովորեցրուց ինչ որ գիտէին ամենից ուսումնական Յոյները։ Աղէքսանդր Յունաց բանաստեղծներից առաւել սիրումէր Հոմերոսին, և Աքիլլէսը եղաւ նրա ամենասիրելի գիւցազն։ Ինութիւնը պարգևել էր նրան գերբնական ընդունակութիւն, արտաքին գեղեցկութիւն, անյաղթելի քաջութիւն և փառասիրութիւն։

Մինչդամ Փիլիպպոսին բերին Թեսաղլոյ վայրենի ձի ցլագլուխ որ ոչ ոք չէր կարողանում հեծնել, Ալէքսանդր փոքրիկ պատանին կարողացաւ հնազանդացնել։ Այն երիվարի վրա նա կպատերազմէր Բերոպիայի մօտ. և առաջնորդ դոլով Մակեդոնիոյ հեծելազօրաց, յաղթութեամբ վերադարձաւ։ Յոյնք մտածեցին Փիլիպպոսի մահուամբը ձեռք բերին իւրեանց անկախութիւնը, բայց Ալէքսանդրը փութանակի դադարացրուց ապստամբութիւնը։ Այս նուաճման ժամանակ մեծ վնաս կրեց Թեբէն, որ կամակորութեամբ ընդդիմացաւ Ալէքսանդրին։ Թեբէն նուաճելով, Մակեդոնիոյ թագաւորը հրամայեց գերի Թեբացիները իբրև սարուկ վաճառել ու քաղաքը քանդել, միայն թողնել Թեբէի ամրոցը, և Պինդարոս բանաստեղծի տունը։ Յետոյ հետ զհետէ սկսեցին ի կատար ածել իւր հօր դիտաւորութիւնները Պարսից դէմ, ու գնաց պատերազմ 35,000 զօրքով։ Բայց այս զօրքը շատ գեղեցիկ կերպիւ կարդաւորեալ էր, և ամէնքը պատերազմի մէջ փորձեալ էին. նոցա առաջնորդներն էին փորձ և հնարագէտ Փիլիպպոսի զօրապետները, ինչպէս Պարմենիոն, Կղեատս, Պտղոմէոս, և այլն։ Այն ժամանակ Պարսկաստանում թագաւորում էր Դարեհ Գ. Կոդոման, որ իւր նախորդներին չէր նմանի։ Խելացի և բարի թագաւոր էր բայց չկարողացաւ Պարսկաստանը ազատել իւր անկեալ վիճակից։ Առաջին պատերազմը Պարսից սկսուեց փոքր Ասիոյ հիւսիսային արևմտակողմը՝ Գրանիկոն գետի մօտ։ Պարսիկք շատ

զօրք ունէին՝ Յոյներից վարձած, բայց նոքա չկարողացան Պարսկաստանը ազատել։ Այնտեղ էր նա և մեր Վահէն, որ առաջ Դարեհին օգնութիւն ուղարկեց 40,000 հետևակ, և 7,000 հեծելազօր՝ Աղէքսանդր Մակեդոնացւոյ դէմ, և յետոյ երբ Դարեհ Կոդոմանը յաղթուեցաւ, ինքն անձամբ դուրս գնաց նորա առաջը, և շատ քաջութիւններ անելուց յետոյ մեռաւ (մօտ 330 թուին)։ Վահէի մահից յետոյ բոլոր Հայաստանը ընկաւ Մակեդոնացոց իշխանութեան ներքոյ։

Թշնամիներից երկուքը ճանաչեցին Աղէքսանդրին՝ փայլուն սաղաւարտից ու հոդմով ցրուեալ փետուրներից, նրանցից մէկը սաղաւարտը խորտակեց, իսկ միւսը երբ կամենում էր նիզակով դլուխը ծակել, շուտով Կղետոս թրով կտրեց Պարսիկների ձեռքը։ Աղէքսանդր նուաճեց փոքր Ասիան ու ուղևորեց դէպ ի Ասորիք։ Այն տեղ Դարեհ Կոդոմանը նորից փակեց ճանապարհը, ժողովելով ահագին խումբ զօրաց։ Իսսա քաղաքին մօտ դարձեալ յաղթուեց Դարեհը. նորա հարուստ բանակը, մայրը, կինը, որդիքը ընկան Մակեդոնացւոյ ձեռքը։ Աղէքսանդրը մեծ մարդասիրութեամբ վարուեց Դարեհի ընտանեաց հետ։ Յետ այնորիկ գնաց Փիւնիկէ, ուր Տիւրոս քաղաքը չէր կամենում հնազանդել. բայց Աղէքսանդր յաղթութեամբ առաւ զայն, Իրեից առանց պատերազմի նուաճեց։ Գոյնպէս և Եգիպտացւոց. վասն զի նոքա ուրախ էին ազատուիլ Պարսից ատելի բռնութիւնից։ Այնտեղ Գեղոսի գետաբերանին

մօտ հիմնեց Աղէքսանդրիա քաղաքը, ուր գաղթեց շատ Յոյներ։ Այն քաղաքը իւր լաւ դիրքովը դարձաւ շուտով վաճառաշահ քաղաք Միջերկրական ծովու վրայ, ու Փիւնիկեցւոց աւերը Տիւրոսի բոլոր վաճառականութիւնը Աղէքսանդրիա անցաւ։ Աղէքսանդրը Եգիպտոսից գնաց Պարսկաստան, Տիգրիս գետը անցաւ Ասորւոց Արբելա քաղաքին մօտ Դարեհ Կոդոմանը կրկին կամեցաւ պատերազմել։ Կըպատմեն թէ նա այնքան զօրք ունէր ու այնքան փիղ, որ Մակեդոնացւոց զօրապետները վախեցան և կխորհէին դիշերը յարձակուիլ Պարսից վրայ, բայց Աղէքսանդր պատասխանեց թէ չեմ կամենում գողութեամբ յաղթութիւն անել։ Արդարև ահագին բայց անկարգ ու վհատեալ Պարսից զօրքը դարձեալ ջարդուեցան ու փախան Դարեհը Ռակտրիա փախաւ, այնտեղի Ռեսոս կուսակալը հրամայեց նրան սպաննել ու ինքն իրեն թագաւոր անուանեց։ Աղէքսանդրի թիկնապահները Դարեհին գտան կիսամեռ՝ որ կլորար արեան մէջ. կպատմեն թէ խնդրեց ջուր, ու Մակեդոնացւոց մէկը նրան իւր սաղավարտով ջուր տալու ժամանակ, Դարեհը շնորհակալութիւն մատոյց և ասաց թէ՝ ես ոչինչ չունիմ որ վարձահատոյց լինիմ. բայց կխնդրեմ և յոյս ունիմ որ Աղէքսանդրը քեզ կվարձատրէ։ Դարեհ շատ կպատուէր Մակեդոնացւոց արքային, վասն զի նա մարդասիրաբար վարուեց նորա ընտանեաց հետ։ Բայց երբ Աղէքսանդրը հասաւ Դարեհին, տեսաւ որ արդէն մեռեալէ, նա դառնապէս լաց եղաւ Դարեհի վրայ

և հրամայեց որ օրինաւոր կերպիւ թաղեն որպէս թագաւոր։ Իսկ նենգաւոր Ռեսոսին սպաննել տուաւ։ Յետ այնորիկ Աղէքսանդրը բոլորովին նուաճելով Պարսկաստանն արշաւեց դէպ ի հիւսիս և արևելք։ Մակեդոնացին ճանապարհի վրայ չէր ջնջում ժողովուրդ և ոչ աւերումէր երկիր, ինչպէս միւս բարբարոս աշխարհակալները կանէին։ Ընդհակառակըն՝ նա կհիմնէր նորանոր քաղաքներ, այնտեղ կթողներ Յունաց զօրք, կ'հաստատէր քաղաքական կարգ, և այնպէս կարողացաւ այնպիսի հառաւոր բարբարոս երկիրներում Յունաց լուսաւորութիւնը տարածել Յունաց լեզուն, սովորութիւնք և արհեստ։

Նորա զօրքը շատ նեղացաւ երբ նա սկսեց աւազոտ անապատներ և բարձրաբերձ լերանց գագաթ անցնել։ Զօրքը կամենումէր վերադառնալ, մի քանի անգամ էլ տրտունջ բարձաւ, սակայն երիտասարդ զօրապետը գիտէր քաջալերել զօրաց. նա կցանկար բոլոր երկիրները տիրել ու տիեզերական թագաւորութիւն կազմել։ Աղէքսանդրին իրաւամբ կմեղադրեն, որ նա քանդեց հարուստ երևելի Պերսեպոլիս քաղաքը, հրաման տուաւ իւր զօրաց որ կողոպտեն՝ իբրև պարգև նոցա աշխատանաց։ Բաց յայնմանէ կպատմեն թէ միւս օրը երբ նա խնջոյք ուներ իւր բարեկամաց հետ Պերսեպոլսի գեղեցիկ դահլիճում, մի Աթենացւոց Գէոթերան առաջարկեց այն պալատը այրել, որ նրանով Պարսից վրէժը առնու վասն զի նոքա այրեցին Յունաց տաճարները ու արձանները Խսերքսէսի Յունաստանի վրայ արձակման ժա-

մանակ։ Աղեքսանդր էլ գինուց մոլորուած՝ հրամայեց այրել։ Պարսկաստանում իւր գործերը կարգաւորելուց յետոյ Աղեքսանդրը արշաւեց դէպ ի Հնդկաստան, որ երևելի էր իւր հարստութեամբ, ու գընաց մոտաւ Ինդոս գետի նահանգը։ Հնդկաց մի քանի ցեղերը շուտով յաղթուեցան. աւելի քաջութեամբ պատերազմեցաւ Պոլբոս թագաւորը, որ վերջը գերի ընկաւ, և Աղեքսանդրի բարեկամ դարձաւ։ Ինդոս գետի նահանգները առնելով Մակեդոնացին կամեցաւ գնալ Գանգէս գետի դաշտը, սակայն վաստակեալ զօրքը ընդդիմացաւ, և այն միջոցին համոզմունքը և երկիւղը չկարողացան օգնել։ Աղեքսանդրը պարտաւորեալ զիջաւ, իւր յաղթութեան տեղեաց սահմանը որոշելու համար, հրամայեց որ այնտեղ քարից շինեն. երկոտասան զոհարան որոյ մեծութիւն էր բրգերին հաւասար։ Յետ այնորիկ հրամայեց նաւեր շինել ու ինքը նաւեց մինչև Ինդոսի գետաբերանը։ Աղեքսանդր երբ մոտաւ նաւը, զոհ մատոյց հաստուածոց, և ի պատիւ Պոսիդոն հաստուծոյն՝ հրամայեց որ ծովը հորթեր և ոսկի անօթներ թափեն։ Այն տեղից իւր զօրաց մէկ մասը ուղարկեց ծովային ճանապարհաւ Եփրատի գետաբերանը. իսկ մնացորդ զօրքով ինքը վերադարձաւ ցամաքային ճանապարհաւ Պարսկաստանի հարաւային անապատները անցնելով։ Այն պատերազմը շատ դժուարակիր էր, տաքութիւնից, սովից և ծարաւից՝ զօրաց կէս մասը կոտորուեց, բայց ինքը օրինակ տալով կքաջալերէր իւր զօրաց։ Աղեքսանդրը միշտ առաջուց կերթար, և բո-

լոր նեղութեանց կ՚համբերէր։ Մէկ անգամ Մակեդոնացւոց զօրքը վերջին ծարաւոյ մէջ ընկաւ, մի քանի զինուորք դտան պղտոր ջուր, և սաղաւարտով բերին թագաւորին, իսկ նա թափեց ջուրը ու պատասխանեց թէ ես չեմ կամենում խմել ջուր այն ժամանակ՝ երբ իմ զօրքը ծարաւի է։

Այսպիսի օրինակաւ և այսպիսի վարմունքով աւելի սիրելի եղև յաչս զինուորաց։ Աղէքսանդրը իրեն մայրաքաղաք ընտրեց Բաբելոն և ամենայն կերպիւ կաշխատէր իւր ահագին տէրութիւնը կարգաւորել, ճանապարհներ կբանար, ջրանցք կփորէր, քաղաքներ ու նաւահանգիստներ կ՚հիմնէր, կաշխատէր Մակեդոնացւոց, Յունաց և Պարսից հետ ծանօթացնել, ինքը Պարսից թագաւորաց հանդերձ կհագնէր, իւրեան համար Պարսիկներից թիկնապահք ունէր, և առ հասարակ սկսաւ Պարսից թագաւորաց շռայլ կեանքը վարել։ Հատ երիտասարդ Մակեդոնացւոց պսակեց Պարսից օրիորդաց հետ, ինքն էլ ամուսնացաւ Դարեհ Կոդոմանի դստեր վրայ։ Բայց Մակեդոնացիք և Յոյնք կցանկային իշխանաւոր լինել տիրած երկիրներում, և դժգոհութեամբ կ՚նայէին Աղէքսանդրի վրայ, վասն զի միակերպ կվարուէր թէ Մակեդոնացւոց և թէ Յունաց հետ։ Նոցա տրտունջը Աղէքսանդրին կդայրացնէր բայց նա ևս հետ չհետէ սկսաւ արևելեան բռնաւորի կերպով վարուիլ. հպարտութեան հոգի ստացաւ, սկսաւ կեղծաւորաց հաւատք ընծայել, և ճշմարտախօս անձանց չարաչար պատժել։ Պատմեն թէ մէկ

խնջոյից մէջ Կղետոսը (որ միանգամ նորա կեանքը մահից ազատել էր Գրանիկոն գետի մօտ) ըմպելեօք տաքացած սկսաւ Փիլիպպոսին գերադասել Աղէքսանդրից, Աղէքսանդրը զայրացած՝ իւր ձեռով սպանեց Կղետոսին, բայց երբ արթնցաւ, երեք օր իւր փրկիչ և իւր բարեկամ Կղետոսի մահուան վրայ լաց և կոծ արաւ։ Միւս օրը հրամայեց սպանել ծերունի Պարմենիոն զօրապետին, որոյ մասին զանազան լուրեր էին հաղորդել Աղէքսանդրին, իբր թէ նա Աղէքսանդրի դաւաճանն է։ Աղէքսանդրը վերջը հետ զհետէ սկսաւ թուլանալ և տկարանալ անչափաւոր աշխատութիւնից և անկարգ կեանք վարելուց։ Մանաւանդ շատ նեղացաւ իւր բարեկամ Հեփեստիոնի մահուան վրայ, որուն շատ կսիրէր։ Հրամայեց մեծ հանդիսիւ թաղել իւր անմոռաց և սիրելի բարեկամին։ Նրա թաղման հանդիսին վրայ ծախս արին տասը միլիոն ռուբլի արծաթ փող մեր հաշուով 10,000 անասուն այն օրը զոհեցին չաստուածոց։ Փոքր ժամանակից յետոյ Բաբելոնի վեսասկար օդը շուտով բացաւ սև գերեզման աշխարհակալ զօրապետ Աղէքսանդր Մակեդոնացւոյ առաջ, որ մեռաւ 33 տարեկան Աղէքսանդրը թագաւորեց 13 տարի, բայց այն փոքր միջոցում այնպիսի յաղթութիւններ գործեց որ անուանուեց Մեծ Աղէքսանդր։ Յետ մահուան իւրոյ թողեց մէկ յիմար եղբայր՝ և դեռահաս զաւակունք։ Պատմեն թէ երբ մեռնելու ժամանակը հարցրին Աղէքսանդրին թէ ո՞ւմ է թողնում իւր արքունական գահը, նա պատասխանեց ‘‘Երժա-

նաւորին,,։ Մակեդոնիոյ թագաւորութիւնը, որ կազմուած էր զանազան նուաճեալ ազգերից, թագաւորի մահը լսելուն պէս շուտով փճացաւ։ Հազին տէրութիւնը զօրապետները իրարու մէջ բաժանեցին։ Պաղեստինոս ստացաւ Եգիպտոսը, Անտիգոնոս փոքր Ասիան, Անտիպատրոս Մակեդոնիան, և այլն։ Առաջ գլխաւոր կառավարիչ նշանակուեց Պերդիկկասը, բայց միւս զօրապետները չէին հնազանդում նրան։ Սկսան միմեանց հետ պատերազմել 20 տարի շարունակ, և այն պատերազմի ժամանակ այն մասերը մէկից միւսին կանցնէր, վերջապէս Մակեդոնիոյ կայսերութիւնից կազմուեցան, երեք տէրութիւնք։

Ա. Մակեդոնիա և Յունաստան։

Աղեքսանդրի մահից յետոյ Յոյները կամեցան իւրեանց նախկին ազատութիւնը ձեռք բերելու։ Սմենից առաջ Աթենացիք Դեմոսթենէսի յորդորանօք ազատուեցան Մակեդոնիոյ իշխանութիւնից։ Բայց Աղեքսանդի զօրապետները շուտով նուաճեցին ապստամբուած Յոյներին։ Դեմոսթենէսը փախաւ Աթէնքից մէկ մերձակայ կղզի, պատճառ որ վճռել էին նը-բան սպանելու նրա ետևից ուղարկեցին Մակեդոնիոյ զինուորները։ Երբ որ կամենում էին Դեմոսթենէսը բռնութեամբ տանել Աթէնք նա չկամենալով թշնամեաց ձեռքը ընկնել ընդունեց թոյն և մեռաւ։ Մակեդոնիայում զինի զանազան փոփոխութեանց հաստատուեց Անտիգոնոսի տոհմը, որ Դեմետր

Պոլիորկետի որդին էր։ Այն ժամանակ էլ Յունաստանի մեծ մասը ազատուեց Մակեդոնիոյ իշխանութիւնից։

Յունաստանում կազմեցան երկու գլխաւոր դաշնակցութիւնք, դաշնակցութիւն Աքայիոյ քաղաքաց, Պելոպոնէսից դէպ ի հիւսիսն էր, և դաշնակցութիւն Ետոլիոյ միջին Յունաստանի արևմտակողմը։

Աքայեցւոց դաշնակցութիւնը շատ զօրացաւ և մեծ փառաց հասաւ իւր գլխաւոր կառավարիչ Արատոսի ժամանակը։ Նորա յաջորդ Փիլոպէմէնը յաղթութեամբ առաւ Սպարտան։ Սպարտացիք ստիպուեցան միանալու Աքայեցւոց հետ, և փոխեցին Լիկուրգոսի օրէնքները։ Մի անգամ երբ Փիլոպեմէնը կպատերազմէր դրացեաց հետ գերի ընկաւ և նրան ստիպեցին թոյն ընդունելու (183 թ.) և նա "վերջին Յոյն" մականունը ստացաւ Փիլոպեմէնից յետոյ կ'տեսնենք որ Աքայեցւոց դաշնակցութիւնը հետ զհետէ կթուլանայ, և այս էր պատճառը որ Հռովմայեցիք շուտով կարողացան Յունաստան նուաճել։

Ը. Եգիպտոս։

Եգիպտոսում թագաւորեց Պտղոմէոս Ղագոս զօրապետի տոհմը։ Առաջին Պտղոմէոսների ժամանակ Եգիպտոսը շատ ծաղկած դրութեան մէջն էր. նոցա Աղեքսանդրիա մայրաքաղաքը աշխարհիս լուսաւորութեան կեդրոն դարձաւ որ ծաղկեալ էր իւր վաճառականութեամբ արհեստներով և գիտութիւն-

ներով, և Աթէնքի նշանակութիւնը այն ժամանակ բոլորովին կորաւ։ Շինութիւններից երևելին էր Փարոսի լապտերազարդ արձանը, որ կանգնած էր ծովեզերաց վերայ՝ նաւերին ճանապարհ ցոյց տալու համար։ Այս արձանը շինած էր մէկ ժայռի վերայ որոյ միջով կանցնէին նաւերը։ Աղէքսանդրիոյ նաւահանգիստը աշտարակաձև էր, և շատ բարձր. գիշերը լապտերով կզարդարուէր և դէպ ի նաւահանգիստը նաւուց ճանապարհ ցոյց կտար։ Աղէքսանդրիայում Յունաստանից ժողովեցան ուսումնական մարդիկ, բանաստեղծներ, ճարտարապետներ, արուեստաւորներ, և նոքա կստանային մեծ փող Եգիպտացւոց թագաւորներից։ Պտղոմեանք շատ հարուստ և երևելի գրատուն հիմնեցին, ուր կային զանազան հին ձեռագիրներ, Յունաց մատենադրութիւնք, և այնտեղ կային հարիւրաւոր արտագրողներ։ Աղէքսանդրիոյ մատենադարանում կար 700,000 ձեռագիր, և այն թանգարանը աշխարհումն իւր ժամանակին շատ հաղուագիւտ էր և մեծ անուն ունէր։

Աղէքսանդրիոյ թանգարանը կպարունակուէր մի քանի ահագին շինութեանց մէջ, ուր կար և արքունական պալատը։ Այն ժամանակուան բանաստեղծներից երևելին էր Թեոկրիտոս որ կգրէր քաղցր համառօտ հովուական երգեր. իսկ ուսումնականներից երևելին էր Թուարան Եւկղեդէսը, և Սիրակուսայի Արքիմեդէս մեքենայից ճարտարապետը։

Պտղոմէոս Գ. էր երևելի աշխարհակալ։ Ամուսնացած էր Բերենիկէ անունով գեղեցկին հետ, ի

պատիւ որոյ համաստեղութեանց մէկին անունն է Ռերինիկեան գէս։ Բայց նրան յաջորդեցին այնպիսի թագաւորներ որոնք երևելի էին իւրեանց արևելեան բռնակալութեամբ։ Նոցա գլխաւոր պարապմունքն էր խստութիւն չափազանց, շռայլութիւն և արիւնահեղ պատերազմ միմեանց հետ՝ արքայական գահի համար։ Եգիպտոսում թէպէտ Յունաց ուսումնականութիւնը սկսաւ ծաղկիլ, բայց շատ չտևեց. պատճառն որ միայն Աղեքսանդրիայի մէջ էր կեդրոնացեալ, և շատ քիչ ազդեցութիւն ունեցաւ Եգիպտացւոց վրայ։

Գ. Աթենք։

Ասորւոց ընդարձակ տէրութիւնն էր Միջերկրական ծովուց մինչ Ինդոս գետը։ Սորա հիմնողն էր Սելևկոս՝ Աղեքսանդրի զօրապետներից մէկը, նորա յաջորդներից երևելին և Հռովմայեցւոց թշնամին էր Անտիոքոս Գ. Մեծը։ Ասորւոց երկրին մէջ հիմնել էին շատ հարուստ Յունաց քաղաքներ, ինչպէս Պաղմիրա և Անտիոք՝ Սելևկեանց երևելի մայրաքաղաքը (Փիւնիկէի հիւսիսային ծայրը)։ Բայց որպէս Եգիպտոսում, նոյնպէս և այս տեղ Յունաց ուսումնականութիւնը չծաղկեց, մինչև Յունաց և Մակեդոնացւոց քաղաքներ անգամ Ասիոյ քաղաքաց ձևը ընդունեցին և արևելեան շռայլութիւն և փափկութիւնը շուտով մտցրին իւրեանց մէջ։ Ասորւոց մէջ շատ անգամ ներքին պատերազմ սկսաւ արքու-

նական գահի վերայ, որով իւրեանց հպատակ ազգերը միջոց կգտնէին ապստամբելու։ Ինչպէս որ Հրէայք ապստամբեցան և ազատութիւն ձեռք բերին, Մակաբայեցւոց առաջնորդութեամբ։

Պարթևաց քաջ վրանաբնակ ցեղը, որ շատ քաջ հեծելազօրք կ'կազմէին և կբնակէին Կասպից ծովու հարաւային արևելեան կողմը, նոյնպէս ազատուեց Ասորւոց իշխանութիւնից, և տիրեց բոլոր երկրին՝ Եփրատից մինչև Ինդոս գետը։ Յետ այնորիկ Աղէքսանդրի կայսերութեան մէջ դարձեալ երկու նոր թագաւորութիւններ ծագեցան. Պոնտացւոց թագաւորութիւնը՝ փոքր Ասիոյ հիւսիսակողմը, Պերգամոնի թագաւորութիւնը և մի քանի փոքրիկ տէրութիւններ։ Վերջը այս թագաւորութիւնները բոլոր Հռովմայեցւոց հարկատու եղան՝ բացի Պարթևներից։

Հռովմայեցւոց Նագաւորաց ժամանակը և Պապրեկների Խռովութեանց ժողովրդականաց հետ։

Իտալիան թերակղզի է Եւրոպայի հարաւակողմը ընկած։ Հիւսիսակողմն Ալպեան են լերինք, իսկ Իտալիոյ մէջ կան Ապենեան լերինք։ Տաք օդը, տեսակ տեսակ բոյսերը և շքեղապատ ծովը Իտալիան կներկայացնէ իբրև մէկ գեղեցիկ երկիր Եւրոպայի մէջ։ Իտալիոյ հիւսիսակողմը Պադոս (Փօ) գետի և նորա քաղցր ակունքների մօտ Գաղղիական ցեղերը կբնակէին, և Հռովմայեցիք անուեցին Ընդրալպեան Գաղղիա այժ-

մեան Գաղղիայից զանազանելու պատճառաւ։ Մի-
ջին Իտալիայում Միջերկրական ծովուն եղերաց մօտ
կային յետագայ նահանգները. Էտրուրիա (Թոս-
քանա), որ կտարածուէր մինչև Տիբերիս գետը,
յետ այնորիկ Լատինոն կամ նահանգ Լատինաց և
Կամպանիա։ Այս թերակղզոյ արևելեան մասին
մէջ Աղրիական ծովուն մօտ նոյնպէս կային մի քա-
նի նահանգներ, որոց մէջ երևելին էր Սամնիոն. քաջ
Սամնիացւոց երկիրը՝ միջին Ապենեան լերանց ամե-
նաբարձր տեղը։ Հարաւային Իտալիայում Աղրիա-
կան ծովուն եղերքը կային Ապուլիա, և սրանից դէպ
ի հարաւ Բրուտիոն (այժմ Կալաբրիա)։ Հարաւա-
յին Իտալեոյ եղերաց մօտ կընակէին բազմաթիւ
Յոյն գաղթականներ, և այն պատճառաւ այն հիւսի-
սային ծայրը կոչուեցաւ մեծ Յունաստան։ Այն ցե-
ղերը՝ որք կընակէին միջին և հարաւային Իտալիա-
յում՝ մեծաւ մասամբ Յունաց ազգակից էին, և այն
էլ յայտնի կերևի լեզուից և սովորութիւններից։ Ի-
տալեոյ գլխաւոր ցեղն էր Լատինաց ցեղը նոքա կը-
խօսէին այն լեզուաւ՝ որ շատ նման էր հին Հելլենա-
կան լեզուին։ Մինչև նոցս կրօնքը անգամ Յունաց
կնմանէր։ Հին դարերում Իտալիայում որպէս Յու-
նաստանում կտեսնեմք շատ անկախ քաղաքներ՝ մի-
մեանց հետ դաշնակից։ Ամենից երևելիքն էին Էտ-
րուրացւոց երկոտասան քաղաքաց դաշն։ Երկրորդ
Լատինացւոց 30 քաղաքաց դաշն։ Այս Լատին քա-
ղաքաց մէջն առաջին տեղն ունէր Ալբալոնկա, որոյ
համար առասպելը կպատմէ թէ հիմնուած էր Տրո-

վաղայից եկած Լինէասի որդւոց ձեռքը։ Յետ Ալբա-
ղնկայի բարձրացաւ իւր նշանակութեամբ Հռովմ
քաղաքը, որ վերջը դառաւ բոլոր քաղաքաց գլուխ և
հրամանատար, որպէս հին՝ նոյնպէս միջին դարերում։
Հռովմը Տիբերիս գետի ձախակողմն է շինուած՝ գետա-
բերանից փոքր ինչ հեռու փոքրիկ բլրակների վերայ։
Հռովմ առաջ հիմնուեց Պալատինեան բլրին վրայ,
յետոյ ընդարձակուեց և մերձակայ վեց բլրակներն էլ
բռնեց (Կապիտոլիոն, Աւենտին, Կուիրինալ և այլն)։
Եւ այս պատճառաւ էս անուանեցաւ եօթնաբլուր
քաղաք։ Հռովմայ միջին ամրոցն է Կապիտոլիոն,
այն բլրի վրայ հին ժամանակ կար Երամազդ չաստու-
ծոյ տաճարը։ Այս բլուրը կնայի դէպ ի Տիբերիս գե-
տը, և կձևացնէ Տարպէյան ասուած ժայռը։ Հին
ժամանակներում այս ժայռից ձորը կձգէին Հռով-
մայեցւոց աւազակները։ Կապիտոլիոնից դէպ ի հիւսիս
Տիբերիսի եզերաց մօտ կար Երեսեան դաշտը, ուր
Հռովմայեցւոց երիտասարդները զինուորական կըր-
թութեամբ կպարապէին։ Հռովմի հիմնարկութեան
պատմութիւնը շատ առասպելախառն է։ Եհա այս-
պէս կպատմեն հին Հռովմայեցիները։ Ասենով Ալ-
բալոնգայում կթագաւորէր բարեհոգի Նումիտորը
նա իւր եղբօր Ամուլիոսին ձեռքովը զրկուեց թագա-
ւորական գահից։ Ամուլիոս վախենալով չլինի որ
Նումիտորի աղջկանից ժառանգ լինի, հրամայեց որ
նրան Վեստա չաստուածուհւոյ տաճարին կոյս ընծա-
յեն. սակայն Հռէա Սիլուիան յղացաւ Երեսից (պա-
տերազմի չաստուածուց), և ծնաւ երկու որդի, Ռը-

ռոմուլոս և Ռեմոս։ Ամուլիոս զայրացած հրամայեց որ Ռէա Սիլուիային կենդանի թաղեն, իսկ նորածին մանկանց գետը ձգեն։ Մէկ հովիւ գետի մէջ բռնեց այն զամբիւղը. երեխանց ազատեց մահուանից և կըրթեց իւր որդւոց հետ։ (Այստեղ կմտաբերեմք Մովսէսին և Կիւրոսին)։ Երբ երեխայքը մեծացան և իմացան իւրեանց ծագումը, Ամուլիոսին սպաննեցին, և իւրեանց պապ Նումիտորին կրկին նստացրին արքունական գահը։ Սոքա ունենալով պատերազմական ոգի՝ չմնացին Նումիտորին մօտ, այլ իւրեանց ընկերաց հետ գնացին Պալատինեան լեռը, ուր գտել էր նրանց հովիւը, և անտեղ կամեցան սեպհական մէկ փոքրիկ քաղաք հիմնել։ Վերջը երկու եղբարք վիճեցին թէ ո՛ւմ անունը տան այն նոր քաղաքին. շատ վիճելուց յետոյ Ռոմուլոս սպաննեց Ռեմոսին, և անուանեց քաղաքը Ռոմ։ Մեծ հանդէսներով հիմնուեց այս քաղաքը, ինչպէս որ սովորութիւնն էր այն ժամանակ։ Ռոմուլոսը լծեց մէկ սպիտակ եզ և մէկ սպիտակ կով, և արօրով սահմանը որոշեց իսկ ո՛ր տեղ որկամենում էր դուռը թողնել՝ այնտեղ բարձրացնում էր արօրը։ Ռոմը հիմնուեց 753 թուին նախ քան Ք. Ծ. Ռոմուլոսը կամենալով իւր քաղաքը մեծացնել, կընդունէր ամեն տեսակ փախստականներին թէ Լատինաց և թէ Ետրուրացւոց քաղաքներից, և նոքա մեծաւ մասամբ բնակեցան միւս բլրոց վրայ։ Ռոմը առաջ մէկ խեղճ տեսարան կներկայացնէր, փոքրիկ խրճիթներ ցեխից շինած և եղեգամբք կամ խոտով ծածկած։ Բայց նոքա շուտով

հարստացան միւս ցեղերի վրայ պատերազմելով և գիշերային յարձակմունքներով, որտեղից մեծ հարստութիւն կբերէին։ Մինչև կանանց անգամ սկըսան յափշտակել։ Պատմեն թէ Ռոմուլոսը կամենալով ամուսնացնել այն փախստական մարդկանց, խաղեր նշանակեց և բոլոր մերձակայ ցեղերը հրաւիրեց որ գան կանանց և աղջկանց հետ, և երբ խաղերը սկսուեցան, Ռոմայեցիք յանկարծ յափշտակեցին նոցա կանայքը և աղջկունքը, և մեծ մասն Սաբինացւոց էին։ Այն պատճառաւ կոչուեց յափշտակութիւն Սաբինեանց, զայրացած մարդիկը և հայրերը եկան զօրքով պատերազմելու, այն ժամանակ նոցա կայնայքը ընկան մէջ տեղ, և հաշտութիւն խօսեցան, պատճառ որ բաւական ժամանակ էր անցել և նրանց հետ սիրով կապուել էին, նրանք էլ փոխանակ պատերազմելու՝ իրենք էլ մնացին Ռոմում։ Ռոմուլոսը միշտ կաշխատէր որ փառաւորուի արքունական շքեղութեամբ՝ Դտրուրացւոց թագաւորաց նման։ Երբ ժողովրդեան մէջ կանգնէր, նորա առաջուց կերթային տասներկու (ասպետք) լիկտորներ և իւրաքանչիւրը ձեռքին բռնած ունէր մէկ փունջ կապած ոստեր։ Յետ այնորիկ Ռոմուլոս կազմեց ծերակոյտ ժողով որոյ անդամք կկոչուէին հարք համագրեալք. և մի քանի հազար հեծելազօր. մնացած Ռոմայեցիք հետևակ զօրք կկազմէին։ Այսպէս կպատմեն Ռոմուլոսի մահը. մէկ անգամ Ռոմուլոսի զօրք խաղացնելու ժամանակ յանկարծ հողմ բարձրացաւ, և երբ հողմը դադարեց թագաւորին

էլ չտեսան։ Ժողովուրդը վրդովից և կարծիք ունէին համագրեալ հարց վրայ թէ նոքա են սպաննել Յերուսաղեմին. այն ժամանակ ծերակոյտերից մէկը յայտնեց թէ տեսաւ որ Յերուսաղեմը երկինքը կրարձրանար. և ժողովուրդը հաւատալով նրան՝ Յերուսաղեմին իւրեանց Հաստուածոց կարգը դասեցին, և անուանեցին Կուիրինոս։

Յովմայեցւոց երկրորդ թագաւորն էր Կումա Պոմպիլիոս՝ Սաբինեանց ցեղից, որ ամենևին չէր նմանի պատերազմասէր Յերուսաղեմին, այլ էր խաղաղասէր և բարեպաշտ։ Յովմի մէջ շինեց շատ տաճարներ, զանազան արարողութիւններ հաստատեց և կաշխատէր որ Յովմայեցիք երկրագործութեամբ պարապեն։ Երկրորդ թագաւորն էր Տուղղուս Ոստիլիոս, որ Յերուսաղեմին պէս էր պատերազմասէր, և բաւական ընդարձակեց Յովմայեցւոց տերութիւնը. յաղթութեամբ առաւ Ալբալոնկան, կ՚պատմեն թէ չը-պատերազմեցան նոքա, այլ երկու կողմից ընտրած երեք եղբարց մենամարտութիւնը վճիռ տուեց յաղթութեան։ Յովմայեցիք ընտրեցին երեք եղբարց Ովրատեոսեանց իսկ Ալբալոնկայի կողմից եկան երեք Կուրատիոսեանք։ Ովրատիոսեանց մէկուն հնարքովը Յովմայեցիք յաղթող հանդիսացան։ Պատերազմից յետոյ Ոստիլիոսը հրամայեց որ բոլոր Ալբալոնկացիք Յովմ գաղթեն։ Յովմը այն թագաւորաց ժամանակը (Անկոս Մարկիոսի, Տարկուինիոսի Երիցու և Սերուիոսի Տուղղիոսի) առաւել ընդարձակուեց, պատճառ որ նրանց կառավարութեան ժա-

մանակ շատերը կամաւ գաղթեցին Հռովմ թէ Լատինաց քաղաքներից և թէ Նորուբացւոց, շատերին էլ բռնութեամբ իբրև նուաճեալ ազգ բերին Հռովմ։ Հռովմայ նախկին բնակիչքը կազմեցին ժողովրդեան բարձր կարգը, որ է Պատրիկ իսկ գաղթականները ստորին կարգն էին, կամ հասարակ ժողովուրդը այսինքն Համիկները որոց թիւը հետ զհետէ կ'բազմանար։ Պատրիկները բոլոր հողերը յափշտակեցին, նոքա միայն կվարէին արքունական պաշտօնները, նրանք կ'կազմէին ազգային ժողով, ուր և տէրութեան զանազան գործերը կ'վճռէին։ Թէ տանը և թէ դաշտում իւրեանց կ'ծառայէին ստրուկները կամ պաշտպանեալները (սոքա մասնաւորապէս ազատ մարդիկ՝ որոնք կախումն ունէին պատրիկներից)։ Համիկք իւրեանց վիճակից դժգոհ էին, և միշտ կ'տրանջային։ Սերուիոս Տուղլիոս առաջինն էր որ կամեցաւ պատրիկներին հաշտեցնել ռամկաց հետ, և բոլոր ռամկաց վարելու հող տուաւ։ Յետ այնորիկ պատրիկներն և ռամիկները, այսինքն հասարակ ժողովուրդը հինգ կարգ բաժանեց՝ իւրեանց հարստութեանը համեմատ, և ազգային ժողով հիմնեց պատրիկներից և ռամիկներից։ Այն ժողովը կը լինէր Արեսի դաշտում, միշտ հարուստ կարգը առաւել մեծ ձայն ունէր, և առաջին կարգի հարկը բարձրը էր քան թէ միւսներինը։ Պատերազմի ժամանակ էլ այս հինգ կարգը պէտք էր զինուորեալ լինէր իւրեանց կարգին համեմատ. իսկ վերջին վեցերորդ կարգը ժողովրդեան, որ էր գռեհիկը կամ ստրուկը,

ո՛չ պատերազմ կերթային և ոչ էլ հարկ կտային ոչ էլ իրաւունք ունէին ազգային ժողովը մտնելու։ Պատրիկներին շատ հակառակ էր որ ռամիկները ազգային ժողովոյ մէջ ձայն ստացան։ Դոքա կ'երկնչէին որ չլինի թէ Սերուիոս Տուղղիոսը ընդարձակէ իւր իշխանութիւնը՝ ռամկաց օգնութեամբ։ Խորհեցան որ Սերուիոս Տուղղիոսին սպաննեն, և հասան իւրեանց չար նպատակին, Սերուիոսի փեսայ Տարկուինիոս գոռոզի ձեռամբ։ Տարկուինիոս գոռոզը երբ թագաւոր ընտրուեց, ունեցաւ յաջող պատերազմներ, նա վերջացրուց Հռովմայ Կապիտոլեան ասուած երևելի ամրոցը։ Կամենուելը անսահման իշխանութիւն ձեռք բերել, այս պատճառաւ շատ պատրիկներ զոհ եղան նորա չար նպատակին. նորա որդիքը շատ ամբարտաւան էին և յանդուգն և նոքա եղան իւրեանց հօր անկման պատճառ։ Տարկուինիոսի անկման և արտաքսման մասին այս կերպ կ'պատմեն թէ՝ երբ Տարկուինիոսը պաշարել էր Լատինաց Արդէա քաղաքը Տարկուինիոսի որդիքը, և մի քանի մեծատանց զաւակունք բանակումն էին, երբեմն կը-ժողովէին իմիասին զուարճանալու։ Մէկ անգամ խնջոյից ժամանակ սկսան վիճել՝ թէ որո՛ց ամուսինը կ'գերազանցէ թէ գեղեցկութեամբ և թէ վարուք։ Կոլատինոսը, որ հանդիսականներից մինն էր, առաջարկեց որ իւրաքանչիւրը գնայ և տեսնէ թէ նորա կինը ի՛նչ գործի կ'պարապի։ Ամէնքը ընդունեցին առաջարկութիւնը երևեցաւ որ Տարկուինիոսի հարսունքը կ'ուարճանային իւրեանց բարեկամաց հետ,

իսկ Կոլլատինոսի կինը Լուկրետիան իւր աղախնոց հետ հիւսմամբ կ'պարապէր։ Այն ժամանակ ամէնքը գովաբանեցին Կոլլատինոսի կնոջ աշխատութիւնը։ Մի քանի օր չանցած՝ Տարկուինիոսի չարամիտ Սեքստոս որդին նախանձը սրտին մէջ պահելով՝ գնաց Կոլլատինոսի տունը, և սաստիկ անպատուեց նորա կնոջ։ Լուկրետիան չկամենալով այն տեսակ անպատուութիւնը տանելու, կանչեց իւր մարդոյն և բարեկամաց, պատմեց նոցա այն անցքը, յետ այնորիկ թուրը կոխեց սիրտը և փչեց հոգին։ Այն ժամանակ Բրուտոս պատրիկը (որ իրեն միշտ յիմար կըձայնէր որ Տարկուինիոսից ազատուի) Լուկրետիայի արիւնով ներկուած սուրը ձեռքն առնելով մտաւ ժողովրդին մէջ, և մեծ խռովութիւն յարոյց թագաւորի և նորա անօրէն որդւոց դէմ և ժողովուրդը վճռեց որ էլ թագաւորին չընդունեն։ Տարկուինիոսին հասաւ այս լուրը, փութացաւ Հռոմ. բայց Հռոմայեցիք դռները փակեցին, և չթողին որ Հռոմ մտնէ։ Նա զայրացած վերադարձաւ իւր զօրաց մօտ բայց զօրքն էլ Բրուտոսից համոզուած ապստամբել էր, վճռեցին որ Տարկուինիոսին իւր ընտանեօք արտաքսեն (509 թուին)։ Պատրիկները հասարակապետութիւն հրատարակեցին. թագաւորի տեղ իւրաքանչիւր տարի կընտրէին երկու Հիւպատոս, որոնք պատերազմի ժամանակ զօրաց կառաջնորդէին, իսկ խաղաղ ժամանակ ժողովրդեան գործերը կ'դատէին։ Օրինաց հրատարակումն Սենատ (Ծերակուտից) և ազգային ժողովքից էր կախեալ։ Ընդունական

պաշտօնները ինչպէս և առաջ պատրիկների ձեռքը անցաւ, կ'երևի որ Հռովմը դարձաւ ազնուապետական հասարակապետութիւն։ Հռովմայ առաջին Հիւպատոսներն էին Բրութոս և Կոլլատինոս։ Սակայն Տարկուինիոսը Հռովմ վերադառնալու յոյսը չէր կորցնում. զինաւորեց Ետրուրացւոց թագաւոր Պորսենային։ Պորսենան Հռովմին մերձեցաւ Տիբերիս գետի աջակողմեան եզերքից, և փոքր ինչ կ'մնար որ Հռովմ մտնի։ Մէկ քաջ զինուոր Ովրատեոս Կոկլէս այնքան ընդդիմացաւ Ետրուրացւոց՝ մինչև որ Հռովմայեցիք կարողացան կամուրջը քանդելու։ Յետ այնորիկ Կոկլէս ինքը զրահաւորեալ՝ ընկաւ գետը, և լողալով անցաւ Հռովմ. նորանցից մէկին էլ՝ Մուկեոս Սկէվոլա՝ մտաւ Ետրուրացւոց բանակը այնու դիտաւորութեամբ որ Պորսենային սպաննէ, նա սխալմամբ փոխանակ Պորսենայի սպաննեց նորա բարեկամներից մէկին։ Թագաւորը սպառնացաւ որ նրան կայրի՝ եթէ չ'խոստովանի ու չասէ ո՞վ էր պատճառը. Մուկիոս կամենալով ցոյց տալ թէ նա մահուանից չէ՛ վախենում, իւր աջ ձեռքը դրաւ խարուկի վրայ այրեց, և ասաց թէ ես ցանկանում էի քեզ սպաննել, և թէ 300 մարդ իւրեանց անձը զոհել են այդ բանը կատարելու։ Հռովմայեցւոց պատմաբանները կը պատմեն թէ Պորսենան այս լսելով փութացաւ խաղաղութիւն խօսելու, բայց այն խաղաղութեամբ մի քանի նահանգ կորուսին Հռովմայեցիք։ Տարկուինիոս գոռողը կրկին փորձ փորձեց, Լատինաց դաշնակցութիւն իրեն օգնութիւն հրաւիրեց, որ միշտ

կ'նախանձէր Հռովմայ բարձրանալուն: Հռովմայեցիք ընտրեցին դիկտատոր այսինքն առաջնորդ անսահման իշխանութեամբ, և յաղթեցին Լատինաց: Այն ժամանակից սկսեալ Հռովմայեցիք միշտ այնպիսի նեղ ընկած ժամանակ դիկտատոր կընտրէին, և այն վեց ամսեայ ժամանակաւ: Այս դիկտատորներից երևելին էր Կինկիննատոսը: Մէկ անգամ Հռովմայեցւոց զօրքը յաղթուել էր, և պաշարեալ էին մէկ կիրճի մէջ: Երբ այս լուրը հասաւ Հռովմայեցւոց, նոյն ժամայն ընտրեցին դիկտատոր Կինկիննատոսին. Կինկիննատոս պարզ մարդ էր, մինչև անգամ իւր հողը ինքը կ'վարէր: Կ'պատմեն թէ երբ որ Ներակուտից դեսպաններ եկան որ յայտնեն նորա դիկտատոր ընտրիլը, նա դաշտում արօրը ձեռին կաշխատէր: Կինկիննատոս հայրենասէր դոլով, այլ ոչ փառասէր, այն ընտրութիւնը սիրով ընդունեց, գնաց պատերազմ, իւրեանց զօրքը ազատեց, և այնպիսի նեղութիւն տուաւ թշնամեաց որ նոքա հարկադրեալ զենաթափ եղան և անուրի տակը անցան: Ընուրը այս տեսակ բան էր երկու նիզակ հողի մէջ կամրացնէին, իսկ երկրորդ նիզակը վրան կ'դնէին և կձևանար մէկ դուռն՝ նիզակներից շինած: Երբ Կինկիննատոս պատերազմը յաջող վերջացրեց, դիկտատորութեան իշխանութիւնը թողաւ, և դարձեալ գնաց արօրը ձեռք առած՝ իւր երկիրը մշակելու: Այն անդադար պատերազմից սաստիկ աղքատացան ռամիկները որոնք հարկ կտային, և մի և նոյն ժամանակ իրենք կըպատերազմէին թշնամեաց դէմ: Նոցա դաշտերը

խոպան մնացած՝ ոչ մէկ տեղից արդիւնք չունէին. այս եղև պատճառ որ նոքա մեծամեծ պարտուց տակ ընկան և սաստիկ աղքատացան։ Պատրիկները միշտ կաշխատէին որ իւրեանց պարտատէրանց սարկու�եան տակ ձգեն։ Ռամիկները տրտունջ բարձին իւրեանց դրութեան վերայ, վերջապէս համբերութիւնները հատեալ թողին Հռովմը և գնացին Նուիրական ասուած լեռը, մտադիր էին այնտեղ նոր քաղաք հիմնելու (494 թուին). Պատրիկները երկիւղ կրելով՝ մարդիկ ուղարկեցին որ նոցա համոզեն կրկին Հռովմ դառնալու, երկար համոզմանց յետոյ՝ նոքա խոստացան վերադառնալ, միայն այսու պայմանաւ որ իւրաքանչիւր տարի իրենցմէ երկու տրիբուն ընտրեն. այս տրիբունները միշտ ներկայ գտնուին Ծերակուտին մէջ, "տրիբունոս", ասելուն պէս՝ դադարի Ծերակուտի վճիռը։ Տրիբունները անվնասելի կ՚համարուէին, և նոցա դռները միշտ բաց էին։ Ամէն ժամանակ իւրաքանչիւր ռամիկ իրաւունք ունէր գնալու տրիբունի մօտ՝ իւր գանգատը յայտնելու և իրաւունքը պահանջելու։ Վերջը տրիբունների թիւը մինչև տասը հասաւ։—Շատ պատրիկներին անհաճոյ կ՚թուէր այս տրիբունաց ընտրութիւնը։ Ծերակուտի անդամներից մէկը Մարկոս Կորիոլանոս՝ խորհուրդ տուաւ որ սովու ժամանակ աղքատ ռամիկներուն ցորեան չբաժանեն, ասելով թէ սրանով կարելի է տրիբունները վերջանան։ Տրիբունները այս լսելով. Կորիոլանոսին ատեան հրաւիրեցին։ Պարտ պատրիկը մերժեց նոցա հրաւէրքը և

վճռեցին նրան հայրենիքից արտաքսել, նա էս սաստիկ զայրացած՝ գնաց իւրեաց դրացի Վոլսկեանց մօտ, համոզեց նոցա որ յարձակին Հռովմայ վրայ։ Ներակուտից յուղարկուած դեսպանները շատ աշխատեցան խաղաղութիւն խօսելու, սակայն հնարք չեղաւ. վերջը ժողովեցան Հռովմայ երեւելի տիկնայք, ի թիւս որոց էր Կորիոլանոսի մայրը և կինը՝ երեխանցը գիրկն առած. երբ տեսաւ Կորիոլանոսը, և մանաւանդ լսեց իւր մօր լալագին խնդիրը, համոզեց Վոլսկեանց որ վերադառնան։ Վոլսկեանք սաստիկ զայրացած Կորիոլանոսի վերայ, սպանեցին նորան իւրեանց բանակում։ Յետ այնորիկ ռամիկները կրկին զանազան քաղաքական իրաւունքներ կպահանջէին։ Հռովմում որ գրաւոր օրէնք չ՝կար, միանգամայն նոցա դատաւորները պատրիկներն էին, ժողովրդականք շատ նեղացած գոլով՝ խնդրեցին որ նրանց տան գրաւոր օրէնքներ։ Երկար հակառակութեանց յետոյ յօժարեցան որ գրաւոր օրէնքներ տան նրանց, իւրեանց մէջ ընտրեցին տասը մարդ, և նոցա յանձնեցին օրինաց գրութիւնը (450 թուին)։ Այս տասն անձինք (տասնպետք) գրեցին օրէնքներ, և փորել տուին տասն պղնձեայ տախտակների վրայ։ Վերջը այս տասնպետները իւրեանց իշխանութիւնը ընդարձակելով՝ սկսան նեղացնել ժողովրդեան նոցա մէջ ամենից զլկոն եղաւ Ապպիոս Կղոդիոսը։ Նա կամեցաւ որ հարուստ մարդու մի գեղեցիկ օրիորդը Վիրգինիան յափշտակէ. և առաջուց այս մասին խօսել էր իւր բարեկամի հետ, որ յափշտակէ բռնութեամբ

դատ բանայ և յայտնէ որ նորա ստրուկն է։ Այն օրն էլ դատաւորն էր ինքը Ապպիոս Կղոդիոսը, և նա վճիռ տուաւ յօգուտ իւր բարեկամին։ Այն ժամանակ Վիրգինիայի հայրը կամենալով իւր դստերն անպատուութիւնից ազատել, սրով սպանեց նրան։ Այս անցքը վատ հետևանք ունեցաւ. ժողովուրդը կատաղեց այս մասին բոլոր տասնպետներին խսպառ արտաքսեցին իւրեանց պաշտօններից Ապպիոս Կղոդիոսն էլ տեսնելով իւր դէմոյն դալիքը՝ շուտով ինքըն իրեն սպաննեց։

Ժողովրդեան և պատրիկների խռովութեան ժամանակ Հռովմ կործանելու վրայ էր բարբարոսների ձեռքից։ Վայրենի և պատերազմասէր Գաղղիացիները հիւսիսային Իտալիայից մտան Ետրուրիա, աւերելուց յետ անցան և մտան Հռովմ։

Հռովմայեցւոց զօրքը խսպառ յաղթուել էր։ Հռովմայ ժողովուրդը երկիւղից փախան մասամբ դրացի երկիրները, և մասամբ Կապիտոլեան ամրոցը։ Սակայն մի քանի անդամք Ներակոյտ ժողովոյ և քանի մի քուրմեր մնացին Հռովմ։ Երբ թշնամիք մտան քաղաք, տեսան որ նոքա փաթաթուածէին իւրեանց երկար վերարկուի մէջ. կարծեցին թէ արձանները են։ Բայց նրանցից մէկը հետաքրքիր գոլով՝ մէկ ծերունի անդամոյ մօրուս քաշեց, քաշելուն պէս շարժեց, և ձեռքին ունեցած փայտով զարկեց. երբ այս տեսան, նոյն ժամայն բոլորին սպաննեցին։

Հռովմայեցիք որ փակուել էին Կապիտոլենի մէջ, քաջութեամբ դիմացան պաշարման։ Առասպելը կը-

պատմէ թէ մէկ գիշեր Գաղղիացիները նեղ ճանապարհ գտնելով մտան Կապիտոլեան, բայց սագերը, որոնց քուրմերը կ'պահէին միշտ տաճարի մօտ, և ընծայուած էին Հերա չաստուածուհւոյն, գիշերը մեծ աղաղակ բարձին. Հռովմայեցիք արթննալով՝ տեսան որ թշնամիք իրենց պատել են. սկսան փոքրիկ պատերազմ, և ամրոցից բոլորովին հեռացրին թշնամեաց: Պաշարեալները սաստիկ սով կ'զգային: Բրենոսը Գաղղեացւոց զօրապետը յօժարացաւ խաղաղութիւն խօսելու, միայն ոսկի առնելով ի Հռովմայեցւոց: Կ'պատմեն թէ երբ ոսկին կ'կշռէին՝ իւր սուրն էլ վրան դրաւ, ասելով թէ սորա ծանրութեան էլ տուէք, և աղաղակեց "վայ յաղթեալներին,,: Բայց նոյն բոպէին հասաւ Դիկտատոր Կամիլլոսը, որ Արդէա քաղաքի ամրոցում փակուած էր իւր հետ բերաւ Հռովմայ փախստականներից կազմած զօրք, և ասաց թէ Հռովմայեցիք հարկը ո՛չ թէ ոսկի կտան, այլ երկաթ: սկսաւ պատերազմ, և Գաղղեացիները ջարդուեցան (390 թուին):

Երբ Գաղղեացիները հեռացան, Հռովմ այնպիսի խղճալի տեսարան կ'ձևացնէր, որ ռամիկները այլ ևս չէին յօժարում Հռովմ վերադառնալու, այլ կամեցան ուրիշ տեղ նոր քաղաք հիմնել: Մեծաւ դժուարութեամբ կարողացան պատրիկները համոզել ժողովրդեան և կրկին բերել Հռովմ որ սկսաւ հետ զհետէ շինուել և նախկին շքեղութիւնը ստանալ:

Արդէն ի վաղուց անտի պատրկաց և ռամկաց վէճը կշարունակուէր հասարակաց հողերի մասին: Հա-

սարակաց հող այն հողը կասուէր՝ որ նուաճեալ ազգերից կառնէին, և Հռովմին կսեպհականացնէին, և այս հողերից միայն պատրիկները կ՚շահուէին։ Ռամիկները կպահանջէին, որ այն հողերը հաւասարապէս բաժանեն քաղաքացւոց վրայ, բայց պատրիկները երկար ժամանակ չէին համողում այս բանիս։ Գաղղեացւոց Հռովմ գալուց յետոյ երկու քաջ տրիբուններ Լիկիննիոս և Սեքստիոս Ծերակուտին օրէնքներ առաջարկեցին, և պահանջեցին որ երկու հիւպատոսներից մէկը լինի հասարակ ժողովրդէն հասարակաց հողն էլ օրինաւոր կերպիւ բաժանեն, որով կարողանան հաւասարութիւն պահպանել։ Պատրիկները կընդդիմանային Լիկիննիոսի օրէնքաց, բայց ժողովուրդը պատրիկներին հակառակ տասն տարի շարունակ նրանց ընտրեցին ազգային տրիբուն։ Վերջապէս պատրիկները ճարահատեալ ընդունեցին նոցա պահանջները, (366 թուին)։ Սակաւ ժամանակից յետոյ ռամիկները պատրկաց հետ հաւասար իրաւունք ստացան և կազմեցին մէկ կարգ ժողովրդեան, որ էր Հռովմայ քաղաքացիք։

Հռովմայ պէրոնական ընդարձակութիւնը և նոցա ռազմական փոփոխութիւնը։

Պատրիկների և ռամիկների վէճը վերջանալուն պէս Հռովմայ հասարակապետութեան երջանիկ ժամանակը հասաւ։ Իտալիոյ բոլոր ցեղերը, հետ զհետէ սկսան մտնիլ Հռովմայ իշխանութեան ներքոյ, նուա-

ճելով Հռովմայեցւոց, սրոյ զօրութեամբ. բայց Հռովմայեցւոց համար ամենադժուար պատերազմը եղան Լատինաց դաշնակցութեան և Սամնիացւոց հետ։ Լատինաց քաղաքները ընդունել էին իւրեանց դաշնակցութեան մէջ Հռովմայ նախագահութիւնը, բայց վերջը յանկարծ պահանջեցին հաւասար Հռովմայ քաղաքացւոց հետ իրաւունքներներ ունենալ։ Յատկապէս այս էր նոցա պահանջմունքը. որ հիւպատոսներից մէկը և Ծերակուտի անդամներից մի քանիսը ընտրուին Լատիններից։ Հռովմայեցիք այս առաջարկութիւնը խստաւ մերժելով՝ սկսան պատերազմ։ Հռովմայեցւոց զօրաց առաջնորդք էին Մանլ Լոս Տորկուատոսը, և Դեկիոս Մուսը։ Առաջինը շատ երևելի կարգապահ զօրապետ էր։ Կ՚պատմեն թէ Մանլիոսի հարազատ որդին առանց հիւպատոսի հրամանի պատերազմեց թշնամեաց մէկ զօրապետի հետ, և յաղթող հանդիսացաւ այն պատերազմի մէջ, բայց հայրը չնայելով նրա յաղթութեան վրայ հրամայեց որ իւր որդւոյն սպանեն, վասն զի պատերազմական կարգը չ՚պահեց և առանց հրամանի պատերազմեց։—Իսկ միւս Հիւպատոս Դեկիոս Մուսը ինքը կամաւ իրան զոհեց։ Լատինացւոց հետ ունեցած սաստիկ պատերազմի ժամանակ Վեսուվ լերան ստորոտի մօտ (340ին.) Հռովմայեցիք շփոթուեցան։ Այն ժամանակ Մուսը կանչեց քուրմին, և հրամայեց որ իւր վրայ նզովք կարդալով մաղթանք անէ, որով վճռեցին նրան զոհել սանդարամետական կամ ստորերկրեայ չաստո-

ւածոց։ Բայց նա հեծաւ ձի, սպիտակ շորեր հագաւ, և ընկաւ Լատինաց լեգէոնեերուն մէջ. զերկուեց իւր կեանքից, բայց նորա անձնազոհութիւնը առաւել ևս քաջալերեց Հռովմայեցւոց, և այն պատերազմին մէջ յաղթող հանդիսացան։ Լատինք պարտաւորեցան խոնարհել Հռովմայ իշխանութեան։ Սամնիացիք առաւել ուժով էին, նոքա քաջ լեռնական ժողովուրդ էին։ Հռովմայ հետ պատերազմ ունենալու պատճառն էր իրանց Կամպանիոյ նահանգի մասին ունեցած վէճը։ Թէպէտ Հռովմայեցիք յաղթեցին Սամնիացւոց, սակայն այն պատերազմ շուտ շուտ նորոգու

տութեանը հետ։ Տարենտոնացիք հրաւիրեցին իրանց օգնական Եպիռոսի Պիւռոս թագաւորին, որ իւր պատերազմական արհեստը շատ անգամ ցոյց էր տուել, և կամենում էր Աղէքսանդր Մակեդոնացւոյն նմանել։

Պիւռոս եկաւ Իտալիա իւր կանոնաւոր և փորձուած զօրքով, և հետն ունէր 20 պատերազմական փիղ։

Առաջին պատերազմը Հռովմայեցւոց չյաջողուեց, մանաւանդ այն ժամանակ Հռովմայեցիք թուլացան երբ փղերը ուսերու վրայ աշտարակներ բարձած խառնուեցան, որտեղից զինուորները նետեր կարձակէին Հռովմայեցւոց վրայ։ Նոցա փղերից Հռովմայեցւոց ձիաները բոլորովին կատաղած՝ փախան, և մեծ վնաս տուին զօրաց։ Թէպէտ Հռովմայեցիք յետ մղուեցան, այնու ամենայնիւ Պիւռոսը մեծաւ զարմացմամբ կնայէր Հռովմայեցի զօրաց քաջութեան և կարգաւորութեան վրայ։ Նորա կորուստը այնպէս մեծ էր որ մէկ անգամ աղաղակեց ասելով թէ «Կրկին այսպիսի մէկ յաղթութիւն թէ անեմ, կմնամ ես առանց զինուորի»։ Պիւռոս առաջարկեց խաղաղութիւն խօսելու, այն պայմանաւ որ Հռովմայեցիք հարաւային Իտալիայից խսպառ հեռանան։ Հռովմայեցիք այնպիսի դաշնադրութիւն չկամեցան ընդունել։ Այն ժամանակ նոցա հիւպատոսը Փաբրիկիոս մեծ ազնուութիւն ցոյց տուաւ։ Պիւռոս միշտ կաշխատէր նրան կաշառելու, բայց նորա աշխատանքը զուր կանցնէր։ Հռովմայեցիք հնարք դտան փղե-

րի դէմ պատերազմելու, շինեցին առանձին տեսակ նաւեր՝ ծայրին կապած կպրոտ շոր ևրբ ներանք այն հրային նաւերը կարձակէին, փղերը երկիւղից յետ կխախչէին, և մեծ վնաս կտային իւրեանց զօրաց՝ ոտնակոխ անելով։ Վերջապէս Պիւռռոսին սաստիկ ջարդ տուաւ Հռովմայեցւոց Կուրիոս Տենտատոս քաջ զօրապետը Մալևենտի մօտ, որ վերջը կոչուեց Բենեւենտ, Պիւռռոսը այս վնասակար պատերազմից յետոյ հեռացաւ Իտալիայից։ Տարենտոնը բացաւ իւր դռները քաջ Հռովմայեցւոց առաջ (272), և նրա հետ նուաճուեցան սորին Իտալիոյ բոլոր ցեղերը։

Երբոր Հռովմայեցիք յաղթութեամբ նուաճեցին հարաւային Իտալիան, կամեցան Սիկիլիա կղզին էլ ձեռք բերել։ Բայց այս ցանկութիւնը կատարելու համար պէտք է պատերազմին Կարթագինեցւոց հզօր հասարակապետութեան դէմ, որ նոյնպէս մատգրութիւն ունէր այն կղզին առնելու, և արդէն ի վաղուց է՝ պատերազմէր Յունաց գաղթական Սիրակուսայի հետ, ուր կենակէր հզօր և ուսումնասէր Գեղոն իշխանը։ Կղզւոյն մէջ ծագեց նեղքին երկպառակութիւն, Կարթագինեցիք և Հռովմայեցիք միջամուխ եղան այն խռովութեան մէջ, և սկսան շարունակ պատերազմ, որ պատմութեան մէջ յայտնի է Պունիական պատերազմ անունով։ (Պունիական այն պատճառաւ կոչուեց որ Հռովմայեցիք Կարթագինեցւոց Փունիկեցի կանուանէին)։ Կարթագինեցիք վաճառական ազգով, նոցա ղլխաւոր զօրութիւնը նաւերի մէջն էր։

Հռովմայեցիք էլ նրան հետևելով՝ շուտով հարիւրի չափ պատերազմական նաւեր պատրաստեցին, և հնարեցին այն տեսակ մեքենայական շղթաներ որով կարողանում էին որսալ թշնամեաց նաւերը. և այնպէս պատերազմել ինչպէս ցամաքի վրայ։ Այսպիսի հնարքներով մեծամեծ յաղթութիւններ առին Հռովմայեցիք Պուլիոս հիւպատոսի առաջնորդութեամբ։ Հռովմայեցիք այն յաղթութեանց վրայ վստահանալով գնացին դէպի Աֆրիկէ՝ Հռեգուղոս հիւպատոսի առաջնորդութեամբ։ Բայց Կարթագինեցիք Տարենտացւոց նման՝ իւրեանց օգնութիւն կանչեցին Յունաց զօրքը։ Հռեգուղոս յաղթուեց, ինքն էլ գերի ընկաւ։ Կպատմեն թէ քանի մի դարուց յետ, երբ Հռովմայեցիք մէկ պատերազմում յաղթութիւն արին, Կարթագինեցիք արժան դատեցին Հռեգուղոսին ուղարկել խաղաղութիւն խօսելու համար, իսկ Հռեգուղոս հայրենասէր դոլով՝ քան թէ անձնասէր, գնաց Հռովմայեցւոց բանակը, և փոխանակ խաղաղութիւն խօսելու՝ համոզեց նրանց որ կրկին պատերազմեն։ Երբ Հռեգուղոս վերադարձաւ, առաջուց Կարթագինեցիք նորա գործերը իմանալով՝ չարաչար մահուամբ սպաննեցին հայրենասէր և անձնանուէր Հռեգուղոսին։ Այն առաջին Պունիկեան պատերազմը վերջացաւ (264—241) Հռովմայեցւոց յաղթութեամբ։ Կարթագինեցիք մեծ դումար փող վճարեցին Հռովմայեցւոց, և Սիկիլեան էլ միանալով Հռովմայ հետ դարձաւ՝ առաջին դաւառ։

Առաջին Պունիկեան պատերազմից յետոյ Հռովմայեցիք Իտալիում բնակող Գաղղեացւոց էլ նուաճեցին. նոյն ժամանակ Կարթագենեցիք էլ Ամիլկար Բարկասի առաջնորդութեամբ առին հարաւային Սպանիան՝ նորա թանգագին արծաթահանքերով։

Կարամեն թէ Ամիլկարի ինամեայ Աննիբաղ որդին հօրը կ՝ազաչէր որ նրան էլ տանի Սպանիոյ պատերազմը. հայրը յօժարեց տարաւ իւր որդի Աննիբաղին զոհարանի մօտ, և ստիպեց երդուիլ որ մինչև ցմահ անհաշտ թշնամի լինի Հռովմայեցւոց։ Աննիբաղը սիրով կատարեց իւր հօր կամքը։ Աննիբաղը զինուորական ոգւով մեծացաւ, և ցոյց տուաւ զարմանալի քաջութիւնք իւր հաստատ և անվեհեր բընութեամբ։ Երբ վերջին ժամանակները Սպանիոյ Կարթագենեցւոց զօրաց սպարապետ նշանակուեց, այնպիսի քաջութիւններ գործեց, որ նորան ընդունեցին իբրև հին դարերու քաջ զօրապետ։ Օրինուորների հասարակ կեանք կ՝վարէր, անխոնջ կատարէր ամէն պատերազմական նեղութիւնները, տաքութիւնը, ցուրտը, անքուն գիշերներ։ Պատերազմի ժամանակ միշտ յառաջ կերթար, և պատերազմը վերջանալուն էլ միշտ վերջինը կվերադառնար. զինուորները Աննիբաղին իբրև Աստուած կպաշտէին։ Աննիբաղ իւր կենաց մինչև վերջին կէտը հաստատ պահեց իւր երդումը, և Հռովմայեցիք երբէք ունեցած չէին այնպիսի ոխերիմ թշնամի։ Աննիբաղ առաջին անգամ յարձակեցաւ Սպանիայի մէջ գտնուած Հռովմայ գաշնակից Յունաց Սագունտ ինի գաղթականութեան

վրայ, և Սագունտոնը աւերակ դարձաւ և այս ե-
զաւ երկրորդ Պունիկեան պատերազմին պատճառը:
(218—201), վաթսուն հազար վարձկան զօրքով և
բազմաթիւ փղերով Աննիբաղ հեռացաւ Սպանիա-
յից, անցնելով Պիրենեան լեռները, և հարաւային
Գաղղիա, հասաւ Ալպեան լեռները: Այն տեղ նրա
առաջ շատ դժուարութիւններ կային. պէտք անց-
նէր ահագին ձիւնապատ և սառուցապատ Ալպեան
լեռները. զինուորները, ձիաները և փղերը անդադար
ձորերը թափելով: Նոյն ժամանակ սարիպուած էին
լեռնաբնակ ցեղերուն հետ էս պատերազմելու: Ան-
նիբաղ իւր զօրաց կէսը և համարեա բոլոր փղերը
կորսընելով՝ հազիւ կարողացաւ Ալպեան լեռները
անցնել: Վերջապէս մնաւ հիւսիսային Իտալիան
ուր սկսաւ իւր քաջութիւնները ցոյց տալ շարու-
նակ պատերազմաց մէջ: Երեք տեղ իրարու վրայ
Ջարդեց Հռովմայեցւոց զօրքը, Տիկինոն և Տրեբիա
գետերի և Տրասիմեն լճին մօտ: Որով կարողացաւ
իւր ճանապարհը բանալ դէպ ի Հռովմ երթալու:
Հռովմայ Գերագոյնը երկիւղից յափշտակուած ե-
րեք օր շարունակ նիստ ունեցաւ՝ հայրենեաց ազա-
տութեան հնարքը գտնելուն համար. և ընտրեց Փա-
բիոս Մաքսիմոսին Դիկտատոր:

Աննիբաղ շուտով չկամեցաւ Հռովմայ վրայ յարձակուիլ, բայց առաջ գնաց հարաւային Իտալիա: Փոքձ և զգաստ Փաբիոս Մաքսիմոսը մեծ պատերազմ չտուաց, նա ուրիշ նպատակաւ դանդաղ կ'շարժէր. սակայն միշտ կաշխատէր թշնամեաց ճանա-

պարհը փակելու և յանկարծական յարձակումներով ակարացնելու Կարթագինեցւոց զօրքը։ Այս պատճառաւ էլ նա ստացաւ Կունկտատոր անունը որ է դանդաղկոտ։ Մէկ անգամ Փաբիոսը կարողացաւ Աննիբաղին կրճի մէջ փակելու։ Աննիբաղ իւր նեղ դրութիւնը տեսնելով՝ մէկ հնարք գտաւ ազատուելու, հրամայեց որ մի քանի հարիւր եղանց եղջիւրներից վրայ կապեն այրած շուրեր, և թողնեն Հռովմայեցւոց վրայ։ Երբ եղները կատաղած մտան Հռովմայեցւոց մէջ, նոքա շփոթուած խառնուեցան, և այն ժամանակ Աննիբաղը յարմար միջոց ըստուս, կրճից դուրս գալու։ Երբ Փաբիոսի դիկտատորութեան ժամանակը լրացաւ, Հռովմայեցւոց զօրաց սպարապետութիւնը ընդունեցին երկու երևելի հիւպատոսները Պօղոս Էմելիոս և Վարրոն։ Առաջինը շատ զգաստ էր և Փաբիոսին կնմանէր, իսկ հեռանդուն և կրակոտ Վարրոնը Էմիլիոսի հետ չէր համաձայնում։ Այն հիւպատոսները օր ընդ մէջ կ'վարէին իւրեանց սպարապետութեան պաշտօնը։ Վարրոն իւր սպարապետութեան օրը սաստիկ պատերազմ բացաւ Աննիբաղի դէմ Կաննէսի մօտ (Ապուլիայում), և այն պատերազմում այնպէս յաղթուեցան և այնպիսի մեծ վնաս կրեցին Հռովմայեցիք, որ երբէք տեսած չէին, թէպէտ նոցա զօրքը Կարթագինեցւոց վրայ կրկնապատիկ առաւել էր։ Պատմեն թէ Հռովմայեցւոցմէ, 50,000 զօրք սպանուեց և թէ Աննիբաղ անթիւ մատանիներ ուղարկեց Կարթագինէ (մատանին Հռովմայեցւոց զինուորի նշանն էր,

սպանուած ժամանակ նրանով էին ճանաչում իւրեանց զօրաց)։ Այն պատերազմից յետոյ էլ Աննիբաղը չվստահացաւ Հռովմայ վրայ արձակուելու, և գնաց ձմերելու Կապուա քաղաքը (Կամպանիայում)։ Հարաւային Իտալիոյ բոլոր ցեղերը հեռացան Հռովմից։ Հռովմայ Գերակոյտը Վարրոնին փոխանակ պատժելու շնորհակալութիւն մատոյց, որ հայրենեաց աղատութեան համար առանց յապաղելու պատերազմեց։ Հռովմայ կանանց արգելած էր դուրս գալ վասն զի նոքա սգալով իւրեանց ազգականաց վրայ, զօրքը կ'վհատէր։ Հռովմայ բոլոր երիտասարդները զինուորեալ էին, և հաղարաւոր ստրուկներ Հռովմայ պաշտպանելու համար առանձին զօրք էին կազմել։ Գերակոյտը ի վերջոյ վճռեց որ մարդիկ զոհեն չաստուածոց, որ նոքա Հռովմը թշնամեաց ձեռքէն աղատեն։ Զորս մարդ կենդանի թաղեցին Հռովմայ հրապարակում իբրև զոհ չաստուածոց։ Երբ կրկին գարնան ժամանակ պատերազմը նորոգուեց, Կարթագինեցիք սկսան շատ անգամ յաղթուել և նուաղել։

Կարթագինէում կային Աննիբաղին սաստիկ նախանձաւորք, որք միշտ կ'յետաձգէին հասանելի պաշարը, դրամը և նոր զօրք. սրանով պատերազմի յաղթութիւնը անցաւ անխոնջ Հռովմայեցւոց կողմը։ Մարկեղոս հիւպատոսը մտաւ Սիկիլիա, և երկար պաշարմունքից յետ Սիրակուսա քաղաքն առաւ, որ առաջուց Կարթագինեցւոց դաշնակիցն էր։ Սիրակուսայի պէս հարուստ քաղաքը իսպառ կողոպ-

տեցին Հռովմայեցւոց անգութ զինուորները։ Սպանուած քաղաքացւոց մէջ դտան նոյնպէս երևելի մաթեմատիկոս և մեքենագէտ Արքիմեդէսի մարմինը, որ երկար ժամանակ իւր հնարած մեքենաներով կարողացաւ թշնամեաց նաւերը այրել, իւր հայրենիքը պաշտպանել։ Պատմեն թէ վերջապէս երբ որ Հռովմայեցիք մտան Սիրակուսա, նախ գնացին Արքիմեդէսն սպաննելու. և երբ մտան տեսան որ այն հայրենեաց պաշտպանը մաթեմատիկական հաշիւներով էր պարապած, իւր աշխատութեանց ժամանակ սրոյ առաջ գլուխը խոնարհեցնելով սպանուեցաւ։ Հռովմայեցւոց երկրորդ զօրապետը երիտասարդ և հանճարեղ Սկիպիոնը յաղթութեամբ առաւ Սպանիան, և գնաց դէպ ի Աֆրիկէ, ուր դաշնակից դտաւ իրեն Նումեդիոյ թագաւոր Մասինիսսային Նումիդիան այժմ Ալէջիրն է կամ Ալճէրիան։ Կարթագինեցիք երբ որ տեսան իրենց դրութիւնը, վճռեցին որ Աննիբաղ շուտով վերադառնայ և իւր հայրենիքը սարսափելի վտանգներից ազատէ։ Թէպէտ Աննիբաղ ցանկացաւ շուտափոյթ հարենեաց օգնութիւն տալու, սակայն չկարողացաւ։

Զամա քաղաքի մօտ Սկիպիոնը սաստիկ ջարդ տուեց Կարթագինեցւոց որով Աֆրիկեցի անունը ըստացաւ։

Այն անյաջող պատերազմից յետոյ Կարթագինեցիք ստիպուեցան խաղաղութիւն խօսելու՝ ամենադժուար պայմանները ընդունելով, յանձն առին որ այրուի իւրեանց ամբողջ նաւատորմիղը, պատերազ-

մական ծախուց մասին տհաղին դումար վճռեցին, և խոստացան որ առանց Հռովմայ հաճութեան ոչ ոքի հետ չպատերազմեն։ Բայց Աննիբաղ երբեք չէր վհատում, և ամենայն կերպ աշխատում էր որ իւր ատելի Հռովմայեցիներից վրէժը առնու, և Հայրենեացը օգնէ։ Այս պատճառաւ գաց Ասիա, և Հռովմայ դէմ գրգռեց Ասորւոց թագաւոր երրորդ Անտիոքոս մեծին որ պատերազմում յաղթուեց և իւր տէրութեան մէկ մասն էլ կորցրեց։ Այն պատերազմից յետոյ Աննիբաղ փախաւ Ասիոյ մէկ իշխանի մօտ, Հռովմայեցիք պահանջեցին որ իւրեանց անհաշտ թշնամի Աննիբաղին յետ ուղարկէ։ Աննիբաղը երբ որ տեսաւ իւր թշուառութիւնը՝ թոյն ընդունեց որ իւր թշնամեաց ձեռքը չընկնի։ Երբ Կարթագինացւոց հասարակապետութիւնը կործանուեց, այլ ևս չմնայ ուրիշ մէկ հզօր տէրութիւն որ կարողանար Հռովմին ընդդիմանալ։ Հռովմայեցիք էլ կաշխատէին որ բոլոր աշխարհս տիրեն։ Նախ Մակեդոնացւոց թագաւոր Փիլիպպոս Ե-ից վրէժն առնեն. այն պատճառաւ որ երկրորդ Պունիկեան պատերազմի ժամանակ Աննիբաղի դաշնակիցն էր։

Դանի մի պատերազմից յետոյ Մակեդոնիան իսպառ նուաճեց։ Յետոյ արին Յունաստանը և դարձաւ Հռովմայ գաւառ՝ Աքայիա անունով՝ 146 թուին։ Մի ևնոյն թուին Կարթագինէի գործն էլ վերջացաւ։ Կարթագինէի դիրքը պատուական լինելով՝ վաճառականութիւնն էլ շատ ծաղկած էր, և վաճառականութեամբ կրկին սաացաւ նախկին հարստութիւնը

և շքեղութիւնը։ Բայց նուաստագիոյ Մասենիսսա թագաւորը նրանց հողերը յափշտակելով՝ միշտ նեղութիւն կ'տար, և Կարթագինեցիք հնարք չէին դանում ազատուելու, վասն զի նոքա դաշն ունէին Հռովմայեցւոց հետ որ առանց նրանց հրամանի ոչ ոքի հետ կարող չէին պատերազմելու։ Վերջապէս շատ նեղութիւն կրելուց ստիպուեցան առանց Հռովմայ հաճութեան պատերազմել։ Երբ որ այս լուրը հասաւ Հռովմ. Հռովմայեցիք վճռեցին որ այն իրանց առելի Հասարակապետութիւնը խսպառ ջնջեն Կատոն՝ Հռովմայեցւոց դաժան հանարակալը (մի առանձին ասահճանաւոր էր որ կը հսկէր քաղաքացւոց հարստութեան վերայ)։ Ներակոյսին մէջ ամէն ժամանակ կոչազակէր ասելով. "Կարթագինն պէտք է քանդել" Հռովմայեցւոց զօրքը կոչին մեծաւ Էֆրիկէ, և սկսաւ երրորդ Պունիկեան պատերազմը (149—146)։ Առաջուց Կարթագինեցիք Հռովմայ բոլոր պահանջմունքները կատարեցին, պատանդ տալով նրանց մի քանի հարիւր ազնուական երիտասարդներ, ամրողջ նաւատորմիղը և բոլոր պատերազմական զորձիքները էլ յանձնեցին Հռովմայ իշխանութեան։ Սակայն վերջը երբ նոքա նրանց առաջարկեցին իւրեանց քաղաքը թողնելու և ուրիշ տեղ դաղթելու, Կարթագինեցիք ատելի կատաղեցան, և երդուեցին որ մինչև վերջին կէսը իւրեանց հայրենեաց ազատութեան համար պատերազմեն։ Շուտով զօրք կազմեցին, իւրեանց ատենի տանիքները քանդեցին, և այն սիւներից պատրաս-

տեցին նաւեր, ամենայն տեսակ մեռաղներ ժողովեցին ի միասին և սկսան նիզակներ և զանազան զարդիքներ շինել. մինչև անգամ կանայք իւրեանց մազերը կտրելով աղեղանց համար լարեր կպատրաստէին: Հռովմայեցիք երկու տարի պաշարեցին Կարթագինէ քաղաքը. բայց երբ Սկիպիոն կրտսեր Ափրիկեցին նշանակուեց սպարապետ, նա միայն կարողացաւ քաղաքը մտնել, վեց օր շարունակ տևեց պատերազմը մինչև որ Հռովմայեցիք հասան ամրոցին: Մնացած Կարթագինեցիք իւրեանց զօրապետ Ասդրուբաղի հետ անձնատուր եղան, բայց Ասդրուբաղի կինը իւր մարդոյն չհետևեց. նա իւր ձեռքք սպանեց իւր որդւոցը և ինքն ընկնելով բոցոյ մէջ այրուեց, զինուորները լիակատար իրաւունք ստացան քաղաքը կողոպտելու, և շարունակ հրդեհը Կարթագինէն ողբալի տեսարան դարձրուց: Ասպատմեն թէ Սկիպիոն նայելով այն երևելի քաղաքին հրդեհի վերայ՝ մտածեց Հռովմայ ապագայի համար և արտասանեց յետագայ տողերը Հոմերոսի Եղիականից; 50,000 դերի ընկած Կարթագինեցւոց իբրև ստրուկ վաճառեցին, և Կարթագինէն դարձաւ Հռովմայ գաւառ Ափրիկէ անուամբ: Հռովմայեցիք կարողացան այնքան յաղթութիւններ անել իւրեանց կանոնաւոր զօրքով: Նոցա զօրքը լեգէոններ կ՚բաժանուէր: Հռովմայեցւոց կատարեալ լեգէոնը սատիկ զինուորեալ կ՚լինէր, և նրանց օդնական կլինէին միշտ թեթևազէն զինուորները, այսինքն ազեղնաւորները և պարսաւորները, մէկ դունդ էլ հեծելազօր: Մէկ

Լեգեոնը կրաղկանար հինգ հազար զինուորից։ Էյ-քան զօրքն էլ Իտալիայի քաղաքներից դուրս էին նրանց օգնութիւն. որոնք կախումն ունէին Հռովմից և դաշնակից էին նրան։ Լեգեոնը կրաժանուէր տասը վաշտ, և վաշտը դրօշակի տեղ ունէր միայն արծիւ՝ փայտի վերայ շինուած։ Ծանր զինուորական զօրքը կկրէր պղնձէ կամ երկաթէ սաղաւարտ, փայտէ զրահ վահան՝ վրան կաշի պատած՝ երկաթակապ, երկայրի սուր և երկար ձգելու համար կարճ նիզակներ. կամ երկուսի տեղ մէկ կլինէր, բայց երկար և ծանր։ Պատերազմ գնալու բացի իւր զէնքից իւրաքանչիւր զինուոր մի քանի օրուայ պաշար կունենար հետը, և դարձեալ կտանէր իւր վրայ ցից, չուան, տապար և ուրիշ պարագայք էլ պատրաստ կունենային որ հարկաւոր եղած միջոց շուտով վրաններ պատրաստեն։ Հռովմայեցւոց զօրքը միշտ մարմնակրթութեամբ կըպարապէր, որով շատ ուժ և զօրութիւն կտանային, պատերազմի ժամանակ էլ միշտ յաղթող կըհանդիսանային։ Հռովմում այսպիսի մարմնավարժութիւնը կկատարուէր Արէսի դաշտում, միմեանց հետ սրով կպատերազմէին, նիզակներ և աղեղներ կձգէին, կվազէին, կցատքէին, երբեմն զինուորական կընկնէին Տիբերիս գետը, և լողալով միւս եղերքը կանցնէին։ Մինչև Ծերակոյտի անդամներն անգամ և հիւպատոսները երիտասարդաց հետ կպարապէին զանազան պատերազմական գործերու և իրենք էլ կաշխատէին առնոց վարժելու։ Հռովմայեցիք Յոյներից շատ սեսակ պատերազմական արհեստից մինչ կատարելագոր-

ծուեցան, և դանազան մեքենաներ ակաան շինել քաղաքաց պաշարման համար. մի այնպիսի մեքենայ, շինեցին որով ամրոցի պարիսպը կարողանում էին քանդել, այն էր մեկ սիւն՝ ծայրը պղնձէ ոչխարի գլուխ. շղթաներով առաջ էին քաշում, խփում էին պարիսպին և բաւական խախտում։ Օլնուորները՝ որոնք պատերազմի մէջ յաղթող էին հանդիսանում, նոցա պարգևում էին գանձի պատկեր, որ տան օրերը կկրէին։ Այն զօրաստանը որ մեծ քաջութիւն էր գործել պատերազմի մէջ, նորան մեծ հանդիսով կընդունէին, սպիտակ ձիաներ լծած կառքի վրայ նստած կմտնէր քաղաք, նրա առաջից կերթային շրջթայակապ զերիները. յետոյ լեգէոնները և բոլոր քաղաքն առաջուց ընդ առաջ կերթային։ Հռովմայեցւոց, զօրաց արժանաւորութիւնը այն էր որ կարգ և կանոն կար նրանց մէջ, նրանց գլխաւոր յատկութիւնն էր կարգաւորութիւն և հնազանդութիւն, այս յատկութիւնները ունէր նա և բոլոր Հռովմայ ժողովուրդը։ Կեանքի մէջ ունեցած չափաւորութեամբ, միաբանութեամբ և քաջութեամբ նոքա դարձան բոլոր ժողովրդոց տէր և համարեա բոլոր աշխարհն էլ տիրեցին։

Հին ժամանակները Հռովմայեցիք կընակէին փայտէ կամ հողէ շինած խրճթոց մէջ, նոցա հանդերձն էր Յունաց ձև, գլխաւորապէս երկրագործութեամբ կպարապէին, մինչև անդամ հիւպատոսները իւրեանց դաշտը իրենք կվարէին։ Նոցա սովորական կերակուրն էր միս և միրգ։ Հայրը իւր տան մէջ անսահման իշ-

խանութիւն ունէր, մինչև որդւոց կեանքը անդամ հօրից էր կախուած, և հայրն էլ մի և նոյն ժամանակ կհպատակէր սէրութեան օրինաց: Պատրիկաց և ռամկաց խառնուրդեան ժամանակ Հռովմայ չթուլանալուն պատճառը այն է, որ նոքա երբ արտաքին թշնամեաց հետ կպատերազմէին, իւրեանց վէճը մէկ կողմը կմնար և սիրով կմիանային պատերազմելու իւրեանց հայրենեաց ազատութեան համար:

Հին Հռովմայեցիք շատ ջերմեռանդ էին և խրատութեամբ կ'պահէին իւրեանց կրօնական կանոնները և կարգաւորութիւնը: Նոցա կրօնքը Յունաց կ'նմանէր: Նոցա գլխաւոր Աստուածներն էին տէր երկնից Դիոս (Երամազդ) և նորա ամուսին Հերա յետոյ Յանոսը Աստուած ժամանակի, որ երկու դիմաք կներկայացնէին, իբր թէ միևնոյն ժամանակ նա պարունակումէ իւր մէջ անցեալը և ապագայն: Վեստա (մշտավառ կրակ) նորա տաճարում միշտ քուրմերը կրակ կ'պահէին: Բացի այս աստուածներից իւրաքանչիւր դերդաստան իւրեանց նախնեաց սեպհական աստուածները կպաշտէր: Հռովմում կար քրմական քահանայապետութիւն, որոյ գլուխն էր քրմապետ (pontifex maximus) քուրմերը կարգ կարգ կ'բաժանուէին իւրեանց պաշտօնին համաձայն: Պային Փլամինեան քուրմեր Երամազդայ, Արեսի և այլոց կծառայէին, յետ այնորիկ հաւահմայք, այն քուրմերը որք գուշակութեամբ կ'պարապէին ապայն:— Քուրմերը Հռովմում առանձին կարգ չէին կազմում նոքա ևս կալող էին զանազան քաղաքական և կրօ-

նական պաշտօններ վարելու։ Իւրաքանչիւր հայր իւր տան մէջ իւրեանց աստուածոց կամ թերափիզ քուրմն էր։ Հռովմայեցւոց սովորութիւնները հետզհետէ սկսան փոփոխուիլ։ Քանի որ Հռովմը զանազան երկիրներ ձեռք բերաւ և հարստացաւ, այն ժամանակից սկսաւ հին կարգերը կորսնել, նրանց մէջ մտաւ շռայլութիւն և ծուլութիւն։ Հռովմայ հարուստները միմեանց հակառակ սկսան մեծամեծ տներ շինել և գեղեցիկ այգիներ գնել։ Շատ շռայլ կեանք կ'վարէին թանկագին հագկերոյթ կ'պատրաստէին, և շատ ստրուկներ կպահէին իւրեանց ծառայելու համար։ Ստրկութիւնը էր նոցա վարուց և բարուց խանգարող գլխաւոր պատճառը։ Առաջ Հռովմում ստրուկներ շատ սակաւ էին, և քաղաքացիք իրենց գործը միշտ իրենք կհոգային։ Յետոյ յաղթութիւններից յետոյ ստրկաց թիւը շատացաւ, մինչև անգամ փողոցներում կ'վաճառէին նոցա։

Առաւել մեծ գնով կ'վաճառէին յոյն ստրկաց, վասն զի նոքա բաւական ուսում ունէին, գիտէին զանազան արհեստներ և ուսում, Հռովմայեցիք իւրեանց մանկանց անգամ ստրկաց կյանձնէին դաստիարակելու։ Յունաց լեզուն Հռովմայեցւոց մէջ սովորութիւն դարձաւ և Յունաց գրականութիւնը մեծ յարգութիւն ստացաւ Հռովմի մէջ։ Յոյներից ընդունեցին նուրբ կրթութիւն, նրանցից սովորեցան գեղեցիկ ճարտարապետութիւն, սկսան շինել շքեղ տաճարներ. թատրոններ, բաղանիքներ, և մի ևնոյն ժամանակ էլ ընդունեցին Յունաց կեղծաւորթիւնը,

Ծուլութիւնը և ուրախ կեանք անցուցանելը։ Առաւել և անրանց բարոյականութիւնը խանգարուեց երբ որ Ասիան նուաճեցին և ընդունեցին Ասիոյ բռնաւորաց սովորութիւնները։ Հռովմայ քաղաքացիներից շատերը արհամարհանօք կնայէին շռայլութեան և օտար սովորութեանց վրայ։ Սրանցից երևելին էր Կատոնը, որ Յունաց և Կարթագինեցւոց թշնամին էր, և ամենայն կերպ կաշխատէր հին Հռովմայեցւոց նմանիլ։ Երբ նա ստացաւ համարակալի պաշտօն, սկսաւ աշխատիլ վերցնելու շռայլութիւնը, բայց չկարողացաւ իւր նպատակին հասնել, ընդհակառակն սրանով իրեն թշնամիք պատրաստեց։

Կատոնը ցանկացաւ որ օրինօք արգելէ կանանց հարուստ հանդերձները. բայց կանանց մէջ այնպիսի խռովութիւն ծագեց, որ շուտով այն օրէնքները փոխուեցան։ Կատոնը սաստիկ թշնամաբար կ'վարուէր Սկիպիոն Էմիլիկեցւոյ դէմ, վասն զի նա չափազանց կսիրէր և կպաշտպանէր Յունաց բանաստեղծներին և իմաստասիրաց։ Կատոնը ժողովուրդը դրդռելով շատ անգամ Սկիպիոն Էմիլիկեցւոյն դատեցին իբր թէ նա յափշտակել էր Արքունական գանձը. բայց յայնմանէ իբր թէ քանի մի գործոց մէջ էլ ընդդէմ օրինաց էր վարուել։ Թէպէտ այս տեսակ անբաստանութիւնները ո՛չ ինչ ապացոյց չունեցան, սակայն Սկիպիոնը ստիպուեցաւ հեռանալ Հռովմից, և իւր դեանքը վարեց հանգստութեան մէջ՝ պարապելով Յունաց մատենագրութեամբ։ Դժնեայ և խստաբարոյ Կատոնն անգամ վերջը սկսաւ սովորել Յունաց

գրականութիւնը։ Այն ժամանակից Հռոմում ծագեցին վնասակար անհամաձայնութիւնք և սաստիկ խռովութիւնք զանազան ընկերութեանց մէջ։ Թէպէտ պատրիկների և հասարակ ժողովրդեան մէջ երբած խռովութիւնը դադարած էր, և երկոքեան էլ միատեսակ իրաւունք ունէին, սակայն փոքր միջոց առեց այն հաւասարութիւնը, միայն բանիւ կար, այլ ոչ գործով։ Անդադար պատերազմերով Հռոմայ երեւելի և հարուստ կարգերը, ինչպէս և վաճառականները, բոլորովին անանկացան, ընկան վերջին աղքատութեան մէջ, այսպէս որ Հռոմի մէջ մնաց երկու կարգ հարստաց և աղքատաց։

Ազնուականները կամ իշխանաւորները այն միջոցին առաւել հարստացան, վասն զի պատերազմաց ժամանակ հասարակութեան վարելահողը յափշտակեցին, աղքատ մարդկանց հողերն էլ կէս գնով կը գնէին, և ձեռք էին բերում տէրութեան գլխաւոր և բարձր պաշտօնները, որ էին հիւպատոսութիւն, դատաւորութիւն, գանձապետութիւն, կուսակալութիւն և այլն

Ընութեան ազնուութիւնը բոլորովին վերացաւ, նորա տեղը տարածուեց կաշառառութիւն, այն պատճառաւ էլ պաշտօնները շատ շահաբեր էին, և իւրաքանչիւր հարուստ մարդ կաշխատէր այն տեսակ պաշտօններ ձեռք ձգելու, մանաւանդ կուսակալութեան պաշտօնը։ Ազնուականները մեծ պարտուցտակ երբ ընկնէին կաշխատէին որ կուսակալութեան պաշտօնիւ գնան, Սպանիա, Սիկիլիա, Ասիա կամ

Էփրիկէ, և ժողովուրդը նեղելով կժողովէին մեծ գումար, և իւրեանց ծառայութեան ժամանակը լրանալուն պէս կվերադառնային մեծ հարստութեամբ։ Հարստահարեալ ժողովուրդն էլ օգնութիւն և արդարութիւն կխնդրէր այն Ներակոյտից, որ կրաղկանար կուսակալաց բարեկամներից և ազգականներից։

Միւս կողմից աղքատաց կամ ստրկաց կարգը հետզհետէ կրազմանար, վասն զի նոքա իւրեանց աղքատութեան պատճառաւ լեգէոնաց մէջ չէին ծառայել նրանց հետ կմիանային նա և անանկացած քաղաքացիք և ազատուած ստրուկները։ Առաջ հարուստները կվարձէին ստրկաց հողերը վարելոյ համար, բայց այժմ այն հարուստները հողերը իրենց ստրկաց ձեռաք կվարէին, և իրենց դաշտաց վրայ տնկեցին այգիներ, և այն եղաւ Իտալիոյ երկրագործութեան անկման պատճառը։

Հռովմը կստանար ցորեան հեռաւոր երկիրներից։ Երկեստներն էլ ընկան այլ ևս այն օգուտը չէր ստանում արհեստաւորը՝ ինչ որ յառաջ ունէր, և սորա պատճառը այն էր որ իւրաքանչիւր հարուստ մարդ իւր ստրուկներից կպատրաստէր ամենայն տեսակ արհեստաւոր։

Մի քանի ազնուաբարոյ անձինք իզուր կաշխատէին ստրկաց վիճակը բարւոքելու։ Սրանցից երևելիքն էին երկու եղբարք Տիբերիոս և Գայիոս Գրակքոսները։ Նոքա շարունակ քանի մի անգամ ընտրուեցան ժողովրդական արիրուններ, և ամենայն կերպ

կաշխատէին Լիկինիոսի օրէնքները նորոգելու այսինքն հարուստ քաղաքացւոց որոշել բաւականաչափ վարելահող իսկ մնացածը բաժանել աղքատաց վրայ։ Գրակքոսեանք շատ սիրելի էին ժողովրդեան, բայց հարուստներին ատելի, և հարուստները միւս տրիբուններին միշտ կ'կաշառէին որ ընդդիմանային Գրակքոսեանց։ Եւ այն երկու մեծահոգի եղբարք կործանուեցան բռնական մահուամբ (133 և 121 նախ քան Ք. Ծնունդը)։ Գայիոս Գրակքոսը թէպէտ կաշխատէր աղքատաց օգնելու, բայց սաստիկ ինաս բերաւ հայրենեաց։

Ստիպեց որ աղքատ քաղաքացւոց միշտ հաց բաժանեն ցած գնով արքունական շտեմարաններից, յետ այնորիկ սկսան ձրի հաց բաժանել։ Ժողովուրդը այս տեսնելով, ամենայն տեղից աղքատներ ժողովեցան Հռովմ, նրանք էլ ձրի հաց սանալուց՝ արհամարհանօք կնայէին աշխատութեան վրայ, և այս տեսակ ծոյլ և անհանգիստ ամբոխը վերջը սաստիկ երկիւղալի եղաւ հասարակապետութեան անդորրութեան համար։

Հասարակապետութեան անկումն ի Հռովմ։

Գրակքոսեանց յետոյ Հռովմում առաւել ևս սաստկացաւ ազնուականաց և հասարակ ժողովրդեան խռովութիւնը (այսինքն ռամիկապետական և ազնուապետական կարգաց մէջ)։ Այն խռովութեան միջոցում բարձրացան քանի մի փառասէր մարդիկ, որք

յափշտակեցին իշխանութիւնը, նոքա կարհամարհեին օրէնքները, և պատճառ էին ներքին երկպառակութեանց։ Այն ժամանակից արդէն սկսաւ հասարակապետութեան կործանումը։ Գլխաւոր իշխանութիւն էր լեգէոնաց զօրապետաց ձեռքը լեգէոնները մշտական զօրք կկազմէին։ Ներքին խռովութեանց օրինակ եղան Մարիոս և Սիլլան։ Մարիոսը հասարակ ցեղից էր, տգէտ ու անկիրթ, բայց զինուորական ծառայութիւնը մոռնելով՝ մինչև հիւպատոսութեան հասաւ։ Մանաւանդ նորա անունը բարձրացաւ Յուգուրթայի պատերազմում։

Յուգուրթայն Նումիդիայի Մասինիսսա թագաւորի թոռն էր։ Յանդուգնդն էր և անզսպելի բնութեամբ. կհամարուէր առաջին հեծելամարտ Նումիդիայում, նաև այնպէս զօրեղ էր որ որսի ժամանակ առիւծուց վրայ կյարձակուէր Ատլաս լեռներում։ Նա ցանկանալով ամբողջ Նումիդիային տիրել, սպանել տուաւ իւր եղբարց։ Բայց Նումիդիան Հռոմից կախուած լինելով՝ Հռոմայ Ծերակոյտը զօրք ուղարկեց Յուգուրթային պատժելու։ Հռոմայեցիք մինչ այն աստիճան կորցրել էին իւրեանց աղնուութիւնը որ Յուգուրթայից կաշառուած, վերադարձան առանց պատիժ տալու։ Այն միջոցում Մարիոսը սաստիկ սիրելի եղաւ Հռոմայ հասարակ ժողովրդեան, և նոցա օգնութեամբ ընտրուեց հիւպատոս, որ այն ժամանակ շատ դժուարին և համարեա անկարելի բան էր հասարակ մարդոյն հիւպատոս ընտրուիլը։ Նա սովորականից և կարգից դուրս իւր

զօրաց մէջ ընդունեց ամենախիզճ քաղաքացւոց յաղթութեամբ վերջացրուց Յուգուրթայի պատերազմը, որով արժանացաւ մեծ պատուոյ։ Գերեալ Յուգուրթան շղթայակապ հետևումէր Մարիոսի կառքին երբ Մարիոսը հանդիսով Հռոմ կմտնէր։ Վերջը Յուգարթան բանտարկեալ սովամահ եղաւ (106 թուին)։ Այն միջոցին Իտալիոյ հիւսիսային սահմաններում երևեցան վայրենի Գաղղիացւոց և Գերմանացւոց ցեղերը, Կիմբրացիք և Տևտոնեանք, նոքա փաթաթուած էին գազանաց մորթիներով բարձրահասակ մարդիկ էին և ուժով. նոքա ջնջեցին քանի մի Հռոմայեցւոց գնդեր և ահագին սոսկում բերին Հռոմայ վրայ։ Այն ժամանակ ժողովուրդը դիմեց իւրեանց սիրելի Մարիոսին, և նա օրինաց հակառակ՝ չորս տարի շարունակ հիւպատոս ընտրուեց։ Նախ Տևտոնեանց մեծ ջարդ տուաւ Հարաւ. Գաղղիայում։ Երբ Մարիոսի զինուորները թշնամեաց բանակը մտան, նրանց դէմ եկան զինուորեալ կանայք, որոնք իրենց ազատութեան համար կպատերազմէին, նրանք իւրեանց որդւոց կոտորում էին որ թշնամեաց ձեռքը գերի չընկնեն (102)։ Յաջորդ թուին Մարիոսը յարձակուեց Կիմբրացւոց վրայ, որոնք արդէն Օուիցերիայն մտնելով, Ալպեան լեռներից անցել էին և վահանաց վրայ սողալով մտել էին հիւս. Իտալիա։ Մարիոսը այն բարբարոսներին էլ ջարդեց, նորանց կանայքն էլ Տևտոնեան կանանցը կհետևէին նոքա էլ սկսան պատերազմել։ Այն պատերազմաց մէջ Մարիոսի պատ՛ուը չափազանց

բարձրացաւ. այնքան որ ժողովուրդը նորան անուանեց փրկիչ Հռովմայ: Զինուականք առաւել ևս ատեցին նորան, և նորան հակառակ ոսոխը եղաւ Սիլլան: Սիլլան երևելի զեղեց էր, խելացի և ուսումնական, միևնոյն ժամանակ Մարիոսի պէս փառասէր և խիստ: Սիլլան մեծ յաղթութիւններ գործեց պաշնակցաց ասուած պատերազմի ժամանակ: Իտալիոյ քաղաքները ի վաղուց հետէ կաշխատէին պաշնակից անունը վերցնել իրենցմէ և կպահանջէին Հռովմայեցւոց հետ հաւասար իրաւունքներ ունենալ: Սիմբրացւոց յարձակման ժամանակ, Իտալիոյ քանի մի գաւառք ապստամբեցան ազատութիւն ձեռք բերելու համար: Թէպէտ նոքա նուաճուեցան, սակայն Հռովմայեցիք ստիպուեցան քանի մի պահանջները կատարելու: Մարիոսը նախանձեցաւ Սիլլայի յառաջադիմութեանց և յաջողութեանց, և յարմար միջոց գտնելուն պէս սկսաւ Սիլլայի հետ յայտնի թշնամութիւն. այն միջոցում փոքր Ասիայում զօրացաւ փոքրիկ Պոնտացւոց թագաւորութիւնը Սև ծովու եզերաց մօտ: Երշակ առաջնոյ ժամանակն էլ Պոնտացիք ապստամբուում էին, բայց նա շուտով հնազանդեցնում էր նրանց, և Սև ծովի մօտ կանգնեցնում էր մի արձան որին երկար ժամանակ Պոնտացիք պաշտօն էին մատուցանում: Պոնտացւոց բաւական օգնեց Երտաշէս առաջինը. Հայոց Երշակունի թագաւորները որ մինչև այն ժամանակ երկրորդ էին համարվում Պարթևաց, այնու հետև առաջին եղան և Պարթևաց Երշակաւան կամ Երշակ իւր յօժար

կամոք տալիս է նախագահութիւնը մեր Երտաշէսին։ Մինչև այն ժամանակները Պարթևաց թագաւորներն էին դրամ կտրում, այնու հետև Երտաշէսն էր առնում այդ իրաւունքն, իւր անունը և պատկերը փոխադրել տալով դրամի վերայ։ Հայաստանի արևելքն իւր ձեռքի տակ հնազանդեցնելուց յետոյ, միանում է Պոնտացւոց Միհրդատ Եւպատոր թագաւորի հետ, որին տալիս է իւր Երտաշատ աղջիկը ի կնութեան։ Հայաստանի Արևելեան և Հիւսիսային աղգաց զօրութիւնները Հայոց զօրութիւնների հետ միացնելով Պոնտացւոց թագաւորի հետ մտաւ փոքր Ասիա. (այժմ Անատոլու), և այն տեղի փոքր տերութիւնները իւր ձեռքի տակն արաւ։

Յունաստանը այն ժամանակները Հռովմայեցւոց հասարակապետութեան նահանգն էր։

Մեր Երտաշէսը և Պոնտացի Միհրդատը փոքր Ասիան նուաճելուց յետոյ Երշիպեղագոսը նաւատորմիղներով լքցրին, նուաճեցին Թրակիան և հեշտութեամբ մտան Եւրոպա կամ միջին Յունաստան (88 թուականին)։ Հռովմայեցիք Դաշնակցաց անուանեալ կռիւներն էին վերջացնում, և զբաղուած էին Մարիոսի և Սիլլայի կռիւներովը։ Նորա լսելով Յունաստանի նուաճիլը՝ Հայոց և Պոնտացւոց զօրութիւնից. Սիլլային իւրեանց Լեգէոններովը նորանց դէմ են ուղարկում։ Մեր դաշնակից զօրութիւններն ամրացնելին Աթէնքում, բայց պաշարուելով Սիլլայից սկսան թողուլ քաղաքը, որովհետև առվը նեղումը նրանց։ Արանցից յետոյ մեր դաշնա-

կից զօրքերը և Հռովմայեցիք Բողիս և Պերգամէն քաղաքաց մօտ պատերազմելով, Հայք և Պոնտացիք ստիպուեցան թողուլ Յունաստանը և դառնալ փոքր Ասիա։ Այն յետ քաշուելու ժամանակը Հայոց զօրաց մէջ շփոթութիւն ընկնելով, Արտաշէսը սպանուումէ ներանցից. Միհրդատը ստիպուումէ 86. թուականին Սիլլայի հետ խաղաղութեան դաշն կապել, յետ տալով փոքր Ասիոյ բոլոր նուաճուած երկիրները։ Արտաշէսը նախ քան իւր մահը փոքր Ասիայից և Յունաստանից մեծ աւարներ ուղարկեց Հայաստան, երևելին էին Աթենասայ, Հերքիւլէսի, Ապոլոնի, Հեփեստոսի, Դիոսի, Արտեմիսի, Էփրոսի դեայ արձաններն իրենց քրմերովը։ Արտաշէսի մահից յետ տիրասպան զօրքը գալով Հայաստան, փոքր Ասիայից ասպատակութիւններ ուզեցին անել Հայոց երկրում, կարծելով թէ Հայերը անգլուխ են մնացած։ Մեր Տիգրան Բ. որ իւր խոհեմութեամբ և քաղաքականութեամբ բարձր էր իւր հօրից, դուրս է գնում նոցա առաջ. ջնջումէ նոցա և փոքր Հայաստանը իւր իրաւասութեան տակն է առնում։ Այնուհետև սկսումէ Հայաստանը կարգադրել։ Տիգրանայ օրերում Սելևկացւոց տանը մեծ աղմուկներ և երկպառակութիւններ էին լինում թագաւորութեան մասին։ Ասորւոց ազգը, երկար մտածելուց յետոյ լաւ համարեց Հայոց իրաւասութեան տակ մտնել։ Տիգրանին հրաւիրումեն և սա մտնելով նրանց աշխարհը հպածումէ ամբարիշտ թագաւորներուն, ինչպէս էին Անտիոքոս Պիոսը և նրա եղբայրը

Փիլիպպոսը, խաղաղացնում՝ նրանց բոլոր աշխարհը։ Եւ 85. թուականին նախ քան Ք. Ծ. Սելևկացւոց թագաւորաց թագն էր գլխին դնում։ Մէկ քանի ժամանակից յետոյ (այնէ 79 թուականին) Անտիոքոս Պիոսի կին Սեղենէն կամ Կղէոպատրան գնալով Փիւնիկէ՝ ոտքի է կանգնեցնում Փիւնիկեցւոց, և նրանց հարևան ազգացն ընդդէմ ՀԱյոց։ Տիգրանը շուտով վրայ է հասնում, պաշարում՝ Պտղոմայիս քաղաքը, ուր էր նրանց գլխաւոր զօրութիւնը, յաղթում՝ նրանց, Սեղինէ՝ն սպանում՝, և բոլոր երկիրները մինչև Պաղեստին ՀԱյոց ձեռքը անցնում։ ՀԱյք լսելով ՀԱյոց քաջութիւնները, իրենց Աղէքսանդրա թագուհւոյ խօսքովը, Տիգրա՛ն առաջ դեսպան են ուղարկում մեծ ընծաներով և խնդրում՝ նրանից պաշտպան և հովանաւոր լինել իրանց աշխարհին։ Այն ժամանակները երբոր Տիգրան կվերադառնար Ասորւոց երկիրն, Միհրդատ, որ ոխերիմ թշնամի էր ՀԱռոմայեցւոց՝ կամենում՝ երկրորդ անգամ պատերազմել նորանց հետ։ Սիլլայի դաշինքն, յետոյ որ եղաւ 86 թուականին, Միհրդատ աշխատում՝ իւր ծովային և ցամաքային դրութիւնները շատացնել։ Տիգրանը նոցա խորհրդով մտնում՝ Կապադովկիա, և այն տեղից 30,000 հոգի գերի է բերում Տիգրանակերտ։ Միհրդատը մեր Բասենեան գնդովն ընկնում՝ Քաղկեդոն քաղաքի վերայ, և նորանց օգնութեամբը ՀԱռոմայեցւոց ջարդում՝ թէ ծովն և թէ ցամաքի վերայ, որ նրանց կողմից վեր են ընկնում՝ 18,000, և այրվում՝ են 60 նաւեր։ Սրա-

նից յետոյ Պոնտացւոց թագաւորը, պաշարումէ Սիւլիկոն քաղաքը։ Ղուկուզոս լսելով Քաղկեդոնի կոտորածը և Սիւլիկոնի պաշարուիլը, շուտով վրայ է հասնում և Դրանիկոն գետի մօտ ջարդումէ Միհրդատի ցամաքային զօրքը, Միհրդատը այն ժամանակ Հռովմայեցւոց ձեռքիցը ազատուելու համար փախաւ Հայաստան։ Ղուկուզոսը պատգամաւոր ուղարկեց Տիգրանայ մօտ՝ Միհրդատին իրան ձեռքը տալու, բայց նա նրա խօսքին չլսեց, ընդ հակառակը՝ Պոնտացւոց թագաւորին բաւական զօրք տուաւ և ուղարկեց Պոնտոս։ Ղուկուզոս այն ժամանակ անցաւ Եփրատ գետը, և պաշարեց Տիգրանակերտ քաղաքը։ Այն միջոցին Տիգրանը գտնուում էր վերին Հայաստանումը, և լսելով իւր արքունական աթոռանիստ քաղաքի պաշարուիլը մեծ զօրքով օգնութիւն եկաւ, բայց երբ տեսաւ Հռովմայեցւոց սակաւութիւնը, անհոգ մնաց, մինչև խորամանկ Ղուկուզոսը յանկարծ նորա վրայ յարձակուելով փախստական արաւ, և Տիգրանակերտ քաղաքի Յոյներին մատնութեամբ քաղաքը հիշտութեամբ առաւ և միջի գանձերը կողոպտեց։ Սրանից յետոյ Հռովմայեցւոց զօրութիւնը սկսում ակարանալ, որովհետև Միհրդատը Հայոց զօրքով կրկին անգամ առնում է Պոնտացւոց աշխարհը, այն ինչ Տիգրանը նոր զօրքով Ղուկուզոսին հալածումէ Հայաստանից։ Հռովմայեցիք լսելով Հայոց և Եգիպտացւոց կրկին զօրանալը, Ղուկուզոսի տեղ նշանակումեն Պոմպէոս զօրավարին։ Այս նոր զօրութեամբ մանում փոքր

Հայաստան, և 67 թուականին երկրորդ Հայքում Եփրատ գետի մօտ, հանդիպելով Միհրդատին յաղթում է նորան։ Անուհետև Միհրդատը գնում է Պոնտոս։

Այն տեղ Միհրդատը Սկիւթացւոց ազգիցը բազմաթիւ զօրք է ժողովում, և կամենում Եւքսինեան Պոնտոսի հիւսիսային կողմերովը և Պանոնիայով մտնել Իտալիա, իսկ Գաղղիացւոց և այլոց յորդորում ապստամբիլ Հռովմայեցւոց դէմ։ Զօրքը չէ լսում իւր տիրոջը, և նորա հարազատ որդին Փառնակէս կաշառուած լինելով Հռովմայեցիներից՝ վեր է կենում իւր հօր դէմ։ Միհրդատ տեսնելով իւր որդւոյ ապստամբութիւնը, անձարացած ինքն իրան սպանում 64 թուականին։ Իսկ Պոմպէոսը Տիգրանայ ապստամբեալ որդի Տիգրանից առաջնորդուելով՝ մտնում Հայաստան, Տիգրանն էլ անձարացած հաշտութիւն է խօսում Պոմպէոսի հետ, տալով նրան շատ քանքար արծաթոյ և հրաժարելով այն աշխարհներից, որոնք Հայաստանից դուրս էին։ Այսուամենայնիւ Տիգրանը սպասում էր ժամանակի, որ իրանից խլած երկիրները ձեռք ձգի։ Գարիանոս զօրավարից յետոյ Հռովմայեցւոց արևելեան նահանգների վրայ կարգվում ընչաքաղց և մեսափառ Կրասոսը։ Սա արդէն Հռովմում մտքում դրել էր որ Հայոց և Պարթևաց թագաւորութիւնները նուաճէ Երուսաղէմայ տաճարի գանձերը յափշտակելուց յետոյ անց է կենում Եփրատ գետը 40,000 զօրքով։ Այն ժամանակը Հայոց և Պարթևաց թագաւորի

զորքերը Սուրէն զօրավարի առաջնորդութեամբ, որ Պարթևաց Ասպետ թագաւորն էր, ջարդում են նախ Կրասոսի որդուն, որ յաղթութենէն ինքն իրեն սպանումէ, և յետոյ Խառանի մօտերում Կրասոսին, որ և ընկնումէ պատերազմի դաշտումը իւր զինուորաց հետ։ Ասպիսի կոտորած Հռովմայեցիք քիչ էին տեսած, և իրենց արծուէ նշան դրօշակները գերի են ընկնում Պարթևաց ձեռքը, որ միայն 30 տարից յետոյ Օգոստոս կայսեր ժամանակներն են յետ դարձնում։ Տիգրանի գանձատունները կրկին անգամ լցուեցան այդ աւարներից, որ ըստ մեծի մասին Երուսաղեմայ տաճարի և ուրիշ մեհեանների հարստութիւններն էին ոմանք պատմագիրներից Միհրդատայ պատերազմ այսպէս կպատմեն։ Թէ Պոնտացւոց թագաւոր Միհրդատ Ք. Յ. չափազանց անվեհեր և գործունեայ գոլով, կարողացաւ արևելեան և հարաւային կողմերը բնակող փոքրիկ ցեղերին իւր տէրութեան հետ միացնել, ինքը 22 լեզու կխօսէր, այնպէս որ իւր հպատակ ազգաց բոլորին հետ իրենց լեզուաւ կխօսէր։ Միհրդատ խորհեց, փոքր Ասիային տիրելու և Հռովմայեցւոց հիացնելու, որոց ձեռքն էր թերակղզոյ արևմտեան գաւառները։ Միհրդատը նշանակեց օր՝ որ այն օրը թերակղզոյն մէջ բնակող բոլոր Հռովմայեցւոց կոտորեն, թէ արանց և թէ կանանց։ Եւ իւր նպատակին շուտով հասաւ վասն զի ժողովուրդը սաստիկ նեղացած էր Հռովմայ կուսակալաց բռնաւորութիւնից. և կպատմեն թէ այն օրը Միհրդատի հրամա-

նաւ 80·000 Հռովմայեցիք ջարդուեցան (88 թ. նախ քան Ք. ծնունդը) Ծերակոյտը Սիլլային նշանակեց զօրապետ՝ Ասիա ուղարկելու համար, բայց նախանձոտ Մարիոսը՝ 70 ամաց ծերունի էր, սակայն ամենայն օր Երեսի դաշտում մարմնակրթութեամբ կպարապէր, ցոյց տալու համար որ թէպէտ ծեր էր, բայց զօրութիւնը և մարմնոյ առողջութիւնը տեղն էր։ Նա կարողացաւ կաշառել տրիբուններից մէկին և հասարակ ժողովրդեան օգնութեամբ կարողացաւ Սիլլայէն զօրապետութեան իրաւունքն առնել, Սիլլան այս տեսակ անիրաւութիւնը տեսնելով լեգէոնաց օգնութեանը դիմեց և յաղթեց իւր թշնամի Մարիոսին։ Մարիոսը մահու դատապարտեալ ազատուեց փախչելով, և կարողացաւ հեռանալ Իտալիայից։ Պատմեն թէ մէկ քաղաքի մօտ գտան նրան ճահիճի մէջ, տարան բանտը և վճռեցին որ նրան սպանեն. երբ իշխանութիւնը ուղարկեց մէկ Կիմբրացի որ երբեմն գերեալ էր Մարիոսից նա երբ կամեցաւ նրան գլխատել, Մարիոսը յանկարծ գոչեց ասելով ‘‘ո՞վ թշուառական, կհամարձակե՞ս ինձ վրայ ձեռքդ բառնալու,, Կիմբրացին տեսնելով Մարիոսի զարհուրելի դէմքը և լսելով նորա որոտմանման ձայնը, հեռացաւ և խսպառ հրաժարուեց այն պատիժ կատարելուց։ Վերջը մէկ կերպ Մարիոսի բարեկամները կարողացան նրան ազատել և փախաւ Աֆրիկէ։ Երբ Սիլլան գնաց պատերազմ, Մարիոսը կրկին անգամ եկաւ Հռովմ, նորոգ միացանեց իւր հետ հասարակ ժողովուրդը, և [illegible] իրեն հիւպատոս

ընտրելու, յետ ընտրութեան սկսաւ կեղեքել և կոտորել իւր հակառակորդ քաղաքացւոց։ Բայց շատ չտևեց այն բարբարոսութիւնը, և Ծերունին շուտով վախճանեց։

Սիլան Միհրդատին յաղթելով՝ դարձաւ Հռոմ հարուստ պաշարով, և հետևելով Մարիոսին՝ սկսաւ իւր հակառակորդաց կոտորել անհաւատալի խստութեամբ։

Մինչև անգամ Մարիոսի ոսկորները գերեզմանից հանեց և հրամայեց գետը թափել։

Մարիոսի բարեկամներնէլ հալածուեցան, շատերին արտաքսեցին, շատերին էլ իսպառ կողոպտեցին։ Նրանց արտաքսելով՝ տները իւր զինուորաց կբաշխէր։ Իրեն անուանեց մինչ ցմահ դիկտատոր, և ձեռք բերելով անսահման իշխանութիւն, սկսաւ նորանոր օրէնքներ հաստատել, որով առաւել մեծ ոյժ և իրաւունք տուաւ աղնուականաց։ Յետ երկուց ամաց Սիլան թողաւ իւր դիկտատորութեան իրաւունքը (79 թ.) և գնաց իւր գիւղը այնտեղ մնալով քանի մի ամիս, իւր անժուժկալ կեանք վարելուց շուտով մեռաւ։

Մարիոսից և Սիլայից օրինակ առին և հասկացան թէ այն զօրապետը ո՞վ որ կարողանայ զինուորաց համակրութիւնը գրաւել նա է Հռոմայ հրամանատարը։

Եւ սրան շատերը հետևեցին։ Այն միջոցին Հռոմում առաւել բարձրացան Լիկիննիոս կրասոսը, Կնէոս Պոմպէոսը, Կիկերոնը և Յուլիոս Կեսա-

ը։ Սրասոս մեծ հարստութիւն էր ժողովել Միլեսի բռնակալութեան ժամանակ, այն ժամանակ նա առնու�եր ցած գնով արտաքսեալ քաղաքացւոց հողերը։ Սրասոսը երևելի անուն ստացաւ ստրկաց երկիւղալի ապստամբութեանը նուաճելով։ Հռովմայ ստրկաց թիւը հետզհետէ բազմանում էր։ Նոցա իշխաններն էլ խստութեամբ կվարուէին նրանց հետ, վատ կպահպանէին, և սա եղաւ պատճառ որ մի քանի տեղեր իւրեանց տերանց դէմ զէնք բարձին, բայց ստրուկները անմիաբան և անկանոն գոլով՝ շուտով էին նուաճվում, և մեծամեծ պատիժներ էին ստանում (մինչև անգամ նրանց խաչում էին) ստրկաց մէջ շատ ըմբիշներ (սուսերամարտիկք) կային։

Ըմբիշ այն մարդկանց կանուանէին, որոնք Հռովմայեցւոց կզուարճացնէին մենամարտելով միմեանց հետ, երբեմն էլ վայրենի գազանաց դէմ։ Հռովմայեցիք այն տեսարանը կսիրէին, ուր որ վտակորէն արիւն կհեղոյր։ Այս տեսակ խաղերը լինում էին կրկէսներում (կրկէսն է կլորակ հրապարակ շրջապատած տախտակով կամ քարով, գետինը աւազ, շուրջ կողմը նստարաններ, այնպէս որ մէկ կարգը միւս կարգից բարձր էր լինում, այս էլ այն նպատակաւ էր որ բոլորեքեան լաւ կարողանային տեսնել) ըմբիշները միշտ քաջերից կընտրուէին, և առանձին ուսումնարանաց մէջ կուսանէին զէնք խաղացնելու արհեստը։ Կապուա քաղաքի սուսերամարտկաց ուսումնարանում կուսանէր Թրակացի ստրուկ Սպարտակոսը, որ երևելի քաջութիւն ունէր, իւր ընկերներն էլ շատ

կսիրէին նրան։ Սպարտակոս իւր ընկերաց համոզեց ասելով թէ լաւ կլինի որ մեր արիւնը թափենք ազատութեան համար՝ քան թէ Հռովմայեցւոց ղուարճացնելու համար։ Նորան հետևելով 70,000 մարդ ապստամբեցան։ Նրանց դէմ զօրք ուղարկեցին, զօրքը ջարդուեց։ Ներակոյտը նշանակեց Կրասոսին զօրապետ։ Այն միջոցին առհասարակ ստրուկները իւրեանց յաղթութեան վերայ յուսալով՝ բաժանուեցան և սկսան կողոպտել։ Սպարտակոս քաջութեամբ ընդդիմանումէր Կրասոսին, պատերազմի ժամանակ Սպարտակոսը իւր ձին սպանեց որ ոտի վրայ պատերազմի թշնամեաց դէմ, և իւր զօրաց առաջ երթալով ստանայ վերջապէս կամ մահ, կամ ազատութիւն ձեռք ձգէ։ Սաստիկ պատերազմի ժամանակ Սպարտակոսը վիրաւորուելուն պէս՝ նորա զօրքը ցրուեցաւ, 6000 գերի ընկած ստրուկները Ճանապարհի վրայ Կապուայից մինչև Հռովմ խաչեալ էին։ (71 թուին)։ Կրասոսը ստրկաց նուաճելուց մեծ անուն ստացաւ, փոքր միջոցում էլ նրան նմանեց իւր ճարտարութեամբ Պոմպէոս զօրապետը։ Պոմպէոսը Ներակուտի և ժողովրդեան միջ եղած խռովութեան ժամանակ միջնորդ դարձաւ և նոցա միջ խաղաղութիւն ձգեց, և սրանով ժողովրդին սիրելի եղաւ։ Նրան նշանակեցին զօրապետ որ Միջերկրական ծովու վրայ եղած հինից դէմ պատերազմի, որոնք Միջերկրական ծովու առևտրական նաւերը կկողոպտէին, և այնպէս էին վստահացել որ մինչև անդամ ծովային վաճառականութիւնը դադարեց։ Իտալիան այլ ևս

չկարողացաւ երթևեկութիւն ունենալ Հռոմայ արևելեան գաւառաց հետ։ Պոմպէոսին յանձնեցին ահագին նաւատորմիղ, և նա կարողացաւ հիներն խսպառ ջնջելու։ Յողովուրդը մեծ շնորհակալութիւն մատուցանելէն զկնի առաջարկեց որ Պոնտացւոց թագաւոր Միհրդատի դէմ ուղեցած պատերազմն էլ նա վերջացնէ, որ կրկին անգամ յարձակուել էր Հռոմայեցւոց վրայ։ Պոմպէոս այն պատերազմն էլ քաջութեամբ վերջացրեց, և նուաճեց փոքր Ասիան և Սորիքը. պատերազմական պաշար և մեծ հարստութիւն բերաւ Հռոմ և Յողովուրդը մեծ յաղթական հանդիսով ընդունեց Պոմպէոսին Հռոմ մտնելու ժամանակ։ Պոմպէոս մինչդեռ Ասիայում կպատերազմէր, Հռոմը հազիւ հազ ազատուեց այն կործանումից որ արդէն խորհել էին։ Մէկ սնանկացեալ, ահագին պարտուց տակ ընկած ազնուական Կատիլինան դաւադրութիւն կազմեց իւր նման մարդկանց հետ, որ Յողովրդեան ատորին կարդի և ազատ զինուորաց օգնութեամբ կործանեն հասարակապետութիւնը, կոտորեն բոլոր երևելի քաղաքացւոց, և սրանով կառավարութիւնը իւրեանց ձեռքը յափշտակեն։ Բայց նոցա այս չար խորհուրդը շուտով խափանեց Ճարտասան Կիկերոնը։ Կիկերոն խեղճ դերդաստանից էր, բայց իւր երևելի հանճարով և ճարտարութեամբ, տէրութեան դլխաւոր պաշտօններին արժանացաւ։ Կատիլինայի դաւադրութեան ժամանակ Կիկերոնը հիւպատոսական պաշտօն կվարէր։ Ծերակոյտը լուր ստացաւ թէ Իտալիոյ զա-

նոգան տեղերում ապստամբած խմբեր կկազմուին, Հռովմում էլ շուտով ծագելու է մեծ ապստամբութիւն. Կիկերոնը շուտով պատրաստութիւն տեսաւ առաջն առնելու և քաղաքում ամենայն տեղ պահապաններ կարգեց: Բայց Կատիլինան միշտ Հռովմում կմնար, և Ներակուտի մէջ կշարունակէր իւր պաշտօնը: Վերջապէս Կիկերոն յարձակուեցաւ նորա վրայ կայծակի նման ճառերով, ,,ո՞վ Կատիլինա, արդեօք շատ կտևի՞ քո չարութիւնը, աղաղակեց Կիկերոն. քեզ ո՛չ ինչ չէ զգուշացնում ոչ պահապանը՝ որ գիշեր ցերեկ կմնայ Պալատինեան բլրի վրայ, ո՛չ ժողովրդեան խռովութիւնը, ոչ այս բարի քաղաքացւոց ժողովը, ո՛չ այս սրբազան տեղը որ Ներակոյտը կժողովի, ոչ դժդոհութեան և բարկութեան հայեցուածքը որ դէպի քեզ կուղղեն բոլորեքեանք, քեզ սրանցից ոչ մի բան չէ զգուշացնում:

Ո՛հ ժամանակ, ո՛հ բնաւորութիւն,,: Կատիլինան Կիկերոնից Ներակուտին մէջ այս յանդիմանութիւնը լսելով հեռացաւ սպառնալիք տալով, նոյն գիշերը գնաց ապստամբաց մօտ, որ գլխաւոր հրամանատարութիւնը յանձն առնու. երբ պատերազմը սկսաւ, շուտով Կատիլինան սպանուեց հիւպատոսական լեգէոնների: Կիկերոնին Հռովմ ընդունեցին իբրև ազատիչ հասարակապետութեան, և անուանեցին նրան ,,Հայր հայրենեաց,, (62 թ):

Թէպէտ Կիկերոն Հռովմը ազատեց չարամիտ Կատիլինայից, բայց անկարգ հասարակապետութեան մէջ կանոնաւոր կարգապրութեան պաշտպանելը շատ

դժուարին էր։ Այն կարգադրութիւնը այն ժամանակ էր հրատարակուած՝ երբ որ Հռովմայ երկիրները միայն Հռովմից և նորա մերձակայ տեղերից էր կազմեալ, իսկ այժմ Հռովմը կարիքէր զանազան երկիրներու և տեսակ տեսակ ազգերու։ Այս ուրեմն հին կառավարութիւնը նորումն անյարմար էր, և անդադար խռովութիւնք այն ժամանակ կարէին վերջանալ՝ եթէ կազմէին հաստատ միապետական կառավարութիւն։

Այս տեսակ կառավարութեան առաջին փորձը ցոյց տուաւ Յուլիոս Կեսար։ Յուլիոս Կեսարը ազնուապետական ցեղից էր, ինքը լաւ ուսումն ունէր, իւր մարդելոյզ ճարտարութեամբ և քաղաքավարութեամբ շատերին կարողացաւ գրաւել։ Երիտասարդութեան ժամանակ ուրախ կեանք կվարէր, Հռովմում առաջին պճնասէր կհամարուէր և երբեմն առ երեսս միայն կմտածէր հասարակութեան գործոց վրայ։ Թէպէտ նա այսպէս կձևացնէր իրեն, սակայն ունէր սաստիկ պատուասիրութիւն։ Պատմեն թէ Կեսար երբեմն տեսնելով Աղեքսանդրի պատկերը չկարողացաւ իրեն զսպել, սկսաւ լալ և ասաց ,,իմ հասակիս մէջ դա ամբողջ աշխարհի տիրից, իսկ ես դեռ ևս ոչ ինչ յաղթութիւն չեմ ունեցել,,։

Կեսարը կրկին գնաց Սպանիա իբրև Հռովմայեցւոց ատենադպիր։ Ճանապարհին մէկ գիւղի միջով անցնելուս՝ նորա ճանապարհորդակիցները նկատեցին, որ կարելի է այն սակաւամարդ և հեռա-

ւոր տեղում ևս լինի նախանձ և փառասիրութեան կռիւ։ Կեսար պատասխանեց ‘‘ես միշտ կցանկայի գիւղում լինել առաջին քան թէ Հռովմում երկրորդ,,։ Զանազան հնարներով ժողովրդոց սիրտը կգրաւէր, և իւր հարստութիւնը վատնեց փառաւոր տեսարաններ ձևացնելով Հռովմայեցւոց առաջ, որ շատ սիրելի էր նոցա։ Իմանալով որ Պոմպէոսի և Կրասոսի հետ բաց թշնամութիւն անելը վտանգ կբերէ իրեն, Կեսարը վարուեց սաստիկ յաջող կերպով։ Խարեկամացաւ նոցա հետ, և համոզեց որ երեքը միասին գաղտնի ընկերութիւն կազմեն. և այս եղաւ առաջին Է-ռաչէպո-Ռի-ն, այն նպատակաւ որ միմեանց պահպանեն և ի միասին հասարակապետութիւնը ձեռք բերեն։

Եւ արդարև նոքա այնպէս վարուեցան, որ երեքն էլ մեծամեծ գաւառներ ստացան։ Կրասոս ստացաւ հարուստ Ասորիքը, Պոմպէոսը Սպանիան և Կեսարը Գաղղիան։ Կրասոսը ցանկացաւ պատերազմելով առաւել մեծ հարստութիւն ժողովել և Պարթևներից շուտով սպանուեց պատերազմում։ Պոմպէոսը կկառավարէր Սպանիան իւր օգնականներով, իսկ ինքը Իտալիա կմնար որ Հռերակոյսը և Հռովմայ աղնուապետութիւնը իրենից կախում ունենայ։ Կեսարը իւր ընկերներից առաւել հեռատես էր, լաւ հասկացաւ, որ ոչ թէ Հռերակոյսը, այլ զրաւուած զօրքը կարող է նորա իւր նպատակին հասցնել, այն պատճառաւ միշտ կաշխատէր որ զինուորական անուն և փառք ստանայ։ Ընտրեց իրեն համար յայսկոյս

Էլպեան և յայնկոյս Էլպեան Գաղղիայն։ Յայնկոյս Էլպեան Գաղղիոյ, միայն հարաւային մասը կ'պատկանէր Հռովմին։ Մնացած Գաղղիայում կընակէին քաջ և պատերազմասէր ցեղեր, որոնց հարկաւոր էր հետ զհետէ նուաճել. ութ տարի շարունակ Կեսարը նոցա դէմ պատերազմեց (58—50) և մեծ հանճար ցոյց տուաւ այն պատերազմաց մէջ։ Նուաճեց ամբողջ Գաղղիայն, արտաքսեց բոլորովին Գերմանացւոց, որք Հռենոս գետի արևմտեան եզերքը էին անցել. ինքը անցաւ Հռենոս գետը, մտաւ Գերմանիա, գնաց մինչև Բրիտանական կղզեաց վրայ։ Պոմպէոս կնախանձէր Կեսարի փառաց։ Պոմպէոսի ցանկութեան համաձայն Ծերակոյտը հրաման ուղարկեց Կեսարին որ իւր զօրքը արձակէ և սպարապետութիւնը վար դնէ։ Կեսար Ծերակուտին հրամանը իսպառ մերժեց և այն պատճառաւ Ծերակոյտը նորա անուանեց «Հայրենեաց թշնամի»։ Կեսար լսելով այս, իւր զօրքով մտաւ Իտալիա. երբ հասաւ Հռուբիկոն գետը, որ և ոչ մի զօրավար չունէր իրաւունք զօրքով այն գետը անցնելու, նորա սահմանը էր այն տեղ փոքր ինչ մտածմանց մէջ ընկաւ. և յանկարծ գոչեց ասելով «վիճակը արդէն ձգուած է», և նոյն ժամայն անցաւ գետը։ Պոմպէոս չէր յուսայ որ Կեսար այնպէս յանդգնի, և պատերազմելու համար ոչ ինչ պատրաստութիւն չունէր։ Պոմպէոսը նեղ վիճակի մէջ տեսնելով իրեն, քանի մի Ծերակոյտ անդամոց և երիտասարդ ազնուականաց հետ փախաւ Յունաստան. Կեսարը նախ նուաճեց Իտալիան և Սպանիան

յետ այնորիկ անցաւ Ազբիական ծովը յարձակուեցաւ Պոմպէոսի վրայ։ Այն միջոցին Պոմպէոսը իրեն համար բաւական զօրք ունէր պատրաստ։ Թէպէտ Կեսարի զօրքը սակաւաթիւ էր, բայց կազմուած էր Գաղղիացւոց ընտիր լեգէոնէրից, որոնք փորձուած էին անթիւ պատերազմաց մէջ. և նոքա սաստիկ կսիրէին և սիրով կհպատակէին իւրեանց սպարապետին (Կեսարին)։ Մեծ պատերազմը սկսաւ Թեսսաղիայում Փարսաղիա քաղաքին մօտ (48 Թուին)։ Կեսար հրամայեց իւր զօրաց որ փափկասէր ազնուականաց երեսաց վրայ արձակեն իրենց սրերը. գիտէր որ նոքա առաւել երենց գեղեցկութիւնը կպահպանէին քան թէ իրենց պատիւը։ Պոմպէոս խսպառ ջարդուեց և փախաւ Եգիպտոս Պտղոմէոս Թագաւորին մօտ ապաստանարան գտնելու։ Պտղոմէոս ցամաքը անցնելուն պէս սպանուեց ուխտադրուժ Թագաւորին հրամանաւ, Պտղոմէոսը կարծեց թէ նրանով կարէ հաճոյանալ Կեսարին, բայց սխալուեց։ Կեսարը երբ մտաւ Եգիպտոս, իւր ոսոխ Պոմպէոսին մեծ հանդիսիւ թաղեց, Պտղոմէոսին զրկեց իւր թագաւորութիւնից, և նորա դահը տուաւ նորա քրոջ Կղէոպատրային։ Այն միջոցին փոքր Ասիայում Հռովմայ դէմ ապստամբել էր Միհրդատի որդին Փառնակէսը։ Կեսարը գնաց նորա դէմ, և այնպիսի հեշտութեամբ նուաճեց որ Ծերակուտին երեք բառով տեղեկութիւն տուաւ, «եկի, տեսի, յաղթեցի» (veni, vidi, vici): բայց Հռովմում Պոմպէոսի և հասարակապետականաց ընկերութիւնը դեռ ևս քաջ էին։

Մեծ զօրք կազմեցին Ամբրիկ։ Նոցա զօրապետաց երևելին էր կրտսերն Կատոն, Համարակալ Կատոնի ազգից։

Նա մեծ պատիւ ստացաւ իւր ազնուաբարոյութեամբ և անշահասիրութեամբ։ Նա ամենայն կերպ կաշխատէր նմանիլ իւր նախնեաց, սիրելով հին հասարակապետութեան բնաւորութիւնը։ Երբ Կեսար կպատրաստուէր Իտալիայից Ամբրիկէ անցնելու, նորա զօրաց մէկ մասը իրեն դէմ ապստամբեց, պահանջելով նրանից խոստացած պարգևները, և ծառայութիւնից ազատելը այն միջոցին Կեսարը ցոյց տուաւ իւր գերբնական ընդունակութիւնը և անվեհերութիւնը. ինքը միայն մտաւ ապստամբելոց մէջ և սկսաւ ճառ խօսել, որոյ մէջ յայտնեց թէ մտապիրէ իւր խոտմունքները կատարելու. և խօսակցութեան ժամանակ նոցա անուանեց ոչ թէ զինուորք այլ Պոմպէիոս, այսինքն Հռովմայ քաղաքացիք։ Զինուորները շուտով ստրջացան և խնդրեցին Կեսարին որ իրենց էլ տանի Ամբրիկէ։ Թէպէտ Կեսարի դէմ անթիւ զօրք կպատերազմէր, նա դարձեալ յաղթեց, և թշնամիք փախչելով միայն կարողացան իրենց փրկելու։ Կատոն տեսնելով հասարակապետութեան անկումը այլ ևս չկարողացաւ ապրել և ինքն իրեն զբրկեց իր կեանքից Ուտիկէ քաղաքում։ (այս պատճառաւ նրան անուանեցին Ուտիկեցի) Կեսար սկսաւ ջնջել Պոմպէանց և հասարակապետութեան պաշտպանողաց, որոնք ժողոված էին Սպանիայում, թէպէտ նոքա առաջուց շատ ընդդիմացան։ Երբ Կեսար

յաղթութեամբ Հռովմ դարձաւ, Ներակոյսը միշտ նորա հրամանը առանց հակառակութեան կկատարէր այնպէս որ հաստատեց նրան Դիկտատոր կամ իշխանապետ մինչև ցմահ։ Կեսար իւր յաղթութեանց համար մեծամեծ հանդէսներ էր կատարում, ժողովրդեան պատուում էր, թատրոններ հրաւիրելով և թանկագին հացկերոյթներ պատրաստելով նոցա համար, բաց յայնմանէ զինուորաց և աղքատաց մեծամեծ գումարներ կբաժանէր։ Իւր բարեբաղդութեան ժամանակ Կեսարը սաստիկ մեծահոգութեամբ վարուեց այնպէս որ իր թշնամեաց ոչ ինչ նեղութիւն չտուաւ Մարիոսի և Սիլլայի նման. ընդհակառակը՝ ամենայն կերպ կաշխատէր որ Հռովմում խաղաղութիւն լինի, և քանի մի օգտաւէտ օրէնքներ հրատարակեց։ Սակայն քանի մի դաւառաց Հռովմի հետ հաւասար արտօնութիւններ տուաւ, Հռովմն էլ ազատուեց անթիւ աղքատներից որք միշտ արքունական շռեմարանից ցորեան կստանային։ 80,000 աղքատ գաղթեց զանազան դաւառներ, և նոցա համար վարելահող որոշեց որով կարողացան իրենց կեանքը ապահովացնել։ Ժողովուրդները Կեսարի կառավարութիւնից չափազանց գոհ էին. բայց ազնուականները միշտ յարմար միջոց կ'որոնէին նրան վնասելու։ Կեսար կցանկար հասարակապետութեան անուն անգամ ջնջել և իրեն թագաւոր անուանել, սրանով նա իւր թշնամեաց թիւը բազմացրուց վասն զի երևելի անձինք կցաւէին հասարակապետութեան անկման վրայ։ Ներակոյսը խորհեցաւ դիկ-

տատորին (Կեսարին) սպանելու և գլխաւորքն էին Պայիոս Կասսիոսը և Մարկոս Բրուտոսը, թէպէտ վերջինը շատ էր բարերարեալ Կեսարից բայց մոռանալով որ նա այն Բրուտոսի ցեղից է, որ առաջին անգամ հասարակապետութիւնը հաստատեց Հռովմայ մէջ, ցանկացաւ հետևիլ իւր նախնեաց: Կեսարին շատ անգամ զգուշացրին որ նորա դէմ դաւադրութիւն են կազմել, բայց նա ուշադրութիւն չընդարձրուց: Իւր սպանման աւուր առաւօտը Կեսարի ամուսինը վատ երազ տեսած լինելով կաղաչէր Կեսարին որ այն օրը Ծերակոյտը չգնար, թէպէտ ինքն էլ մէկ անհանգստութիւն կզգար, այնու ամենայնիւ գնաց Ծերակոյտ: Այն օրը ժողովը Պոմպէոսի թատրոնի դահլիճումն էր: Պատմեն թէ երբ Կեսարը մտաւ ատեան դաւադիրներից մէկը խնդրեց Կեսարից որ իր աքսորեալ եղբօրը վերադարձնեն, Կեսարը երբ մերժեց նորա խնդիրը, նա բռնեց նորա հանդերձից այն համաձայնութեան նշան էր, ամէնքը միասին ընկան Կեսարի վրայ սրերով, նա թէպէտ աշխատեց ազատելու իրեն, բայց երբ Բրուտոսի ապերախտութիւնը տեսաւ աղաղակեց ասելով ‘‘և դո՞ւ ես Բրո՛ւտոս,, և այս ասելով փաթաթուեց իւր երկայն վերարկուին մէջ և սպանուած ընկաւ Պոմպէոսի արձանին պատուանդանին մօտ (44 նախ քան Ք. Ծ. Ընդունդը): Կեսարի սպանողները ուրախութեամբ հրատարակեցին բռնաւորին մահը (Կեսարին բռնաւոր կանուանէին) բայց խաբուեցան, ժողովուրդը լսելուն պէս ափշեց և լռեց: Կեսարի բարեկամ Անտոնիոսը,

որ այն ժամանակ հիւպատոսի պաշտօն կվարէր, մեծ հանդիսով այրել տուաւ նորա մարմինը (ըստ սովորութեան Հռովմայեցւոց), և իւր ճառախօսութեան ժամանակ յիշատակեց Կեսարի մեծամեծ քաջութիւնները։ «Դու դու անյաղթ դիւցազն, մնացիր տառնց վնասուց այն անթիւ պատերազմաց մէջ, մի թէ ա՞յն նպատակաւ որ քո կեանքից Հռովմայ մէջ զրկուիս»։ Այս խօսքերը ասելով՝ Կեսարի արիւնաթաթախ վերարկուն բացեց։ Հռովմայեցիք տեսնելով այն՝ կատաղեցան, այրուած փայտերը ձեռքին կորոնէին նորա սպանողների տունը այրելու համար, բայց նոքա արդէն վաղուց հեռացել էին Հռովմից։

Փառասէր Անտոնիոսը այնպէս հաճոյանալով ժողովրդեան կաշխատէր որ Օկտաւիանոսը իրեն հպատակէ ինքը անցնի Կեսարի տեղ։ Այն միջոցին Հռովմ եկաւ Կեսարի Հուլիա քրոջ թոռը Գայիոս Ոկտաւիանոսը որ առաջուց որդեգրուել էր Կեսարին, իսկ Կեսարը նորա ժառանգ կարգելով ուղարկելէր Յունաստան որ այն տեղ արհեստներ ուսանի։ Ինքը երիտասարդ էր կարճահասակ, միշտ հեզ կձևանար, բայց սաստիկ խորամանկ էր և սրամիտ։ Նա դեռ Հռովմ չըհասած Անտոնիոսը առաջուց Կեսարի մահուանից յետոյ նորա ժառանգութիւնը յափշտակել էր Ոկտաւիանոս միայն մէկ մասը կարողացաւ ստանալ, այն էլ բաժանեց Կեսարի հին զինուորաց, որով կարողացաւ նրանց համակրութիւնը գրաւել։ Առաջ հասարակապետականաց կողմը անցաւ, այսինքն Օրակուսի կողմը, որ այն ժամանակ վէճ կշարունակէր

Անտոնիոսի հետ։ Ներուանի Կիկերոնը դարձեալ հասարակապետութեան պաշտպան հանդիսացաւ և սկսաւ ճառել Անտոնիոսի դէմ, ինչպէս երբեմն կճառէր Կատիլինայի դէմ (այն ճառերը կոչուեցան Փիլիպպեանք, նմանեցնելով Դեմոսթենէսի Փիլիպպոսի դէմ ասած ճառերին)։ Ոկտաւիանոս Կիկերոնի հետ մեծաւ յարգանօք կվարուէր, և միշտ նրանից լաւ խորհուրդ կհարցանէր, ամենայն օր նորա հետ նամակագրութիւն ունէր, և Կիկերոնին միշտ հայր կանուանէր։ Ներուանին յափշտակուել էր նորա քաղցր բնաւորութեամբ և Կիկերոնի հովանաւորութեան նեղքոյ լինելով, Ոկտաւիանոսը շուտով զօրապետ նշանակուեց Անտոնիոսի դէմ պատերազմելու։ Այն պատերազմի ժամանակ Ոկտաւիանոս իր դիմակը վար ձգեց. փոխանակ պատերազմելու, Անտոնիոսի հետ առանձին խորհուրդը կազմեց. նրանց հետ միացաւ նաև Լեպիդոսը, և նոքա կազմեցին Եռապետութիւն։ Ներակոյտը մնաց առանց զօրաց, և եռապետները ազատ սկսան կառավարել Հռոմայ տէրութիւնը։ Սկսան հալածել իւրեանց և Կեսարի թշնամեաց, և այնպէս սաստկացաւ այն հալածմունքը որ Մարիոսի և Սիլլայի ժամանակը մոռացուցին։ Այն հալածման զոհ եղաւ նա և Կիկերոնը։ Կիկերոնը միւս ազնուականաց նման ցանկանալով փախստեամբ ազատուել ճանապարհին բռնուեց և սպանուեց։ Նորա գլուխը Անտոնիոսը պահանջեց, և կպատմեն թէ երբ որ Կիկերոնի գլուխը բերին Անտոնիոսի չարամիտ ամուսնին Փուլուիան ասելով ծակեց նորա լեզուն, ասելով թէ այդ լեզը

ուաւ էիր այն թունաւոր ճառերը խօսում մեր դէմ։ Հասարակութեան պաշտպանները Բրուտոսի և Կասիոսի առաջնորդութեամբ ժողոված էին Մակեդոնիայում։ Նոքա կառավարում էին արևելեան գաւառները, և մեծ զօրք էին պատրաստել։ Բայց եռապետները սաստիկ ջարդ տուին Փիլիպպէ քաղաքի մօտ (Մակեդոնիայում)։ Բրուտոս և Կասիոս չկամենալով այլ ևս ապրիլ և տեսանել հասարակապետեան ջնջուիլը, իրենք իրենց սպանեցին (42 թուին)։ Եռապետները իւրեանց մէջ բաժանեցին Հռովմայ գաւառները Ակտաւիանոսը ստացաւ արևելեան գաւառները, Լեպիդոս Աֆրիկէն, իսկ Անտոնիոս արևելեան գաւառները։ Նոցա համաձայնութիւնը շատ չտևեց։ Ակտաւիանոսը Լեպիդոսին զրկեց իրեն մասից և հանեց եռապետութենից, յետ այնորիկ սկսաւ Անտոնիոսի վրայ յարձակուել։ Եռանդուն Անտոնիոսը բարեկամացել էր Եգիպտացւոց թագուհւոյ Կղէոպատրայի հետ։ Անտոնիոս իւր գործերը թողած՝ միշտ նորա հետ կզուարճանար, և Աղէքսանդրիայում միասին կընակէին, մեծամեծ հացկերոյթներ կպատրաստէին, որսորդութեամբ և զանազան զուարճութեամբ կպարապէին։ Անտոնիոս սկսաւ Հռովմայ գաւառները Կղէոպատրայի որդւոց վերայ բաժանել։ Խորամանկ Ակտաւիանոսը սրանից մեծ օգուտ կարողացաւ քաղել, Ներակուտին համոզեց որ Կղէոպատրային պատերազմ առաջարկէն, Անտոնիոսն էլ պատրաստուեց Կղէոպատրային օգնութիւն տալու։

Ոկտաւիանոսը ծովային պատերազմ տուաւ Անտոնիոսի դէմ Յունաստանի արևելեան եղերաց Ակտիոն հրուանդանին մօտ։ Կղէոպատրան ինքնել էր պատերազմ գնացել, երբ տեսաւ պատերազմի սաստկութիւնը, հրամայեց իւր նաւերին որ շուտով Եգիպտոս գնան։ Անտոնիոսը տեսնելով Կղէոպատրայի հեռանալը, ինքն էլ թողաւ պատերազմը և շուտով հետևեց Եգիպտացւոց թագուհւոյն Ոկտաւիանոսը ջարդեց բոլորովին՝ առանց զօրապետի մնացած զօրքը, զօրքն էլ անցաւ Ոկտաւիանոսի կողմը։ Ոկտաւիանոսը մտաւ Եգիպտոս և մօտեցաւ Աղէքսանդրիոյ պարսպաց։ Կղէոպատրան իւր նեղ դրութիւնը տեսնելով՝ մոռացաւ բոլորովին Անտոնիոսին, սկսաւ խօսակցել Ոկտաւիանոսի հետ։ Նա մտաւ մէկ աշտարակի մէջ, և ծառայից պատուիրեց որ Անտոնիոսին յայտնեն թէ Կղէոպատրան ինքն իրեն սպաննել է։ Երբ ծառայք պատմեցին Անտոնիոսին, Անտոնիոսը Կղէոպատրայի (սուտ) մահուան վերայ սաստիկ նեղանալով՝ ինքն իրեն սպաննեց։ Կղէոպատրան ամենայն կերպ աշխատուեր Ոկտաւիանոսին իւր գեղեցկութեամբ հաճոյանալ, ինչպէս առաջուց հաճոյացել էր Յուլիոս Կեսարին և Անտոնիոսին։ Նա թէպէտ 40 ամաց էր, սակայն շատ գեղեցիկ էր, և շատ հանճարաւոր և կարողանուր շուտով հաճոյանալ։ Թագուհին նախապէս իմանալով Ոկտաւիանոսի ծանր և զուսպ բնաւորութիւնը առաջին անգամ սև հանդերձով և ողբալի դիմաք ներկայացաւ, սկսաւ խօսել Յուլիոս Կեսարի

վերայ, և նորա նամակներն էլ կարդալ։ Բայց Ակ-տաւիանոսը շատ սառնութեամբ վարուեց, և ամենևին չխաբուեց նորա զուարճախօսութենէն։ Եւ մնադիր էր Հռովմ մտնելու ժամանակ հանդիսիւ գնայ Հռովմ և Պղէոպատրան շղթայակապ հետևի նրան։ Հպարտ թագուհին իմանալով Ակտաւիանոսի դիտաւորութիւնը, թունաւորեց իրեն, և նրա հետ թոյն ընդունեցին նրա երկու հաւատարիմ աղախինները։ Թագուհուոյն դտան պալատին մէջ ոսկեզօծ անկողնոյ մէջ տարածուած հարուստ թագաւորական շորերով, ոտի տակն էլ ընկած երկու աղախինները։

Օգոստոսը Եգիպտոսն էլ դարձուց Հռովմայ դաւառ և վերադարձաւ Հռովմ, /բրև ինքնակալ միապետ Հռովմայ տէրութեան՝ 30 թուին նախ քան Ք. Ծ. Եւ Ակտաւիանոս Օգոստոսից Հռովմայ հասարակապետութիւնն փոխուեց կայսերութիւն։

Կայսերներն Հռովմայեցոց։
(Մինչև 476 ին։ Ք. Ի.)

Ակտաւիանոս երբ Օգոստոս (փառահեղ) անուանուեց, իւր իշխանութիւնը անսահման կերպով կվարէր, բայց պահպանեց նաև Ծերակոյտը, հիւպատոսները և միւս պաշտօնակալները։ Ինքն չափաւոր կեանք կվարէր, և թագաւորական տիտղոս էլ չընդունեց, այլ միայն սեպհականացրեց Կայսր անունը (առաջ կայսր զօրապետ կնշանակէր) այս տիտղո-

սը ստացան և նորա յաջորդները, որ բաց ի կայսր անունից ստացան նաև Կեսար անունը ի պատիւ Յուլիոս Կեսարի։

Հռովմայ ժողովուրդը ճանձրացեալ և վաստակեալ երկարաւև խռովութիւններից և ներքին պատերազմերից, շատ գոհ էր Օգոստոսի հանգարտ կառավարութիւնից, և յօժարութեամբ ընդունեց նորա միապետական կառավարութիւնը։ Երբեմն խորամանկ Օգոստոսը այնպէս էր ձևանում՝ իբր թէ կամենում հրաժարիլ, և ժողովուրդը լսելով նորա դիտաւորութիւնը՝ կրկին խնդրում էին շարունակել իւր պաշտօնը։ Առ հասարակ Օգոստոսը շատ խելացի կերպիւ կ'կառավարէր այն ահագին Հռովմայ տէրութիւնը, որ կ'տարածուէր Ատլանտեան Ովկիանոսից մինչև Եփրատ, և Դանուբից մինչև Սահրայի անապատը և Նեղոսի ջրվէժը։ Այն ժամանակ Հռովմին կ'հպատակէր 100,000,000 ժողովուրդ։ Օգոստոս տէրութիւնը ուղիղ բաժանեց դաւառաց վրայ, որ նորանով կարողանայ առաւել ևս միացնել Հռովմայ հետ. նա սկսաւ շինել գեղեցիկ ճանապարհներ և ջրանցքեր, (մինչև յայժմ ևս տեղ տեղ կերևին հին ճանապարհները և ջրանցքերը)։ Այն դաւառները որոնք երկիւղ կկրէին իւրեանց դրացիներից, այնտեղ սահմանը պահելու համար Օգոստոսը առանձին զօրք էր նշանակում, և այն զօրքը կ'կազմէր մեծաւ մասամբ Հռովմայեցի և հպատակ ցեղերից։ Այն սահմանների մօտ գտնուած դաւառները զօրապետներով կ'կառավարուէին, որոնք անմիջա-

պէս կախուած էին կայսերից, և նոցա կանուանէին կայսերական ‘‘զօրապետներ,, իսկ միւս դաւառները քաղաքական կառավարութիւն ունէին, նոքա Ծերակուտից կհպատակէին, և նոցա էլ կ՚անուանէին ‘‘Ծերակուտի դաւառապետներ,,։ Հռովմում կայսրը իրեն համար առանձին զօրք կազմեց,, Պրետորեան,, անուամբ։ Օգոստոս կայսրը ամենայն կերպ կ՚աշխատեր Հռովմայ գերիշխանութեան վերայ, երևելի շինութիւններ կառոյց, շքեղ թատրոններ պատրաստեց ժողովրդեան համար և այլն։ Դու ինքն իսկ ասաց թէ ‘‘Դա Հռովմը աղիւսեայ դռայ, այլ մարմարեան կ՚թողում,,։ Օգոստոսի ժամանակ շինուեց Պանթէոնի տաճարը՝ որը մինչև այժմ ևս կմնայ։

Երբ Հռովմ խաղաղութիւն մտաւ, այն օրից սկսաւ ծաղկել Գրական-ութիւնը, և երևելի գրողներ դուրս եկան։ Կայսրը և մանաւանդ նորա հարուստ բարեկամ Մեկենասը առատօրէն կ՚պարգևատրէին բանաստեղծներին. նոքա էլ իւրեանց բանաստեղծութեանց մէջ միշտ կ՚գովէին Օգոստոսին, երբեմն էլ նորա բարեկամ Մեկենասին։ Բանաստեղծներից երևելին էր նախ Վիրգիլիոսը, որ իւր Էնէական վիպասանութեան մէջ Օգոստոսին դուրս էր բերում իբր թէ նա Էնէասայ ցեղից է։ Երկրորդն է Ովիդիոս, որ կ՚գրէր փոքրիկ բանաստեղծութիւնք և առհասարակ Երգիչ-ութիւն։ Դա մեկ աղատուած ստրկի որդի էր, երկրորդ հռոմէական ժամանակ նա էլ հասարակապետականաց կողմն էր, և կ՚պատերազմէր Բրուտոսի առաջնորդութեամբ Փի-

լեպոկ քաղաքի մօտ։ (Ովրատիոսը իւր մէկ բանաստեղծութեան մէջ կ՚յիշատակէ այն օրը՝ երբ որ պատերազմի դաշտում իւր վահանը ձգեց և փախաւ)։ Վերջին ժամանակներում բարեկամացաւ Մեկենասի հետ. ինքն իսկ Օգոստոս կայսրը կ՚աշխատէր որ Ովրատիոսի բանաստեղծութեանց մէջ իւր անունը փառաւորուի։ Մեկենասը Ովրատիոսին ընծայեց մէկ փոքրիկ կալուածատեղ, Ովրատիոսը շուայլ կեանքն չ՚սիրելով՝ քաղաքից հեռացած իւր կենաց օրերը այնտեղ անցուց։ Իւր աղքու և զուարճալի երգիծաբանութեանց մէջ կ՚ծաղրէր աշխարհի ունայնութիւնը, շահասիրութիւնը, շուայլութիւնը, և Հռովմայեցւոց միւս պակասութիւնները։ Ի կայսերութեան Օգոստեայ երրորդ երևելի բանաստեղծն էր Ովիդիոս։ Նորա աշխատութիւններից երևելին է Այլակերպութիւնքը այն այլակերպութեանց մէջ ունի մէկ կարգ ճարտարարուեստ առասպելաբանական պատմութիւն Յունաց և Հռովմայեցւոց հաստուածոց և դիւցազանց։ Օգոստոս մէկ բանի պատճառաւ զայրացած Ովիդիոսին աքսորեց մէկ փոքրիկ քաղաք Սև ծովու եղերքը, ուր և կնքեց նա իւր կեանքը։ Օգոստոսի ժամանակ կարնաև պատմագիր Տիտոս Լիւիոսը, որ գրեց Հռովմայեցւոց հարուստ պատմութիւնը, և նրանից քաղեցին Հռովմայ առաջին դարուց առասպելախառն պատմութիւնը։ Օգոստոսը կ՚աշխատէր ոչ թէ իւր տէրութիւնը ընդարձակելու, այլ իւր երկիրները ապահով պահելու։ Նորա ժամանակից սկսաւ շարունակ պատերազմ Հռովմայեց-

ւոց և Գերմանիոյ քաջ ցեղերի մէջ։ Գարդիայից Հռովմայ լեգէոնները անցան Հռենոս գետի աջակողմեան երկիրը, և նուաճեցին արևմտեան Գերմանիոյ քանի մի ցեղերը։ Երևելի Գերմանացիք սկսան բարեկամանալ Հռովմայեցւոց հետ. հետ զհետէ սկսան նորանց սովորութիւնները ընդունել, և կամենային Հռովմայ զինուորական ծառայութեան մէջ։

Արևմտեան Գերմանիայում Հռովմից կուսակալ նշանակուեց Վարոսը, որ էր յոյժ հպարտ և շատ հասկը անձն, և իւր խստութեամբ զայրացրուց Գերմանացւոց։ Գերուսկեանց ցեղի իշխան Արմինիոսը (Հերման) որ կրթուած էր Հռովմայ զինուորական ծառայութեան մէջ, գաղտնի համոզեց Գերմանացւոց, և նոքա յանկարծ ապստամբեցան Հռովմայ բռնակալութեան դէմ։ Վարոսը երեք լեգէոնով գնաց ապստամբներին նուաճելու, և անպղծութեամբ մտաւ Տեւտուբուրգեան անտառը։ Յանկարծ այն տեղ թաքուցեալ Գերմանացիք յարձակեցան Վարոսի վերայ, և նորա զօրքը խսպառ ջնջեցին։ Թէպէտ Վարոսը բաւական ընդդիմացաւ, բայց ինքն էլ ընկաւ իւր սրոյ վերայ և սպանուեց։ Հռովմայ գերիները զոհ մատուցին Գերմանացւոց չաստուածոց, և շատերին էլ սարուկ դարձրին։ (9 թ. նախ քան Ք. Ծ.)։

Կարամեն թէ երբ Օգոստոս կայսրը այս լուրը լսեց, գլուխը խփեց պատին և աղաղակեց ասելով. "Վարոս, Վարոս, առ՛ւր ինձ իմ լեգէոնները"։

Այն ժամանակից Հռովմայ իշխանութիւնը Գերմանիայից վերցաւ, և Հռենոսը սահման դարձաւ Հռովմայ կայսերութեան և Գերմանիոյ մէջ։ Հռովմայեցւոց սահմաններին վերայ ամրացած անթիւ գաղթականութիւններ կային՝ կայսերութեան ապահովութեան համար, որոնք վերջը երևելի քաղաքներ կազմեցին, ինչպէս Մոգունտիա կամ Մայնցը, Կոլոնիան կամ Քէլնը, Աւգուստաւինդիկեան (Աւգսբուրգ), Հռեգինոն (Ռեկինբուրգ) և այլն։

Օգոստոս ընտանեացը կողմանէ շատ դժբաղդ էր։ Նորա երկրորդ ամուսինը, չար և խորամանկ Լիւեան թունաւորելով և զանազան պատիժներով հերացրուց Օգոստոսի թոռանց, որով կարողացաւ թագաւորական գահը պատրաստել իւր հարազատ Տիբերիոս որդւոյ համար։ Երբարև Օգոստոսը իւր ամուսնուց համոզուած՝ Տիբերիոսին ժառանգ հաստատեց, և ինքը մեռաւ 14 թուին փրկչական։

Օգոստոսի կայսերութեան երեսներորդ թուին, Ռեթզէհեմ քաղաքում՝ Հռովմայեցւոց Հրէաստան գաւառում ծնաւ Փրկիչն մեր Քրիստոս։ Իսկ Փրկչի քարոզութիւնքը, չարչարանքն և մահն կատարուեց Օգոստոսի յաջորդ Տիբերիոսի ժամանակ։—Տիբերիոսը, խելացի, գործունեայ և շատ զգոյշ թագաւոր էր. անդադար նկատումէր որ պաշտօնակալները օրինաւոր վարուին և ժողովրդոց չնեղին, չհարստահարին։ Տիբերիոսի ժամանակ Հռովմայ գաւառները մեծ հանգստութիւն կվայելին։

Տիբերիոս եղբօր որդին Գերմանիկոս շատ յաղթութիւններ արեց Գերմանացւոց դէմ, որով կարողացաւ Պարոսի յաղթուելուն վրէժը առնուլ։ Բայց Հռովմում հասարակապետականաց թիւը դեռ շատ էր, և նոքա միշտ կ'ցանկային առաջին իրաւունքները ձեռք բերելու. թէպէտ կայսեր առաջ խոնարհաբար կվարուէին, սակայն գաղտնապէս որոգայթներ կ'լարէին։ Տիբերիոս ինքը շատ կասկածոտ էր և վրէժխնդիր։ Կ'պատմեն թէ Տիբերիոսը ազնուաբարոյ Գերմանիկոսի վերայ կասկած ունենալով՝ սպանել տուաւ, և պատճառը այս էր ժողովուրդը շատ յարգելով Գերմանիկոսին, Տիբերիոս երկնչելով՝ շուտով սպաննել տուաւ։ Տիբերիոսի այս բնաւորութիւնը շատ օգտաւէտ եղաւ նորա անարժան սիրելի Պրետորաց կառավարչին Սէյանոսին։ Սէյանոսը մէկ նոր օրէնք հրատարակեց "Նոր ՆՃՕ-ՐԷՆ ԱՆՊԱՏՈՒ-ՐԷՆ համար,,. մինչև անգամ եթէ խօսելու ժամանակ թագաւորի անունը տիտղոսով չ'ըլլիշուէր, նոյն րոպէին այն մարդը կ'դատապարտուէր, լրտեսները մեծ պարգևներ կստանային արքունական գանձարանից։ Լրտեսները այնպէս շատացան և Հռովմայեցւոց վարքը այնպէս խանդարուեց, որ մինչև անգամ երևելի մարդիկն էլ լրտեսութեան պաշտօնը կ'վարէին։ Սէյանոսը կաշխատէր կայսերական տիտղոսը ձեռք բերելու, համոզեց կայսեր որ նրան Հռովմ մնալը վտանգաւոր է, և խորհուրդ տուաւ որ գնայ Կապրէա ժայռոտ կղզին (Նափոլի ծոցին բերանը) ուր և մնայ մինչև իւր կենաց վախճանը։

Վերջը Տիբերիոս Սեյանոսի չար խորհուրդը իմանալով՝ շուտով սպաննել տուաւ. բայց ամենուակա-նաց մահը մինչև Տիբերիոսի վախճանը (37 թ) շարունակուեց:

Տիբերիոսին յաջորդեց Գայիոս-ան Գերմանիկոսի որդին: Ժողովուրդը նրան սիրով ընդունեց, և նորա կառավարութեան սկզբունքները շատ սիրելի եղան ժողովրդեան: Բայց Գայիոս-ան փոքր ինչ յիմարացաւ ինչպէս երևումէ նաև գործերից, իւր զուարճութեան համար կ'հրամայէր մարդիկ սպանանել և մինչև անգամ ցաւելով ասաց թէ "Ափսո՛ս որ մարդկութիւնը մէկ գլուխ չունի, որ միանգամ կտրելով մարդկային սեռը ջնջեմ աշխարհքից,,: Ի վերջոյ նորանից ազատուելու համար թիկնապահները սպանեցին: Ծերակոյտը և հասարակապետականները նորա մահուամբ կամեցան օգուտ քաղել և հասարակապետութիւն կազմել, բայց ժողովուրդը և զօրքը ընդիմացան: Պրետորեանները կայսր ընտրեցին Գայիուսի հօր եղբօր Կղօդիոսին (որ Գերմանիկոսի եղբայր էր): Կղօդիոսը յիմար էր և միշտ իւր սիրականներին կլսէր: Նորա փառատէր ամուսին Ագրիպպինան (Գերմանիկոսի դուստրը) թունաւորեց Կլղօդիոսին, այն նպատակաւ որ կայսր հաստատի իւր հարազատ առաջին ամուսնուց ծնած Ներոն որդուն (54 թ.)

Ներոնը կատարեալ ուսում ստացաւ իւր մօր աշխատութեամբ, նորա վարժապետն էր Սենեկա փիլիսոփայն: Ներոն առաջ շատ բարեսիրտ էր "Ես

կցանկայի որ զրել չիմանայի,, ասաց միանդամ՝ երբ որ դատապարտութեան մեկ վճիռ բերին ստորագրելու, բայց վերջը հետ դեռեսէ բռնաւորի ընթացք ունեցաւ կոտորեց իւր ազգականաց մինչև անգամ հրամայեց իւր մայր Ագրիպպինային և իւր դաստիարակ Սենեկային սպաննելու, պատճառ որ նոքա նորա գեղջուութեան և շռայլութեան միշտ կընդդիմանային։ Երբ արքունական գանձը իսպառ վատնեց, սկսաւ հարուստ մարդկանց առանց յանցանաց բանտարկել սպաննել և նոցա հարստութիւնը յափշտակել։ Զարհուրելի հրդեհով Հռոմը այրեց կ'պատմեն թէ Ներոնը այն հրդեհին ժամանակ իւր պալատից կ'նայէր ուրախանալով, և կ'երգէր Տրոյադայի այրելուն երգերը։—Վերջը նա ձգեց յանցանքը Քրիստոնէից վրայ, իբր թէ նոքա են այրել Հռոմը, և Քրիստոնեայք առաջին և մեծ հալածանք կրեցին ի կայսերութեան Ներոնի։

Քրիստոնէից կ'խաչէին, կենդանեաց մորթոյ մէջ կ'կապէին, և նոցա վերայ շներ կարձակէին, Քրիստոնէից ձիւթով կ'պատէին և ծառոց վերայ կախելով փոխանակ լապտերաց կ'այրէին՝ երևելի հանդիսի ժամանակ։ Այն հալածման ժամանակ նահատակեցան նա և Պօղոս և Պետրոս առաքեալք։—Ներոն շատ կ'սիրէր երգեցողութիւն և քնար ածել։ Նա ինքն իրեն երևելի դերասան կ'կարծէր, և սկսաւ թատրոններում խաղալ։ Հանդիսականք ամօթով կ'կարմրէին, բայց երկիւղ կրելով՝ չէնի որ իրենց սպանել տայ, ներկայանալու ժամանակը կը-

ծափահարէին։ Նորա յաջորդ Վեսպասիանոսը Ներոնի ներկայացման ժամանակ փոքր ինչ ուշացաւ, Ներոն այնպէս նեղացաւ որ կամեցաւ նրան սպանել տալ։ Ներոն Հռովմում չբաւականանալով Յունաստան էլ գնաց որ Յունաստանի թատրոնումը դափնեայ պսակ ստանայ։ Վերջապէս ժողովուրդը այլ ևս չհամբերեց, լեգէոնները ապստամբեցան, և Ներոնը տեսնելով որ ամէնքն հեռացել էին իրանից, և ինքը թշուառ վիճակի մէջ է, վերջապէս յուսահատեալ ինքն իրեն սպաննեց, այս խօսքերը արտասանելով թէ ''ինչ երևելի դերասան է որ զբրկուում իւր կեանքից,, (68 թ.)։

Ներոնի մեռնելովը Օգոստոսի ցեղը վերցաւ. սկզբան ներքին խռովութիւնք, ամենայն տեղ լեգէոնները իւրեանց զօրապետաց ընտրեցին կայսր։ Յընթացս երկուց ամաց երեք կայսր փոխուեց Հռովմում։ Վերջապէս կայսր ընտրուեց Ասորոց լեգէոնաց սպարապետ Վեսպասիանոսը։

Հրէայք, որ Հռովմայ բռնութիւնից ապստամբել էին, նա կարողացաւ նուաճել։ Ինքն էլ կայսր ընտրուեց, շուտով գնաց Հռովմ Երուսաղէմայ պաշարմունքը յանձնեց իւր որդւոյն Տիտոսին։ Թէպէտ պաշարուածները սովամահ կկորնչէին, բայց սաստիկ ընդիմացան։ Երբ քաղաքը առին, նոքա դարձեալ իրենց կպաշտպանէին Երուսաղէմայ տաճարում, մինչև տաճարի այրիլը։

Երուսաղէմն էլ բոլորովին աւերուեց 70 թ։ Հրէայք այն ժամանակ թողին իրանց աւերակ հայրենիքը,

ցիր և ցան եղան ընդ ամենայն տիեզերս։ Այս եղաւ պատճառ որ գերեցիկ Երեսատանը դարձաւ անշէն աւերակ։

Վեսպասիանոսին (70—79) յաջորդեցին արժանաւոր անձինք, և նոքա հարիւր տարի թագաւորեցին։ Վեսպասիանոսը շատ զգոյշ մարդ էր, և խիստ կանոնապահ։ Վեսպասիանոսի ժամանակ շինուեց Կոլիսէոնը։ Կոլիսէոն ահագին ամփիթեատրոն էր, ուր 80,000 մարդ կ'պարունակէր։—Վեսպասիանոսի որդին և ժառանգ Տիտոսը իւր բարեսրտութեամբ և գթասիրութեամբ մեծ անուն ստացաւ. ժողովուրդը նրան անուանեց "մխիթարութիւն մարդկային ազգի,,։ Նա երեք տարի միայն թագաւորեց (79—81)։— Տիտոսի կայսերութեան ժամանակ պատահեցաւ սարսափելի երկրաշարժ Վեսուվ հրաբուխի բորբոքելուց, և լաւան ծածկեց երկու մերձակայ քաղաքները Պոմպէա և Երկուլանոն։ Հռովմայեցւոց ուսումնական բնագէտ Պլինիոս երէցն, ցանկանալով մօտից զննել և տեսնել այն բորբոքումը, նաւելով մօտեցաւ և խկոյն ուշաթափ մեռաւ այն վնասակար գազերից։ Մեր օրերից հարիւր տարի առաջ յանկարծ գտան Երկուլանոնի տեղը, մինչև ցայժմ էլ կփորեն և զանազան հնութիւններ կ'գտնեն, տները, զանազան պատկերներ, արձաններ, տան պարագայք մնացել են անվնաս, և նրանցից կարողացան իմանալ հին Հռովմայեցւոց կեանքը։ Փողոցները այնպէս նեղ էին որ երկու կառք չէին կարող անցնել։ Հասարակ տները փոքր են, ցած և միայարկ, փոքրիկ

սենեակներով և մէջը քառանկիւնի սրահ, տանց արտաքին տեսարանը պարզ էր, բայց ի ներքուստ շատ զարդարուած յատակները մանր քարերով էր շինուած (միւսիոն։) Պատերը նկարուած են զանազան պատկերներով, և կան այնպիսի պատկերներ որ պատմական կրօնական նշանակութիւններ ունին։ Զանազան տան կարա իք էլ գտան՝ լապտերներ, երեք ոտնեայ աթոռներ, պղնձէ և կաւէ անօթներ, միայն Տիտոսի եղբայր Դոմետիանոսը (81—96) էր աստիկ թագաւոր Վեսպասիանոսի ցեղից։ Սա նորոգեց Տիբերիոսի և Ներոնի դարը, լրտեսաց թիւը դարձեալ սկսաւ բազմանալ։ Դոմետիանոսի հպարտութիւնը մինչև այն աստիճան հասաւ որ ինքն իրեն Աստուած անուանեց։ Նա անչաջող պատերազմ ունեցաւ Դակիացւոց հետ, որ են այժմեան Վլաքիոյ և Թրանսիլվանիոյ բնակիչք։ Բայց ոսկւով կարողացաւ խաղաղութիւն խօսել, բաց յայնմանէ պատերազմից վերադառնալու ժամանակ հրամայեց որ իրեն մեծ պատերազմական հանդիսով ընդունեն, և ինքն իրեն անուանեց ''Դակեան,,։ Վերջապէս նորան սպանեցին իւր ծառաները՝ նորա ամուսնոյն դիտութեամբ, որք երկիւղ կկրէին թէ դուցէ իրենք էլ զոհ լինին նորա բռնաւորութեան (96 թուին)։

Այս տեսակ բռնաւորաց շատ լինելուն պատճառը այն էր որ Հռովմայ մէջ անբարոյականութիւնը վերջին աստիճանին էր հասել, բռնաւորները միշտ համամիտներ կունենային, որոնք նոցա բռնաւորութիւնը իբրև մեկ քաջութիւն կդովասանէին։ Մինչև ան-

զամ նոքա ի պատիւ իւրեանց տաճարներ կառուցին։ Հռովմայեցիք այլ ևս չէին մտածում հասարակապետութեան գործոց վերայ, երևելի և հարուստ քաղաքացիք էլ իւրեանց հանգստութեան և զուարճութեան վերայ կհոգային։ Հռովմայեցւոց մոլութիւններից գլխաւորն էր որկրամոլութիւնը։ Հարուստները կսիրէին շռայլ հացկերոյթ և հիւրեր (այն տեսակ մարդկանց կ'սիրէին և կհրաւիրէին, որք միշտ կեղծաւորաբար իրեն կգովէին և ամենայն տեսակ ցածութիւնք ի գործ կդնէին)։ Հացկերութի ժամանակ փսխողական անգամ կընդունէին որ ստամոքսը մաքրելով կրկին ճաշեն և այս էր պատճառը որ շուտով կծերանային։

Կանայք էլ շատ շռայլ կեանք կվարէին, Հռովմայ տիկնայք, որք առաջ իւրեանց կանոնաւոր կենցաղավարութեամբ օրինակ էին բազմաց, այժմ բոլորովին փոխուել էին։ Նախկին բարեպաշտութիւնը անհաւատութեան փոխուեց։ Պուբլեերը իրենք էին օրինակ տալի։ Հռովմայեցւոց կրօնքը Յունաց կրօնին կնմանէր, իսկ Յունաստան առնելուն պէս, երբ Հռովմում Հելլենացւոց ուսմունքը տարածուեց, Հռովմայեցւոց գլխաւոր չաստուածոց Յոյնք էլ պաշտեցին։ Եւ Հռովմայեցւոց Եռպիտերը այն նշանակութիւնը ունեցաւ ինչ որ ունէր Զևսը կամ Դիոսը։ Բայց յայնմանէ Հռովմայեցիք իրենց հպատակ ազգաց գլխաւոր չաստուածոց էլ ընդունեցին։ Հռովմում տաճարներ շինեցին ի պատիւ չաստուածոց Եգիպտացւոց, Ասորւոց, Պարսից և այլոց։ Բայց այն

վատ և ընկած ժամանակում կային նոյնպէս երևելի և խելացի մարդիկ որոնք միշտ կցաւէին Հռովմայ բարոյական անկմանը վերայ, և միշտ իրենց կմխիթարէին՝ պարապելով տնտեսական կառավարութեամբ, արհեստներով, բանաստեղծութեամբ, փիլիսոփայութեամբ և այլն։ Փիլիսոփաներից երևելին էին Պոսյիկեանք, որ կուսուցանէին թէ պէտք է պարզ կեանք վարեն, և ամենայն տեսակ նեղութեանց համբերեն։ Իսկ միւս փիլիսոփաները՝ Եպիկուրեանք ընդհակառակն կքարոզէին, որ ամենայն մարդ ուրախ կեանք անցուցանէ, միշտ վայելչութեան մէջ լինի։ Այս իմաստասիրութիւնքը Յոյներից ընդունեցին։

Այն բանաստեղծներից, որք իւրեանց կծու երգիծարանութեանց մէջ կներկայացնէին Հռովմայեցւոց բարքը նոցա շռայլութիւնը և զեղխութիւնը երևելին էր Յորենալը, սա Դոմետիանոսի ժամանակակիցն է. միւս երևելի գրողն էր Տակիտոս պատմագիրը։ Նախ գրեց յետ մահուան Օգոստայ Հռովմայեցւոց պատմութիւնը, շատ ազդու և սոսկալի կերպիւ կնկարագրէ բռնակալաց ժամանակը, յետ այնորիկ Տակիտոս գրեց Գերմանացւոց վերայ և նոցա ներկայացրեց իբրև մի նոր, զուարթ, և արթուն ժողովուրդ, Հռովմայեցւոց զեղխութեան հակառակ։ Յետագայ կայսերաց մէջ երևելին էր Տրայիանոսը։ Ինքը Սպանիացի (98—117)։ Նանուաձեց Գակիան, յաղթեց Պարթևաց, և ժողովրդեան սէրը գրաւեց իւր ազնիւ բնաւորութեամբ։ Գինէսէրզոլով՝ յայտնեց իւր նախարարաց որ ինչ հրամայելու լինի հա-

ցից յետոյ՝ Չկատարին։ Թէպէտ այս կայսրը ստացաւ "քաջալաւ,, մականունը, սակայն սա էլ սկսաւ քրիստոնէից հալածել։ Մինչև այժմ էլ կայ Տրայիանոսի յաղթութեան սիւնը, որոյ ծայրին առաջ կար պղնձէ ոսկեպատ Տրայիանոսի արձանը, և սեան չորս կողմն էլ նկարուած էին նորա յաղթութեան տեղերը և զէնքերը։—Տրայիանոսը այնպիսի համակրութիւն ստացաւ Հռովմում, որ Ծերակոյտը նորընտիր կայսր շնորհաւորելու ժամանակ կասէր. "Լ՝ եր Օգոստոսից ճախտաւոր և Տրայիանոսից լաւ,,։

Նրան յաջորդեցին Ադրիանոս, Անտոնիոս Պիոս (այսինքն բարեպաշտ), և Մարկոս Աւրելիոսը (փիլիսոփայն)։ Այս վերջինը շատ պարզ և չափաւոր կեանք կ՝վարէր, շատ կ՝սիրէր արհեստ, ինքն էլ զանազան փիլիսոփայական շարադրութիւնք կ՝գրէր (նա ստոյիկեան էր)։ Ստիպուած էր պատերազմելու Գերմանացւոց դէմ, որք կ՝հարստահարէին հպատակ սահմանակից դաւառաբնակ Հռովմայ ժողովրդոց, և այն պատերազմի ժամանակ մեռաւ Վիենոբոնա գաղթականութեան տեղում (այժմ Վիէնա)։—Մարկոս Աւրելիոսի մահից յետ (180 թ) վերջացաւ Հռովմայ կայսերութեան երջանիկ շրջանը։ Այնուհետև սկսաւ անկիրթ զինուորաց իշխանութիւնը. Պրետորեանք խոպառ յափշտակեցին գահը. և ով որ շատ դրամ կտար նոցա, նրան կայսր կընտրէին. փոքր ինչ նեղութիւն տալուն պէս էլ շուտով կփոխէին, նրանցից ոմանք կարողացան բնական մահուամբ մեռանել։ Դժնեայ Սեպտի-

միոս Սեւերոսը (193 – 218 թ.) կարողացաւ առ ժամանակ մի նուաճել այն ապստամբ զինուորաց, և կարգ պահել տէրութեան մէջ։ Նա Հռովմայ իշխանութիւնը տարածեց մինչև Բրիտանական կղզեաց հարաւային մասին մէջ. և այն տեղ պարիսպ շինեց որ Սկոտիոյ լեռնականներից, և Պիկտաւաց յարձակումից ապահով լինին։

Սեպտիմիոս Սեւերոսի ժամանակ Հայաստանում կթագաւորէր Տիգրանայ որդի Վաղարշը (195—210)։ Սա մեր քաջ և աշխարհակալ թագաւորներից մէկն էր։ Ռասէն գաւառի Մուրց գետի Երասխի հետ խառնուելու տեղում, որ իւր ծննդեան տեղն էր, շինել է տալիս Վաղարշաւան քաղաքը, ամուր պարսպով պատումէ Վարդգէսի աւանը, իւր անուամբ կոչումէ Վաղարշապատ, և Եթոռը այն տեղ է բերում։ Շինել է տալիս նմանապէս և Ծաղկոտն գաւառի Վաղարշակերտ քաղաքը, որ այժմ Էջմիածին է ասուում։ Նորա ժամանակում Հայաստանը երկու կողմից պաշարուած էր թշնամիներից։ Արևմտեան կողմից Հռովմայեցւոց լեգէոնները կամենումէին Սեպտիմիոս Սեւերոս կայսեր առաջնորդութեամբ Հայաստան մտնել. իսկ հիւսիսային կողմից Խազարները և Ռասիները Ճորայ դուռն անցնելով՝ Հռովմայեցւոց արշաւանքից փոքր ինչ յետոյ սպառակումէին Հայաստանը։ Հռովմայեցւոց հետ առանց պատերազմի իրեն բանը յաջող վերջացնելով, իրան զօրութիւնը ուղղումէ Վաղարշը հիւսիսականաց վերայ, որոնք Կուր գետն անցէին կացել,

ջարդում, և փախստական է առնում նրանց մինչև Ն՛որաց դուռն, որ տեղ կրկին պատերազմելով նրանց հետ՝ չարաչար յաղթում նորանց, բայց ինքը զոհ է լինում այն յաղթութեանը, որովհետև նեռով վիրաւորուած սպանուում, նորա որդի Խոսրովը իւր հօր վրէժն առնելու համար, «ինչկացաւ Կովկասու լեռների հիւսիսային կողմն, և այն կողմից Ն՛որայ կամ Ալանաց դուռը, չարաչար յաղթեց և պատժեց Սկիւթական ցեղերին, Յոյն գրով արձան կանգնացրեց իբրև նշան իւր ընդարձակ տիրութեան, և յետոյ հարիւրից մէկ հոգի առնելով նուաճեալ ազգերից՝ դարձաւ Հայաստան։ Թէոդորիտոս Հռոմայեցւոց զօրավարին յաղթելով որ կամենում էր Սեպտիմիոսին յաջորդ Կարակալա կայսեր հրամանաւ բոլորովին նուաճել Հայոց, առժամանակ Հայաստանը խաղաղացրեց. որով Հայոց թագաւորը չէր խառնվում այն պատերազմաց մէջ որ Պարսիկները և Հռոմայեցիք ունէին։ Բայց երբ որ 226 թուականին (Քրիստոսից յետոյ) Սասանեան Արտաշիր Պարսից իշխանը ապստամբեցաւ Պարթևաց Արտաւան թագաւորից, և նրան սպաննելով՝ ինքը թագաւորեց Պարթևաց, այն ժամանակ մեր Խոսրով թագաւորը, երկար ժամանակ Հռոմայեցւոց և Սկիւթացւոց օգնութեամբ պատերազմ բացեց Արտաշրի դէմ, մնաւ Ասորեստան, և այն տեղից թագաւորական Տիզբոն քաղաքը, և այնպէս նեղեց նրան որ մինչև Հնդկաստան հալածեց։—Արտաշիրը չկարողանալով Խոսրովի դէմ կենալ, յորդորեց իւր

իշխաններին և առաել Պահլաւնել ին, որոնք Պարթևաց թագաւորական ցեղից էին, որ եթէ մէկը հնարքով սպաննէ Խոսրովին և ինքն կրկին անգամ տիրէ Պարսկաստանին, նրան կ'տայ երկրորդական պատիւը Պուշանաց աշխարհի։ Անակը յանձն առաւ այս պաշտօնը, և իբր թէ փախչելով Արտաշրի ձեռքից՝ եկաւ Հայաստան։ Խոսրովը, որ արդէն մեծ աւարներով յետ էր դարձել իրեն ձմերայնոց խաղաղ քաղաքն, սիրով ընդունեց Անակին։ Գարնան նոքա այն տեղից ի միասին գնացին Աղարշապատ, որ տեղ ծնուեցաւ մեր Սուրբ Գրիգոր Լուսաւորիչն։ Այն ինչ Խոսրովը մոքումը դրել էր կրկին պատերազմ սկսել և Պարսկաստանի վերայ Պարթևական ցեղիցը մէկ ուրիշին թագաւոր դնել, Անակը դիպող ժամ գտնելով սպաննեց Խոսրովին, և կամեցաւ փախչել Պարսկաստան, բայց Հայերը վրայ հասնելով Արտաշատ քաղաքի մօտ Տափերական կամրջիցը նրան և նորա եղբօրը ջուրը ձգելով խեղդեցին, այն ինչ թագաւորի հրամանաւ, մինչև որ նա կենդանի էր, սրոյ ճարակ տուին նորա բոլոր գերդաստանին, որոնցից միայն Գրիգոր Լուսաւորիչն ազատուեցաւ՝ նորա դայեակ Սոփիան փախչելով Կեսարիա (253 թ.) Արտաշիրը իր բաղձանքին հասնելով մնաւ Պարսկաստան, և այն տեղից կամենուամբ տիրել Հայաստանին, բայց Հայերը մեր քաջ նախարարների միաբանական հոգւով երկար ժամանակ դէմ կացան Արտաշրի զօրութեանը, մինչև 260 թ. վերջը անճարացած հնազանդեցան։ Այնուհետև Հայաստանը,

մինչև 280 թիւը, Պարսից մարդպանութիւն դարձաւ։ — Սեպտիմիոս Սեվերոսի որդի Կարակալլան սաստիկ բռնաւոր կայսր էր. Կարակալլան միայն այն յիշատակը եթող, որ կայսերութեան ազատ քաղաքացիք էլ Հռովմայ քաղաքացւոց իրաւունքները և արտօնութիւնները ստացան (սորանով կարողացաւ հարկը շատացնել)։ Նորա յաջորդ Եղեոգաբաղոսը իւր մոլութեամբ և շռայլութեամբ սաստիկ ատելի եղաւ ժողովրդեան, և Հռովմայ կայսերաց մէջ բռնաւորի առաջին տեղը ունեցաւ։

Եղեոգաբաղոսին յաջորդեց Նորա հօրեղբօր որդին Աղէքսանդր Սեվերոսը (222—235 թ.) սա շատ ուսումնական և գործունեայ մարդ էր։ Նորա կառավարութեան ժամանակ Ասիայում Հռովմայեցւոց վերայ նոր թշնամիք դուրս եկան։ Պարսիկք Արտաշիրի առաջնորդութեամբ կարողացան Պարթևաց լծից ազատուել և Պարթևաց թագաւորութեան տեղ հիմնեցին նոր Պարսից թագաւորութիւն, իրենք էլ կոչուեցան նոր պարսիկք։ Մինչև անգամ Արտաշիրը կամենում էր Հռովմայեցւոց ձեռքից փոքր ասիան առնել, որով կարողանայ Պարսկաստանը այնպէս ընդարձակել՝ ինչպէս որ Կիւրոսի և Դարեհ Վշտասպեանի ժամանակ։ Աղէքսանդր Սեվերոս տեսնելով Արտաշրի վարմունքը, ստիպուեց պատերազմելու։ Մինչ նա արևելքում Պարսից հետ կ'պատերազմէր, հիւսիսից Գերմանացիք սկսան արշաւել Հռովմայ կայսերութեան վրայ։ Եւ կ'պատմեն թէ նա Գերմանացւոց հետ պատերազմելու ժամանակ իւր զինուոր-

ներքից սպանուեց, վասն զի ժլատ գոլով տեսչի էր իւր զինուորաց։ Աղեքսանդր Սեւերոսի մահից յետոյ զօրաց անկարգութիւնները այն աստիճան բարձրացան Հռովմայ մէջ, որ նրանց ձեռքն էր ուզած մարդը թագաւոր ընտրել, կամ մէկ թագաւոր սպաննել և տեղը միւսը դնել, շատ դաւառներում զօրքը իւրեանց զօրապետաց իւրեանց համար կայսր կընտրէին։ Այս տեսակ անկարգութիւնները վերջացան Դիոկղետիանոսի ընտրութեամբ (265 թ.) Դիոկղետիանոսը Դալմատացի էր՝ ստորին կարգից սորա հայրը ազատած ստրուկ էր, բայց ինքը իւր պատերազմական հանճարով կայսերութեան պատուոյն արժանացաւ։ Դա իմանումէր որ այն ահագին տէրութեան մէջ ներքին խաղաղութիւն և կարգ պահելը դժուարին է վասնորոյ արժան դատեց որ իրեն օգնական ընտրէ, և օգնական նշանակեց իւր բարեկամ Մաքսիմիանոսին, նրան յանձնեց Հռովմայ կայսերութեան արևմտեան մասը, իւրեանց էլ առանձին օգնական նշանակեց։ Իւր օգնականն էր Գալերիոսը, որ Իալկանեան թերակղզին կկառավարէր, իսկ Մաքսիմիանոսի օգնական էր Կոստանդ Քլորոսը, որ Սպանիան, Գաղղիան, և Բրիտանիան կկառավարէր։ Դու ահա, ինչպէս կ'տեսնենք, Հռովմայ կայսերութիւնը չորս մասն բաժանուեց, որոնցից երեքը բոլորովին Դիոկղետիանոսի կ'հպատակէին։ Դա Հռովմը չ'սիրեց, վասն զի այն տեղ դեռ ևս կար հասարակապետական հոգի և կայսերական պատիւ չ'էր ստանում նրանցից։ Վասնորոյ նա էլ հե-

ռացաւ փոքր Ասիոյ Նիկոմիդիա քաղաքը, այն տեղ բնակուելու, որ Լեւոնեան Թագաւորաց պէս շռայլ կեանք կ'վարէր, ինքն միշտ կերպասեայ ոսկեթել շորեր կ'հագնէր. Նրան ներկայանալը շատ դժուար բան էր, և ով որ կարժանանար նրան ներկայանալու, ծնկան վերայ խոնարհած կ'ներկայանար: Թէպէտ Դիոկղետիանոս այնպիսի շռայլ կեանք կ'անցուցանէր, սակայն իւր հանճարով կարողացաւ այն ահագին կայսերութիւնը խաղաղ կառավարել մինչ իւր կենաց վախճանը:

Նա էլ հալածեց Քրիստոնէից, միայն Կոստանդ Քլորոսը այն հալածմունքից ազատ պահեց Քրիստոնէից: Սորա ժամանակը Տրդատը մնաւ Հայաստան, և Տրդատայ քաջութիւնների վերջինն էր Գոթացւոց Թագաւորի դէմ մենամարտութիւնը, որ առաւ Դիոկղետիանոս կայսեր փոխանակ 286 թուին: Այսպէս իրան երախտագիտութիւնը ցոյց տալու համար պատկեց Տրդատին Թագաւորական Թագով, և լեգէոնների ուղարկեց Հայաստան աշխարհը, իրան հայրական աթոռը ժառանգելու: Երբոր Տրդատը Կեսարիա հասաւ, Հայոց Նախարարներիցը շատերն առաջ գնացին, որոյ հետ էր և Սմբատ Բագրատունին, որ պատկեց նրան իբրև Թագաւոր Արշակունի Թագաւորաց:

Այս կերպով կրկին անգամ Հայաստանումը կանգնեցաւ Արշակունեաց Հարստութիւնը, երեսուն տարի անտէր մնալուց յետոյ:

Քրիստոնեայ կառավարութիւնից յետոյ Դիոկղետիանոսը հրաժարուեց կայսերութիւնից, գնաց իւր

հայրենիքը Դաղմատիա և սկսաւ ծերութեան ժամանակ անտեսական կառավարութեամբ պարտեալ։ Թէպէտ Մաքսիմիանոսն էլ հրաժարուեց, բայց շուտով սարջացաւ, կրկին ընդունեց կայսերական տիտղոսը, և կինդրեր Դիոկղետիանոսին որ նա էլ վերադառնայ իւր պաշտօնը կրկին վարելու, բայց նա պատասխանեց թէ եթէ ‘‘դու տեսանէիր իմ սերմանած պատուական բոյսերը, երբէք չէիր համոզել որ վերադառնամ, և այս երջանիկ կեանքը թողում,, Դիոկղետիանոսը երբ հրաժարուեց, կրկին ծագեցին նեռքին երկպառակութիւնք, և այնքան տևեց մինչև որ Կոստանդ Քլորոսի որդի Կոստանդիանոս մեծը կայսր ընտրուեց։ Նա կարողացաւ յաղթել բոլոր թշնամեաց և հաստատել միապետական կայսերութիւն 324 թուին։ Կոստանդիանոսը միշտ Քրիստոնէից կ՚պաշտպանէր։ Յետ ՀամբարձՄան փրկչին՝ նորա աշակերտները քարոզելով զանազան երկիրներում՝ Քրիստոնէից թիւը բազմացաւ երբ Քրիստոնէից թիւը Հռովմում էլ շատացաւ, սկսաւ Քրիստոնէից հալածմունքն վասն զի նոքա չստուծոց և կայսերաց պատկերաց չէին երկրպագութիւն տալի։

Նոքա կ՚քարոզէին։ էր, հաւասարութիւն և այն հալածման ժամանակ գաղտնի կ՚ժողովէին կ՚սկսէին քարոզել Յիսուսի Վարդապետութիւնը։ Հռովմայեցիք էլ նրանց կ՚հալածէին իբր թէ նոքա ապստամբեն։ Գլխաւոր հալածանքները տասն եղան, առաջինը Ներոնի ժամանակն էր, իսկ վերջինը և ամենասաստիկ հալածմունքը Դիոկղետիանոսի ժամա-

նակ։ Բրիստոնէից կ'այրէին, ամէհի գազանաց իրրև կերակուր կ'տային, բայց նոքա յուսով կ'խնդային, և այն նեղութիւնները ուրախութեամբ կտանէին, իմանալով որ նրանց համար երջանիկ կեանք է պատրաստուած։ Նրանց համբերութիւնը և կրօնքի արժանաւորութիւնը տեսնելով շատ երևելի մարդիկ էլ ընդունեցին Բրիստոնէական սուրբ հաւատը, և շուտով տարածուեց Հռովմայ կայսերութեան մէջ։ Շատերը հեռանալով աշխարհից սկսան անապատական կեանք անցուցանել, և միաբանութիւնք կ'աղմել։

Կոստանդիանոսը Բրիստոնէից կպատուէր. վասն զի նորա մայր Հելինէն Բրիստոնէից պաշտպան էր։ Ա՛պատմեն թէ երբ նա կ'պատերազմէր իւր թշնամի Մաքսենտիոսի դէմ, որ Հռովմայեցւոց տէրութեան վեց ազատ կառավարութիւններից մէկն էր սորա պատերազմէն մէկ օր առաջ գիշեր զօրքերը տեսնելու ժամանակ երկնքում տեսաւ լուսաւոր և փայլուն խաչ, որոյ վերայ գրած էր ''այսու յաղթեա՛,,։ Նոյն գիշերը տեսիլք էլ տեսաւ. Բրիստոս երևեցաւ և ասաց ''դրօշակներուդ արծիւները վերցրու, և տեղը խաչ դիր, նրանով կարես միայն յաղթել,,։ Նա միւս օրը փոխեց և իւր զօրքը նրանով շատ քաջալերեց և մեծ յաղթութիւն ա՛ ետ։

Կոստանդիանոսը երբ ինքնակալ կայսր անուանեց իրեն, Դիոկղեսիանոսին նմանեց, Հռովմը թողաւ և իրա համար նոր մայրաքաղաք ընտրեց Յունաստանի Բիւզանդիա քաղաքը։ Բիւզանդիոնի տեղը շատ

յարմարաւոր էր վաճառականութեան, վասն զի Եւրոպայի և Ասիոյ մէջ Վոսփորի նեղուցին վրայ էր։ Բիւզանդիոն որ Կոստանդնուպոլիս անուանեց՝ շուտով շքեղացաւ նորանոր պալատներով, հոյակապ տաճարներով և անթիւ արձաններով։ Կոստանդիանոսը մայրաքաղաքը փոխելուն պէս կառավարութեան կերպն էլ փոխեց։ Հռովմայ կայսերութիւնը չորս կուսակալութիւն բաժանեց Արևելք, Լիւրիկէ, Իտալիա և Գաղղիայ և իւրաքանչիւր կուսակալութիւնը նահանգաց վերայ բաժանուեց, զինուորական մասը քաղաքական մասնից բաժանեց։ Կոստանդիանոսը շռայլ կեանք կվարէր. մեծամեծ հանդէսներ կսիրէր։ Շռայլութիւնը ծածկելու աղագաւ սկսաւ հարկերը յաւելցնել։ Պաշխատէր նա և որ Քրիստոնէութիւնը տարածուի, և ինքն էլ տէրութեան մէջ առաջին կրօնքն կհամարէր, նա շինեց երևելի տաճարներ և հոգևորականաց հարստութեան մէջ կ'պահէր, նորա ժամանակ եղաւ Նիկիոյ սուրբ ժողովը 337 թ։ Կոստանդիանոսը բարեկամ էր նաև մեր Տրդատ թագաւորի հետ։ Տրդատն՝ որ Արշակունի թագաւորների միջին Տիդրանից յետոյ առաջինն կհամարուի իրան աշխարհակալութեամբ. մեծ ներգործութիւն ունեցաւ մեր աշխարհի վերայ երկար ժամանակ։ Մեծանալով արևմտքում, լինելով Արշակունի՝ իրան խոհեմութեամբը տարածելով Քրիստոնէական լոյսը մեր աշխարհի վերայ, Հայոց ազգին ջոկեց արևելեաններից, և առաւել Պարսից ներգործութիւնից, և այնպէս մնացրեց արևմտեան

Արիստոնէից հետ։ Արիստոնէութիւնը ընդունելուց յետոյ մինչև անգամ ինքն անձամբ անձին գնում Հռոմ և Կոստանդիանոսի հետ սերտ սիրոյ դաշն է կապում 319 թուին։

Կոստանդիանոսի յաջորդաց մէջն եղաւ Յուլիանոս ուրացողը նա Աթէնքում ստացաւ իւր դաստիարակութիւնը հեթանոս փիլիսոփաներից։ Ինքը իրև քրմապետ զոհ կ'մատուցանէր չաստուծոց։ Երկու տարի կառավարեց, բաւականին հանճարեղ և գործունեայ մարդ էր։ Յուլիանոսը պատերազմեց Պարսից հետ, անցաւ Տիգրիս գետը և պատերազմում վիրաւորուեց 363 թ։ Ա'պասմեն թէ մեռնելու ժամանակ ասաց "յաղթեցիր ո՞վ Գալիլեացի,,։ Նորա մահուանից յետոյ իսպառ հաստատուեց Արիստոնէութիւնը Հռոմայ կայսերութեան մէջ։ —Վերջին կայսրները Դիոկղետիանոսի նման իրանց օգնական կ'ընտրէին, վերջը մեծն Թէոդոս կայսերութեան երկու մասն թէպէտ միացրուց, բայց միացնելու ժամանակ 395 թուին կրկին երկու մասն բաժանեց, և տուաւ իւր որդւոցն. Արկադիոսին արևելք, իսկ Ոնորիոսին արևմտեան Հռոմայ կայսերութիւնը, և այս երկու մասերը այլ ևս չմիացան։

ՀՀ Ազգային գրադարան
NL0153148